Գլխավոր խմբագիր՝
ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

Վկայական N 03Ա054452:
Տրված է՝ 06.06.2002թ.:

Խմբագրության հասցեն՝
0025, Երևան,
Նալբանդյան փողոց 128,
կենտրոնական մասնաշենք, 2-րդ հարկ:
Հեռախոս՝ 593-460, 4-60

Խմբագրակազմ
Խմբագիր՝
ԱՐՄԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Լրագրող՝
ՆԱՆԵ ԱՎԱՆԵՍՅԱՆ
Լուսանկարիչ՝
ՌԱԶՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Համակարգչային ձևավորումը՝
ՆԱԻՐԱ ԽՉԵՅԱՆԻ
Շապիկի ձևավորումը՝
ՆԱՐԻՆԵ ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Համարի պատասխանատու՝
ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Գրանցման վկայական՝ 269:
Պատվեր՝ 106:
Տպաքանակ՝ 500:
Ծավալը՝ 3 տպ. մամուլ:

Խմբագրությանը տրամադրված հեղինակների նյութերում տեղ գտած փաստական անճշտությունների համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Ամսագրի նյութերն օգտագործելիս հղումը պարտադիր է:

Ստորագրված է տպագրության՝
20. 12. 2013թ.:
Տպագրված է «Ոսկան Երևանցի» տպագրատանը:
Հասցեն՝ ք. Երևան, Նոր Նորքի 1-ին զ., Սաֆարյան 11/1-ա:

Հրատարակիչ՝ ՀՊՏՀ:
Տարածվում է անվճար:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ու Թ Յ Ու Ն

ՌԵԿՏՈՐ ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆԻ ԱՄԱՆՈՐՅԱ ՈՒՂԵՐՁԸ.....4

ՀՊՏՀ 23-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎՈՒՄ

Գիտահետազոտական արդյունքների տարեկան ամփոփում.....5

ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ

ՀՀ ԴՐԱՄ – 20

Քսան տարի ու մի ամբողջ կյանք.....9

Տնտեսագիտության հայ երախտավորները.....11

ՄԵՐ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԸ.....12

ՀՊՏՀ «ԱՄԲԵՐԴ» ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ.....14

Համալսարանի նվիրյալն ու «Տնտեսագետի» ջերմեռանդ ընթերցողը.....17

ՆՈՅԵՄԲԵՐԻ 10 և 17-Ը՝ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՐ.....18

ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽԵՃԱՆԿԱՐ.....20

ԴԵՂՆԱԾ ՀՈՒՇԵՐԻՆ ԻՋԵԼ Է ԱՇՈՒՆ... 24

ՍՊԱՐՏԱԿ ՍԱՐԱՏԻԿՅԱՆ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ.....26

ՀՊՏՀ գրադարանը՝ արդիականացման ճանապարհին.....28

ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ

Երկար սպասված ուսումնական ձեռնարկ.....30

ՎԱՐՔՈՒԲԱՐՔ

Նվիրելը արվեստ է.....31

ԼՈՒՍԱՆԿԱՐԱՅԻՆ ԼՐԱՇԱՐՔ.....32

ՎՈԼՈԴՅԱ ՄԱՆԱՍՅԱՆ

«Արփի լիճ» ազգային պարկը.....36

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ - 300

ՄԱՐԻ ՉԱՔԱՐՅԱՆ

Գեղեցիկի երգիչն ու կյանքի մեծ սիրահարը.....38

ՎԵՆԵՐԱ ՈՍԿԱՆՅԱՆ

1988 թ. դեկտեմբերի 7-ի մռայլ վիճակագրությունը.....41

ՅՈՒՐԻ ՀՈՎՀԱՆՆՅԱՆ

ՀԱՄԱԿՐԵԼԻ ԴԱՌՆԱԼՈՒ ԱՐՎԵՍՏԸ.....42

«Համեղ զրույց» և ամանորյա հատուկ բաղադրատոմսեր՝ ՀՊՏՀ տիկնանցից.....44

ԱՐՁԱԿ -2013

ԷԼԵՆ ՈՒԼՅԱՆ

Ֆաներային արև.....46

Հարգելի գործընկերներ, սիրելի ուսանողներ

Անցյալ է դառնում 2013 թվականը, և երկրորդ հազարամյակի մի նոր տարի սկսում է իր կենսագրությունը: Անցնող տարին լի էր աշխատանքային, ուսումնական ու անձնական իրադարձություններով՝ հաջողություններով, ձեռքբերումներով, անխուսափելիորեն՝ նաև անհաջողություններով ու կորուստներով: Ճատիճանաբար դրանք կդառնան անցյալ ու կլրացնեն մեր ապրած տարիների հանրագումարը:

Կախարդական, խորհրդավոր ու զարմանահրաշ տոնին՝ Ամանորին, սպասում ենք բոլորս՝ մեծ, թե փոքր, սպասում ենք որպես հրաշքի, մի լուսավոր հեքիաթի, որում ուզում ենք իրականացած տեսնել մեր իղձերը: Անտեսանելի ձեռքով Նոր տարին կապում ու կամրջում է անցյալը, ներկան ու ապագան, ձեռքբերումներն ու նոր նպատակները և բոլորիս դարձնում խոհական, վերլուծող, նոր ստեղծարար ծրագրեր կառուցող: Տոնի նախօրեին բոլորս լցվում ենք հույսով ու հավատով, որ գալիք տարին կլինի ավելի հաջողակ, բարեբեր ու երջանկաբեր: Հավատում ենք, որ մուտք գործելով մեր օջախները՝ ամեն ընտանիքի այն կնվիրի հոգեկան անդորր ու ներդաշնակություն, աշխատանքային եռանդ ու լավատեսություն, ամենաթանկ բանը՝ առողջություն, հաջողություն՝ մեր ձեռնարկումներին, անսահման սեր՝ մեր սրտերին:

Հին ու նոր տարվա սահմանագլխին, մի կողմ թողնելով դժգոհությունները, հիասթափությունները, անթեղելով մեր մեջ կորստի ցավը, վհատությունը՝ լցվում ենք բարության լույսով, մերձավորի հանդեպ սիրով, հանդուրժողականությամբ, քանզի առջևում մի նոր լուսավոր սկիզբ է...

Մեր համալսարանը մեր աշխատանքային ընտանիքն է, որտեղ մեզ միավորում են համատեղ աշխատանքը, ընդհանուր նպատակները, միասնական ծրագրերը և ամենն իրականացնելու միասնական կամքը:

Հավատում ենք, որ 2014 թվականին բոլորիս առողջությունը, անձնական բարօրությունը, ստեղծարար ձգտումը կդառնան այն կարևոր նախապայմանները, որոնց հիման վրա իր նորանոր հաջողությունները կկառուցի Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը, նրա յուրաքանչյուր աշխատակիցը, դասախոսն ու ուսանողը:

Սիրելի գործընկերներ, ուսանողներ, Նոր տարին ավետող զանգերի ղողանջները մի նոր լուսավոր էջ կբացեն ձեր կյանքում: Եղե՛ք առողջ, զինվե՛ք աշխատասիրությամբ, նպատակասլացությամբ ու, անտարակույս, կյանք կառնեն ձեր երազանքները:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ:

ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր
ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

Հոկտեմբերի 22-25-ը մեր համալսարանում անցկացվեց «Տնտեսական զարգացման քաղաքականության արդի հիմնախնդիրները ՀՀ-ում» խորագրով **ՀՊՏՀ 23-րդ գիտաժողովը**՝ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսական աջակցությամբ: ՀՊՏՀ ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի նախագահությամբ հանդիսավոր բացմամբ տրվեց գիտաժողովի մեկնարկը: Համալսարանի ղեկավարն իր խոսքում մասնավորապես նշեց. «Համալսարանում անցկացվող գիտաժողովներն ու գիտական նստաշրջանները կարևորվում են այնքանով, որքանով դրանք ծառայում են որպես փորձագիտական յուրօրինակ հարթակ Հայաստանի Հանրապետության հրատապ հիմնախնդիրների քննարկման համար: Համալսարանական գիտաժողովների նպատակը մեկ տարում կատարված գիտահետազոտական աշխատանքների արդյունքների համախմբված ներկայացումն է և հետազոտությունների հետագա ուղղությունների նախանշումը:

Հայաստանի տնտեսական զարգացման ներկա քաղաքականությունը կոչված է երաշխավորելու տնտեսության արագ և անցնցում փոխակերպումն այնպիսի համակարգի, որին ներհատուկ են տեխնոլոգիական սրընթաց զարգացումների նկատմամբ բարձր ընկալունակությունը, մարդկային կապիտալի հետևողական զարգացումը՝ դիտարկելով այն որպես տնտեսական փոխակերպման առանցք և օբյեկտիվ սահմանափակումներից անկախ մրցակցային առավելություններ ձևավորելու նախապայման, ներքին և արտաքին ռեսուրսների օգտագործման ուղղությունների առավելագույն ներդաշնակեցում՝ զարգացման առաջնահերթություններին:

Համաշխարհային տնտեսությունում Հայաստանի բարենպաստ դիրքավորման անհրաժեշտ նախապայմանը երկրի տնտեսության մրցունակության բարձրացումն է՝ իրական հատվածում նորարարությունների ներդրման հնարավորությունների մեծացման, արտադրողականության և բարձր ավելացված արժեք ձևավորող աշխատատեղերի աճի, նորագույն արտադրությունների և տեխնոլոգիաների յուրացման միջոցով»:

Այնուհետև բացվեց լիագումար նիստը, և ՀՊՏՀ ռեկտորը ներկայացրեց «Համալսարանական գիտության և երկրի տնտեսական զարգացման քաղաքականության առնչությունները» թեմայով զեկուցումը: Հատկանշելով, որ Հայաստանի Հանրապետությունում գիտության զարգացումը պետք է լինի ոչ միայն ազգային հպարտության առիթ, այլ նախ և առաջ տնտեսության զարգացման և ազգային անվտանգության երաշխիք՝ ռեկտորն անդրադարձավ երկրի գիտակրթական զարգացման հիմնական նպատակներին: Այս ճանապարհին նա մատնանշեց այն կարևոր նախադրյալները, որոնք կօգնեն ժամանակակից համալսարաններին՝ ընդառաջ գնալու արդի մարտահրավերներին և ապահովելու գիտական ներուժի վերարտադրությունը: «Ժամանակն է, որ Հայաստանի Հանրապետությունը մտնի համաշխարհային կրթական շուկա և ունենա իր յուրահատուկ նիշը»,- ասաց ռեկտոր Կորյուն Աթոյանը:

ՀՊՏՀ տարեկան գիտաժողովը հյուրընկալել էր ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Հարությունյանին, ով լիագումար նիստում հանդես եկավ «ՀՀ գիտության ոլորտի զարգացման միտումները և խնդիրները» թեմայով զեկուցմամբ: Շնորհակալություն հայտնելով հրավերի համար՝ Սամվել Հարությունյանը նշեց, որ իր համար շատ

հաճելի է գտնվել տնտեսագիտական համալսարանում և ներկայացնել վերջին հինգ տարիների ընթացքում գիտության ոլորտում իրականացված բարեփոխումները: Գիտության պետական կոմիտեի նախագահը նախ նշեց, որ ռեկտոր Կորյուն Աթոյանի զեկուցումն ամբողջական ու հրաշալի կերպով արտահայտեց գիտության առջև այսօր ծառացած հիմնական խնդիրները, ապա հավելեց, որ իր զեկուցումը ռեկտորի զեկուցման տրամաբանական շարունակությունը կարելի է համարել:

Սամվել Հարությունյանը համառոտ պատմական անդրադարձ կատարեց Հայաստանում գիտական ոլորտի իրավիճակին, որը հաջորդել էր ԽՍՀՄ փլուզմանը, Ղարաբաղյան պատերազմին և աղետալի երկարաշարժին, այն բարեփոխումներին, որոնց սկիզբը դրվել է 1996-97 թթ. և ապա հետևողականորեն իրականացվել 2007 թ. ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ստեղծմամբ: Վերջին 5 տարիներին կոմիտեի ձեռնարկած և իրագործած բարեփոխումների համատեքստում նա խոսեցմեր երկրում գիտության զարգացման ուղղությամբ կոմիտեի թիրախային խնդիրների մասին, ներկայացրեց ծրագրերը, օրենքները, ՀՀ Կառավարության որոշումները, որոնք, բանախոսի ձևակերպմամբ, ունեն համակարգաստեղծ նշանակություն, որդեգրված ռազմավարությունը և այն կատարված հսկայածավալ աշխատանքը, ստեղծված բազան, որն ի ցույց է հանում մեր երկրի գիտական ներուժը, լուծում պահանջող խնդիրները և ապագային ուղղված միտումները: Անդրադարձ կատարելով մեր համալսարանին՝ Սամվել Հարությունյանը նշեց, որ ՀՊՏՀ-ն այն համալսարանն է, որտեղ կա բարձրորակ պրոֆեսորադասախոսական կազմ, և որը ապագայում կարող է միավորել մի քանի հետազոտական ինստիտուտներ:

Լիագումար նիստը եզրափակվեց ՀՊՏՀ գիտության և արտաքին կապերի գծովպրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Վարդանյանի «Գիտելիքի կառավարումը և տնտեսական զարգացումը» թեմայով զեկուցմամբ: Անդրադառնալով գիտելիքի կառավարմանն առնչվող հիմնախնդիրներին՝ Գագիկ Վարդանյանը խոսեց գիտելիքի մասին հիմնական հասկացությունների, տնտեսության զարգացման համար գիտելիքի և տեղեկատվության նշանակության մասին, կարևորեց «բնիկ գիտելիքն» ու դրա դերը, գիտելիքի և տեղեկատվության ճիշտ օգտագործումը:

«Տնտեսական զարգացման քաղաքականության արդի հիմնախնդիրները ՀՀ-ում» խորագրով ՀՊՏՀ 23-րդ գիտաժողովն այնուհետև իր աշխատանքները շարունակեց հետևյալ 4 բաժանմունքներում՝ «Գործարար միջավայր և ներդրումային քաղաքականություն» (համակարգող՝ կառավարման ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյան), «Ֆինանսական շուկաներ և հարկային քաղաքականություն» (համակարգող՝ ֆինանսների ամբիոնի վարիչի ժ/պ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Սալնազարյան), «ՀՀ տնտեսական զարգացումը և տնտեսական անվտանգությունը. խնդիրներ և հեռանկարներ» (համակարգող՝ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Սամվել Ավետիսյան), «Միջազգային տնտեսական համագործակցություն» (համակարգող՝ տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հովսեփ Աղաջանյան): Գիտաժողովը եզրափակվեց «Մաքսային միությանը ՀՀ անդամակցությունը» կլոր սեղանով:

Գիտաժողովի ավարտից հետո լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը զրուցեց բաժանմունքների ղեկավարների հետ՝ խնդրելով մեկնաբանել և գնահատել գիտաժողովի ընթացքն ու կատարված աշխատանքները:

«Գործարար միջավայր և ներդրումային քաղաքականություն» խորագիրը կրող առաջին բաժանմունքի ղեկավար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանի հետ էլ կայացավ մեր առաջին զրույցը:

«Շատ ուրախալի է, որ մեր բուհում շարունակվում է ավանդույթը, յուրաքանչյուր տարի գումարվում է հերթական գիտական նստաշրջան, որին ակտիվորեն մասնակցում են մեր բուհի դասախոսները, ասպիրանտները, և յուրաքանչյուր տարի իբրև գիտաժողովի թեմա ընտրվում է մեր երկրի սոցիալական, տնտեսական զարգացման արդիական որևէ հիմնախնդիր: Այս տարվա թեման ևս արդիական է, որովհետև տնտեսական քաղաքականությունն այսօր տնտեսական աճի ապահովման,

բնակչության բարեկեցության բարձրացման շատ էական նախադրյալ է»,- նշեց Յուրի Սուվարյանը՝ նկատելով, որ իրենց բաժանմունքի խորագիրը շատ ճիշտ է ընտրված, քանի որ գործարար միջավայրի ու ներդրումային քաղաքականության հարցերը տնտեսական քաղաքականության առանցքային խնդիրներից են: Բաժանմունքի ղեկավարի խոսքով՝ իրենց խորագրի ներքո ներկայացված զեկուցումների թեմաները ևս շատ արդիական էին, բաժանմունքի աշխատանքներին մասնակցել են բուհի պրոֆեսորադասախոսական կազմի 42 ներկայացուցիչներ, ինչպես նաև ակտիվ մասնակցություն են ունեցել համալսարանի տարբեր ամբիոնների ասպիրանտներ:

«Ելույթ ունեցան, ցավոք, ոչ մեծ թվով զեկուցողներ, բայց կցանկանայի ընդգծել հատկապես որոշ շատ լավ զեկուցումներ, որ ներկայացրեցին պրոֆեսոր Վալերի Միրզոյանը, դոցենտներ Աշոտ Եղիազարյանը, Կարեն Գրիգորյանը, ուշագրավ էին հատկապես ասպիրանտներ Սուրեն Պարսյանի և Տիգրան Դավթյանի ելույթները: Հավանաբար, ուսումնական պարապմունքների, զբաղվածության պատճառով բոլորին չհաջողվեց ելույթ ունենալ, բայց ցանկալի է, որ գիտաժողովին ներկայացված զեկուցումներն անպայման հնչեն բաժանմունքների նիստերում, ծավալվի ակտիվ քննարկում, որովհետև հենց նման քննարկումներն են, որ հնարավորություն են ընձեռում հաղորդակից լինել գիտության վերջին խոսքին, մասնակից լինել արդիական տնտեսագիտական հիմնախնդիրների քննարկմանը, իսկ այդ ամենը նպաստում է նաև ուսումնական պարապմունքների, նույնն է թե՝ կրթության որակի բարձրացմանը: Իմ ցանկությունն է, որ յուրաքանչյուր տարի կազմակերպվող գիտաժողով-

ներին ապահովվի թե՛ մեր բուհի դասախոսների, թե՛ ասպիրանտների, թե՛ անգամ բարձր առաջադիմությամբ սովորող մագիստրոսների ակտիվ մասնակցությունը»,- ասաց Յուրի Սուվարյանը:

«Միշտ ասել եմ ու կրկնում եմ, որ այս գիտաժողովները խիստ անհրաժեշտ են. դասախոսները, բացի դասախոսական աշխատանքից, որոշակի ոլորտում գիտական հետազոտություն կատարելու, ինչպես նաև դրանք հրապարակելու և փորձարկելու մեծ հնարավորություն են ստանում»,- մեզ հետ զրույցում ասաց երկրորդ՝ «Ֆինանսական շուկաներ և հարկային քաղաքականություն» խորագիրը կրող բաժանմունքի ղեկավար Աշոտ Սալնազարյանը՝ ավելացնելով. «Ես շատ գոհ եմ, որ մեր բաժանմունքի մասնակիցները բավականին լրջությամբ էին մոտեցել. զեկուցումներ կարդացին 4 գիտության դոկտորներ, 12 գիտության թեկնածուներ, 5 ասպիրանտ և մեկ մագիստրանտ՝ այդպիսով մասնակցելով մեր հանրապետության առջև ծառացած հիմնախնդիրների ուղղությամբ կատարվող գիտական աշխատանքներին և բանավեճերին, որոնք վերաբերում էին և՛ պետական բյուջեին, և՛ դեֆիցիտի ծածկմանը, կազմակերպությունների ֆինանսներին, և՛ ֆինանսական կառավարման հարցերին՝ ներառելով և՛ ֆինանսական շուկաները, մասնավորապես՝ ապահովագրական շուկան, կապիտալի շուկան, և՛ ֆինանսական ինստիտուտները, որոնք են կենսաթոշակային հիմնադրամները և ապահովագրական ընկերությունները»: «Սուր բանավեճեր ծավալվեցին կրթության ֆինանսավորման հիմնախնդիրներին, ֆինանսատնտեսական ճգնաժամի առաջացման նախադրյալներին, կենսաթոշակային համակարգի բարեփոխումներին, ինչպես նաև ապահովագրական շուկային վերաբերող զեկուցումների ժամանակ»,- ընդգծեց պրոֆեսոր Աշոտ Սալնազարյանը՝ որպես բացթողում մատնանշելով զեկուցողների սակավ մասնակցությունը:

«ՀՀ տնտեսական զարգացումը և տնտեսական անվտանգությունը. խնդիրներ և հեռանկարներ» խորագիրը կրող բաժանմունքը համակարգող Սամվել Ավետիսյանը մեզ հետ զրույցում նշեց, որ իրենց բաժանմունքում ներկայացվել են մի շարք հետաքրքրական զեկուցումներ, որոնք վերաբերում էին տնտեսական զարգացման և տնտեսական անվտանգության հիմնախնդիրներին, հարավկովկասյան տարածաշրջանում ինտեգրման գործընթացների զարգացման, առկա հակամարտությունների կարգավորման և այդ համատեքստում Հայաստանի ազգային անվտանգության հիմնախնդիրներին, Հայաստանի և Ադրբեջանի տնտեսական զարգացման ցուցանիշների համեմատական վերլուծությանը, բնապահպանական և բնօգտագործման վճարների ազգային համակարգի վերլու-

ծությանը, պետական գնումների բարելավմանը, ՀՀ և ԼՂՀ միասնական պարենային հաշվեկշռի կազմման հիմնական սկզբունքներին, ՀՀ հոգևոր անվտանգության մարտահրավերներին:

«Ընդհանուր առմամբ, բաժանմունքի զեկուցումները ցույց տվեցին, որ դրանք հիմնականում բխում էին «Ամբերդ» հետազոտական կենտրոնի շրջանակներում իրականացվող ծրագրերից և վերաբերում էին հետաքրքրություն ներկայացնող հիմնախնդիրներին: Տարեկան գիտաժողովը բուհի հետազոտական համակարգի յուրահատուկ բերքահավաքն է, ուստի սպասելիքները բավականին մեծ են: Ցանկալի է, որ տարեկան գիտաժողովը կրի միջազգային բնույթ, ներկայացված լինեն նաև արտերկրի տնտեսագետները»,- նշեց «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրենը:

«Միջազգային տնտեսական համագործակցություն» խորագիրը կրող բաժանմունքի համակարգող Հովսեփ Աղաջանյանը բաժանմունքում արծարծված բոլոր հարցերը գնահատեց որպես գիտական պատշաճ մակարդակով ներկայացված զեկուցումներ՝ նշելով, որ դրանք ուղեկցվել են մասնագիտական քննարկումներով, հարցադրումներով: «Արծարծվել են Հայաստանի տնտեսությանը վերաբերող բազմաթիվ հարցեր, մասնավորապես՝ ՀՀ արդյունաբերության քաղաքականության զարգացման հիմնախնդիրների շուրջ, ՀՀ գլոբալ մրցակցության ազդեցությունը գործարար միջավայրի միջազգայնացման վրա, ՀՀ-ն բարձր տեխնոլոգիաների միջազգային վարկանիշային դասակարգումների համակարգում, արտահանման և ներմուծման դինամիկայի որակը առևտրային հաշվեկշռի պակասուրդ ունեցող երկրներում: Մեր բաժանմունքում քննարկվող բոլոր հարցերը բավականին հետաքրքրքիր էին, և քննարկումներն անցան կառուցողական բանավեճերով: Ես բաժանմունքի ղեկավար լինելու այլ առիթներ էլ եմ ունեցել, բայց այս անգամվա տպավորությունը լավ է, հեղինակներն ավելի ակտիվ էին ու ավելի պատրաստված»,- ընդգծեց Հովսեփ Աղաջանյանը:

ՀՊՏՀ գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Գագիկ Վարդանյանը մեզ հետ զրույցում նշեց, որ նախկին գիտաժողովների շարքում 23-րդը, որտեղ ներկայացվել էին 130-ից ավելի զեկուցումներ, առանձնանում է նրանով, որ գիտական գործունեության զարգացման առումով գիտաժողովին նախորդել էին բավական նորաստեղծություններ, մասնավորապես, համալսարանում ներդրվել է հանրապետությունում նախադեպը չունեցող ներքին գիտական դրամաշնորհների կարգը և այսօր մոտ 37 մլն դրամի սահմաններում իրականացվում է 13 ներքին գիտական դրամաշնորհ, ստեղծվել է «Ամբերդ» հետազոտական կենտրոնը և կենտրոնի 15 հետազոտական ուղղություններում ընդգրկվել են պրոֆեսորադասախոսական համակազմի շուրջ 100 ներկայացուցիչներ, ասպիրանտներ, մագիստրանտներ:

«Սրանք իրենց մասշտաբով նախադեպը չունեցող գործողություններ էին և՛ ինստիտուցիոնալ առումով, ինչը վերաբերում է կենտրոնի ստեղծմանը, և՛ կազմակերպական, և՛ ընդգրկվածության ու խնդիրների հստակ դրվածքի առումով: Այսինքն՝ համաժողովն, ըստ էության, այս լայնածավալ հետազոտությունների արդյունքների յուրօրինակ ներկայացում եղավ, և 4 բաժանմունքներում լսվեցին բավական հետաքրքիր զեկուցումներ: Համենայն դեպս, համաժողովի մասնակիցները տպավորված էին և ոգևորված նման մասշտաբի գիտական գործունեությամբ: Իհարկե, այս ձեռնարկումների հենքի վրա սա առաջին խոշոր գիտական իրադարձությունն

էր համալսարանի կյանքում»,- շեշտեց Գագիկ Վարդանյանը՝ հույս հայտնելով, որ համաժողովի արդյունքները լավ նախադրյալ կդառնան համալսարանում գիտական գործունեության հետագա ակտիվացման և դասախոսների, ուսանողների ասպիրանտների ընդգրկվածության մակարդակի բարձրացման համար: «Սա ինչ-որ տեղ այն մեխանիզմի գործադրումն է, որը կապահովի գիտական գործունեության ակնկալվող արդյունքները, ինչպես նաև, որը ավելի կարևոր է՝ այդ արդյունքների ինտեգրումը կրթական գործընթացներում»,- շեշտեց գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտորը:

ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Երկու տասնամյակ առաջ ՀՀ ազգային արժույթը՝ դրամը, մտավ շրջանառության մեջ և անկախ պետականություն կերտող երկրում սկսեց իր ինքնուրույն և ոչ դյուրին ճանապարհը:

ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Աշոտ Սալնազարյանն** *այդ տարիներին եղել է ՀՀ ֆինանսների նախարարության տնտեսական մեխանիզմի և վալյուտային վարչությունում բաժնի պետ և ի պաշտոնե անմիջական մասնակցություն ցուցաբերել ՀՀ թղթադրամների և մետաղադրամների ներկրման գրեթե բոլոր աշխատանքներին: Ներկայացվող նյութը պատմական իրադարձությունների ականատեսի, պաշտոնյայի ու տնտեսագետի վավերագրումն է, ինչպես նաև 20-ամյա ՀՀ դրամի արժևորումը:*

ՔՍԱՆ ՏԱՐԻ ՈՒ ՄԻ ԱՄԲՈՂՋ ԿՅԱՆՔ

2013 թվականի նոյեմբերի 22-ին մտա ապահովագրական գործ մասնագիտության 4-րդ կուրս և շնորհավորեցի ուսանողներիս՝ ՀՀ ազգային դրամի ներդրման 20-ամյակի առիթով: Այնուհետև մի պահ կանգ առնելով հասկացա, որ այդ տարիներին նրանցից շատերը, գուցե, դեռ լույս աշխարհ էլ չէին եկել: Այսինքն՝ դրամն արդեն մի ամբողջ կյանք է ապրել: Մեկ ակնթարթում երազի նման դրամի ներդրման հետ կապված բոլոր իրադարձություններն ամենայն մանրամասնությամբ սահեցին աչքերիս առջևով:

Անկախության հռչակումից մեկ տարի անց՝ 1992 թ. կեսերին, ՀՀ-ում հայտարարվեց ազգային արժույթի անվանման, թղթադրամի դիզայնի և տպագրող կազմակերպության մրցույթ: Այս բոլոր աշխատանքները կատարվում էին ՀՀ ֆինանսների նախարարության տնտեսական մեխանիզմի և վալյուտային վարչությունում, որտեղ աշխատում էի որպես բաժնի պետ: Մրցույթների արդյունքում որոշվեց ՀՀ արժույթի անվանումը՝ «դրամ», որը բաղկացած էր 100 «լումայից», որոշվեցին նաև լավագույն նմուշները, իսկ որպես տպագրող կազմակերպություն՝ հաղթող ճանաչվեց գերմանական «Գեյզիկե ընդ Դևրիենտ»-ը:

1993 թ. գարնանը ՀՀ դրամը՝ 10, 25, 50, 100 և 200 անվանական արժեքով թղթադրամները, արդեն պատրաստ էր և ներկրվեց Հայաստանի Հանրապետություն. Զվարթնոց օդանավակայանում ՀՀ առաջին դրամն ընդունեց ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ կենտրոնական բանկի կողմից կազմված հանձնախումբը:

Այսպիսով, ՀՀ դրամն արդեն կար, սակայն չներդրվեց, քանի որ այդ պահին մեր հանրապետությունը պատրաստ չէր. առկա էին տնտեսական և քաղաքական մի շարք արտաքին ու ներքին գործոններ: 1988 թվականի աղետալի երկրաշարժն ամբողջովին շարքից դուրս էր բերել հանրապետության տնտեսության հյուսիսային հատվածը, փլուզվել էին ԽՍՀՄ տնտեսական կապերը, որոնց վրա խարսխված էր ՀՀ գրեթե ողջ արդյունաբերությունը, տնտեսության շրջափակման և Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի հետևանքով երկրում էներգակիրների, գազի, վառելիքի բացակայություն էր: Այս ամենը մեր երկրում կազմալուծել էր տնտեսության իրական հատվածը: Հարկադիր պարապուրդի էր մատնված գրեթե ամբողջ արդյունաբերությունը:

1992 թ. վերջին և 1993 թ. սկզբին ԽՍՀՄ մի շարք պետություններ (Ուկրաինա, Բելառուս, Վրաստան) այս կամ այն ձևով արդեն անցում էին կատարել ազգային դրամին կամ հրաժարվել էին ԽՍՀՄ ռուբլուց:

1993 թ. օգոստոսի 26-ին կատարվեց ամենաէական իրադարձությունը՝ ՌԴ-ն միակողմանիորեն հայտարարեց, որ իր տարածքում որպես օրինական վճարման միջոց ընդունվում է միայն 1993 թվականի նմուշի ռուբլին: Տեղի ունեցավ նաև ամենաանցանկալին՝ նախկին միութենական հանրապետություններում, այդ թվում՝ ՌԴ-ում, շրջանառության մեջ գտնվող մինչև 1993 թ. նմուշի ռուբլին սկսեց հոսել այն հանրապետություններ, որոնք դեռևս չէին անցել սեփական դրամին, դրանց թվում նաև՝ մեր հանրապետություն՝ բացասական բոլոր հետևանքներով:

Մի շատ կարևոր հարց, որին ուզում եմ անդրադառնալ: Նշված խառնաշփոթում անընդհատ տարբեր ձևերով ու մեթոդներով ՀՀ էր ներկրվում դուրս մղված ռուբլին: ՀՀ-ում անկասելիորեն աճում էին սպառողական ապրանքների գները՝ հասնելով ֆանտաստիկ չափերի, ապրանք արտադրողները գերադասում էին չվաճառել ապրանքը, այլ բարտերային փոխանակում կատարել: ՀՀ Կառավարությունը, նկատի ունենալով վերը նշված քաղաքական ու տնտեսական գործոնները, շարունակում էր դեռևս օգտագործել ռուբլին:

Սակայն արդյունքում սեփական դրամին անցնելու որոշումը պետք է ընդունվեր: Եվ քանի որ պատրաստ չէր ՀՀ մանրադրամը, շտապ կարգով սկսվեցին դրա պատրաստման աշխատանքները. Վարշավայի «Մոնետնի դվորի» հետ կնքվեց ՀՀ մետաղադրամի պատրաստման համապատասխան պայմանագիր՝ 50 լումա, 1, 3, 5 և 10 դրամ անվանական արժեքով:

Ժամկետներն այնպիսին էին, որ մետաղադրամի 1-ին խմբաքանակը ՀՀ կարող էր ներկրվել 1994 թ. հունվարի երկրորդ կեսին, սակայն ստեղծված կացությունը թույլ չտվեց սպասել մինչ այդ պահը, և ՀՀ Կառավարությունը իրավիճակը շտկելու և կառավարելու նպատակով 1993թ. նոյեմբերի 22-ին անցում կատարեց ՀՀ ազգային դրամին՝ հետևյալ հիմնական պայմաններով. 1 դրամը ԽՍՀՄ 200 ռուբլի հարաբերակցությամբ (այսինքն՝ 100 ռուբլին = 5 դրամ) և 1 դոլարը 14,5 դրամ փոխարժեքով:

Նոր ներդրված ՀՀ դրամը նույնպես ենթարկվեց անհապաղ արժեզրկման, և դրան տանող պատճառները թերևս հետևյալներն էին. 1-ինն այն էր, որ ՀՀ պետական մարմինները և հատկապես ՀՀ կենտրոնական բանկը դրամավարկային քաղաքականության իրականացման համապատասխան փորձ չունեին: Օրինակ, մի շարք հանրապետություններ, այդ թվում՝ Ուկրաինան, Բելառուսը, Վրաստանը, Մոլդովան, նույնիսկ մերձբալթյան հանրապետությունները սկզբում ներդրեցին այսպես կոչված «կուպոններ» կամ այլ վճարամիջոցներ, որոնք, ի դեպ, նույնպես ենթարկվեցին արժեզրկման, այնուհետև նոր միայն անցում կատարեցին ազգային դրամներին:

Երկրորդ պատճառը, մեր կարծիքով, ավելի շատ տեխնիկական էր: ՀՀ դրամին անցման ժամանակ առկա էին 10, 25, 50,100 և 200 դրամանիշերը, դեռևս չկային 10 դրամից ցածրերը, որի պատճառով էլ օգտագործվեցին 1000, 500, 200 և 100 ռուբլու դրամանիշերը ևս: Սակայն վերջիններս արագ դուրս մղվեցին շրջանառությունից և ցածրարժեք ապրանքների գները սկսվեցին 10 դրամից:

Առաջ անցնելով նշեմ, որ մետաղադրամների առաջին խմբաքանակը Վարշավայից ՀՀ ներկրվեց 1994 թ. հունվարի 25-ին (124 տոննա ընդհանուր քաշով) և միայն հունվարի վերջին հնարավոր եղավ ամբողջությամբ անցում կատարել ՀՀ ազգային դրամին: Բայց այդ ժամանակ արդեն 1 ԱՄՆ դոլարը հատել էր 100 դրամի շեմը:

1994 թ. մայիսի վերջին, շնորհիվ ՀՀ կենտրոնական բանկի ջանքերի և վստահ քաղաքականության, դրամի արժեզրկման տեմպերը կտրուկ դանդաղեցին, իսկ 1 ԱՄՆ դոլարն արդեն կազմում էր 420 դրամ:

Հետագա տարիներին կամ ավելի որոշակի՝ 1998-1999 թթ., դրամի փոխարժեքը հասավ ընդհուպ մինչև 1 դոլար/580 դրամ հարաբերակցության, սակայն դրանից հետո այն սկսեց հետևողականորեն նվազել:

Չցանկանալով անդրադառնալ վերջինիս դրական և բացասական կողմերին՝ ուղղակի պետք է նշեմ, որ 2008 թ. վերջին 1 դոլարը հասել էր մինչև 300 դրամի, անգամ եղան դեպքեր, երբ այն ավելի նվազեց: Իսկ երբ 2009 թ. մարտի 1-ին հայտարարվեց, որ ՀՀ-ում անցում է կատարվում լողացող փոխարժեքին, 1 ԱՄՆ դոլարը հասավ 330 դրամի:

Հետագա տարիներին և առայսօր ՀՀ դրամը դրսևորում է կայուն վարքագիծ և ներկայում մի փոքր բարձր է 400 դրամից: Պետք է նշել, որ դա ՀՀ կենտրոնական բանկի կողմից հետևողականորեն վարվող դրամավարկային արդյունավետ քաղաքականության արդյունք է:

Շնորհավոր տարեդարձդ, ՀՀ դրամ, քեզ համար թող միշտ լինի կայուն ապագա:

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ ԴՊՐՈՑ՝ ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ

Մեր համալսարանը և բրիտանական «Globe Education (GB) LTD» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը համատեղ կհիմնադրեն «Հայաստանում բրիտանական բիզնես դպրոց» ՓԲԸ: Այս որոշումը ՀՀ Կառավարությունն ընդունել է դեկտեմբերի 5-ին կայացած նիստում: Համատեղ բիզնես դպրոց ստեղծելու նախաձեռնությանը նախորդել են փոխադարձ այցեր: ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանի գլխավորությամբ աշխատանքային խումբը եղել է Լոնդոնում, որից հետո նշված կազմակերպության ներկայացուցիչները փոխադարձ այցով եղել են մեր համալսարանում, հանդիպել ռեկտորի հետ, ծանոթացել ՀՊՏՀ պայմաններին, կարողություններին, ստացել դրական տպավորություններ:

«Շուրջ մեկ տարի է, բանակցում ենք «Globe Education (GB) LTD» կազմակերպության հետ, և ուրախալի է, որ Կառավարությունը թույլատրեց մեզ կյանքի կոչել համատեղ կրթական ծրագիր իրականացնելու շուրջ ձեռք բերված փոխհամաձայնությունը, այն է՝ իրականացնելու մագիստրոսական ծրագիր: Այս նախագիծը կարևոր է Հայաստանի համար, քանի որ նման բիզնես դպրոց հիմնելով մենք հենց Հայաստանում միջազգային կրթություն ստանալու հնարավորություն ենք ընձեռում ոչ միայն մեր երկրի քաղաքացիներին, այլև տարածաշրջանի ուսանողներին: Սա Հայաստանի կրթական համակարգի հեղինակության բարձրացմանը միտված լուրջ քայլ է և հավակնոտ ծրագիր»,- «Տնտեսագետի» հետ զրույցում ասաց ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանը:

«Globe Education (GB) LTD»-ի գործընկերները 4 բրիտանական բուհեր են, որոնցից մեր համալսարանի հետ համագործակցելու է Քարդիֆի Մետրոպոլիտեն համալսարանը: Համատեղ բիզնես դպրոցի մագիստրոսական ծրագիրն իրականացվելու է անգլերենով՝ ընկերության ծրագրով, որը նախատեսում է 6 պարտադիր և 2 ընտրովի մոդուլներ, որոնք կարելի է ընտրել 3 հնարավոր մոդուլներից: Ուսանողին հնարավորություն է տրվելու նաև ընտրել ավարտական աշխատանքը, որը կարող է լինել մագիստրոսական թեզ, ուսումնասիրություն կամ բիզնես պլանի մշակում: Հեռակա դասընթացը նախատեսվում է անցկացնել վեց շաբաթը մեկ՝ 3 օրով՝ ուրբաթ երեկոյան, շաբաթ և կիրակի օրերին ամբողջությամբ, որից հետո ուսանողը կունենա 6 շաբաթ՝ տվյալ մոդուլի կուրսային աշխատանքի ներկայացման համար:

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՅ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

Ուսանողների ուսման առաջադիմությունը, հասարակական ակտիվությունը խրախուսելու համար մեր համալսարանում տարբեր տարիներին սահմանվել են ***տնտեսագիտության բնագավառի հայ երախտավորների անվանական կրթաթոշակներ:*** *Սա մի մոտեցում է, որով ուշադրության ու դրվատանքի են արժանանում լավագույն ուսանողները և սերունդների համար արթուն են պահվում մեծանուն գործիչների անունները, առիթ է ներկայանում անդրադառնալու նրանց վաստակին ու ավանդին: Այսօր մեր բուհի լավագույն ուսանողներն արժանանում են անվանի տնտեսագետների* **Զաքարե Բաշինջաղյանի, Հովհաննես Թումանյանի, Վլադիմիր Ներկարարյանի, Անուշավան Արզումանյանի, Կարապիս Կարագյանի, Միքայել Քոթանյանի** *անվան կրթաթոշակների:*

ՎԼԱԴԻՄԻՐ ՆԵՐԿԱՐԱՐՅԱՆ (1928-1993)

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Ներկարարյանը 1975-1979 թթ. եղել է նորաստեղծ Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի ռեկտորը: Նրա ղեկավարության օրոք կազմակերպվել և համալրվել են ինստիտուտի ամբիոնները, ստեղծվել են տնտեսագիտական մասնագիտություններ, բացվել է գրադարանը՝ ընթերցասրահներով, ստեղծվել են փորձագիտական լաբորատորիաներ: 1979-1981 թթ. նա եղել է քաղաքատնտեսության ամբիոնի պրոֆեսոր, 1981-1993 թթ.՝ ԵՊԻ ամբիոնի վարիչ:

Կրթաթոշակը սահմանվել է 2003 թ.:

ՄԻՔԱՅԵԼ ՔՈԹԱՆՅԱՆ (1927-1999)

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Միքայել Քոթանյանը երկար տարիներ աշխատել, ապա 1987-1999 թթ. ղեկավարել է ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտը:

1960-1964 թթ. եղել է «Հայաստանի ժողովրդական տնտեսություն» ամսագրի գլխավոր խմբագիրը: 1989 թվականից մինչև կյանքի վերջը նա Հայաստանի տնտեսագետների միության ղեկավարն էր, ՀՀ ԳԱԱ, մեր բուհի և ԵՊՀ տնտեսագիտության գծով աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի, ՀՀ կրթության և գիտության թեմատիկ ֆինանսավորման հանձնաժողովի նախագահը:

Կրթաթոշակը սահմանվել է 2000 թ.:

ԶԱՔԱՐԵ ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆ (1895-1971)



ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Զաքարե Բաշինջաղյանը եղել է ԵՊՀ քաղաքատնտեսության դասախոս և ամբիոնի վարիչ, 1947-1949 թթ. պաշտոնավարել է որպես ԵՊՀ պրոռեկտոր, 1956-1957 թթ.՝ տնտեսագիտական ֆակուլտետի դեկան:

Կրթաթոշակը սահմանվել է 2003 թ.:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ (1904-1965)

ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Անուշավան Արզումանյանը 1937 թ. եղել է ԵՊՀ ռեկտորը, Մոսկվայում աշխատել է որպես ԽՍՀՄ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի սեկտորի վարիչ և տնօրենի տեղակալ: 1956 թ. նրան հանձնարարվել է ԽՍՀՄ ԳԱ համաշխարհային էկոնոմիկայի ու միջազգային հարաբերությունների ինստիտուտի կազմակերպումը, որի անփոփոխ տնօրենն է եղել մինչև կյանքի վերջը:

Կրթաթոշակը սահմանվել է 2003 թ.:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ (1904-1968)



ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Հովհաննես Թումանյանը 1938 թվականից մինչև կյանքի վերջը դասավանդել է ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետում: 1946-1968 թթ. եղել է ամբիոնի վարիչ:

Կրթաթոշակը սահմանվել է 2006 թ.:

ԿԱՐՊԻՍ ԿԱՐԱԳՅԱՆ (1908-1992)

ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Կարապիս Կարագյանը 1938 թվականից դասավանդել է ԵՊՀ հաշվապահական հաշվառման ամբիոնում: Եղել է ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկան, հաշվապահական հաշվառման ամբիոնի վարիչ: 1975 թվականից տեղափոխվել է նորաստեղծ ժողովրդական տնտեսության ինստիտուտ՝ վարելով ամբիոնի վարիչի պաշտոն:

Կրթաթոշակը սահմանվել է 2012 թ.:

ԳԵՂԵՑԻԿ, ԽԵԼԱՑԻ ՈՒ ԱՌԱՋԱԴԵՄ

Համալսարանում գործող անվանական կրթաթոշակների չափորոշիչների ու հավակնորդների ընտրության կարգի համաձայն՝ ուսանողը առնվազն երկու տարի անընդմեջ պետք է ուսման գերազանցիկ լինի, ակտիվորեն մասնակցի ուսանողական գիտական ընկերության աշխատանքներին, բուհում կազմակերպվող միջոցառումներին, աչքի ընկնի որպես բարեկիրթ ու ազնիվ մարդ: Ռեկտոր Կորյուն Աթոյանը ռեկտորատում պարբերաբար հորդորել է հավակնորդների ընտրությունը կատարել պատշաճորեն և թափանցիկ:

Այսօր մեր համալսարանի անվանական կրթաթոշակների են արժանացել ՀՊՏՀ 6 ֆակուլտետների ուսանողուհիները: «Տնտեսագետը» զրուցել է ուսման առաջավոր, հասարակական ակտիվիստ, պարզապես հմայիչ ու գեղեցիկ հայուհիների հետ: Նշենք մեկ կարևոր ու բնութագրական հանգամանք. մեր բոլոր հերոսուհիները համալսարան են ընդունվել վճարովի ուսուցման համակարգում, սակայն մեկ տարի անց փոխատեղվել են պետպատվերի համակարգ ու շարունակում են պահպանել անվճար սովորելու իրավունքը:

Ինչպիսի՞ն է աղջիկների ուսումնական առօրյան, ի՞նչ ծրագրեր ունեն, պարտավորեցնո՞ղ է արդյոք անվանի տնտեսագետի կրթաթոշակ ստանալը, ի՞նչ գիտեն այն տնտեսագետի մասին, ում անվան կրթաթոշակին արժանացել են. այս մասին՝ մեր ճեպազրույցում:

Համլիկ Պետրոսյան

Արժանացել է Զաքարե Բաշինջաղյանի անվան կրթաթոշակի, կառավարման ֆակուլտետի զբոսաշրջության կառավարում մասնագիտության առաջին կուրսի մագիստրանտ է: Կուրսում, որտեղ սովորում է Համլիկը, բոլորն ուրախ են միմյանց հաջողություններով, կա մրցակցություն, սակայն երբեք այն չի խամրեցնում ընկերությունն ու ջերմ հարաբերությունները:

- Անվճար համակարգում սովորողներս մոտ ընկերներ ենք, ու հինգս էլ անվճար մագիստրատուրա անցանք, իսկ անվանական կրթաթոշակի արժանանալս նրանք ընդունեցին ուրախությամբ ու հպարտությամբ:

Համլիկի կարծիքով՝ ինքն ու իր համակուրսեցիները՝ զբոսաշրջության ապագա կառավարիչները, բավարար հնարավորություններ ունեն աշխատելու զբոսաշրջության ոլորտում, անհրաժեշտ է միայն լրացուցիչ տիրապետել որոշ մասնագիտական ծրագրերի:

- Զբոսաշրջության կառավարիչներ միայն մեր համալսարանն է պատրաստում, հետևաբար պետք է աշխատենք լավ մասնագետ դառնալ ու բարձր պահել նրա անունը:

Նաիրուհի Նաչարյան

Նաիրուհին սովորում է ֆինանսական ֆակուլտետի ֆինանսներ մասնագիտության 4-րդ կուրսում: Նա արժանացել է Հովհաննես Թումանյանի անվան կրթաթոշակի:

- Ուսումնառության այս շրջանում ջանքերս նպատակաուղղելու եմ ավարտական աշխատանքիս: Վերցրել եմ գրականությունը, հանդիպել ղեկավարիս հետ և սկսել եմ աշխատել: Գիտահետազոտական մեծ փորձ չունեմ, մի քանի անգամ ՈՒԳԸ նստաշրջանների եմ մասնակցել, այնուհանդերձ, կաշխատեմ, որ աշխատանքս լավագույն համադրությունը լինի տեսական ու գործնական գիտելիքներիս:

Նաիրուհին վստահ է, որ փորձառությունը կապահովի աշխատանքի գործնականությունը, և ինքը պաշտպանությանը կներկայանա հիմնավորապես պատրաստ ու ինքնավստահ:

Իրեն Թորոսյանց

Իրենին շնորհվել է մեր համալսարանի առաջին ռեկտորի՝ Վլադիմիր Ներկարարյանի անվան կրթաթոշակը: Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետում բիզնեսի կազմակերպման մասնագիտությամբ բակալավրական ուսումն ավարտելուց հետո Իրենը ցանկանում է մագիստրոսական մասնագիտություն ստանալ ֆինանսական մասնագիտությամբ:

- Իմ պատկերացմամբ՝ բիզնես գործունեություն սկսելու համար որոշակի ֆինանսական միջոցների կարիք է զգացվում, որոնք ներգրավելու և արդյունավետորեն կիրառելու համար հարկ է խորությամբ ուսումնասիրել ֆինանսական ոլորտը:

Սակայն մագիստրոսական կրթությունն Իրենն ստանալու է ոչ թե ՀՊՏՀ-ում, այլ հեռավոր Ավստրալիայում՝ Սիդնեյում, որտեղ այժմ ուսանում ու ապրում է նրա փեսացուն: Կանխելով մեր հարցը՝ Իրենն ասում է, որ իր ցանկությունն է ուսումնառությունից հետո վերադառնալ ու Հայաստանում գործունեություն ծավալել:

Արաքսյա Մանուկյան

Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի կառավարման տեղեկատվական համակարգեր մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Արաքսյան դեռևս անցյալ տարի է արժանացել Անուշավան Արզումանյանի անվան կրթաթոշակին ու այս տարի պահպանել է իր հանդեպ եղած վստահությունը: Արաքսյան անկեղծանում է. ուսումն իրենից այնքան ժամանակ է խլում, որ լրացուցիչ ոչ մի բան չի հասցնում: Նրա համար բարձրորակ մասնագետ դառնալը թիվ մեկ ու կարևոր խնդիր է, իսկ առջևում մագիստրատուրան է:

- Մեր մասնագիտությամբ պատրաստվում են տնտեսագետ- ծրագրավորողներ: Դեռ չեմ կողմնորոշվել, թե ինչ բնագավառում կաշխատեմ: Փորձառությունը, որն առաջիկայում պետք է անցնեմ և դիպլոմային աշխատանքի պաշտպանությունը, կարծում եմ, կկանխորոշեն իմ հետագա գործունեությունը:

Լուսինե Խաչատրյան

- Կարպիս Կարագյանի անվան կրթաթոշակը, որին արդեն երկրորդ տարին եմ արժանանում, ինձ համար ուսման մեջ առաջադիմելու մի նոր խթան է, միևնույն ժամանակ, անչափ պարտավորեցնող: Դրանում կարծես արտահայտված է իմ սիրելի դասախոսների հավատն ու վստահությունը իմ հանդեպ:

Լուսինեն սովորում է հաշվապահական հաշվառում և աուդիտ ֆակուլտետի հաշվապահական հաշվառում մասնագիտության 4-րդ կուրսում: Պատմում է նաև, որ առաջիկայում պետք է փորձառություն անցնի, ինչը կօժանդակի դիպլոմային աշխատանքը պատշաճորեն ավարտին հասցնելուն: Իր հետագա անելիքների մասին դեռ չի խորհել, իհարկե, մագիստրատուրա կընդունվի, ապա գուցե նաև ասպիրանտուրա: Կարևորը ընթացիկ հաջողություններն են, որոնց պետք է հասնել համառությամբ ու աշխատասիրությամբ: Լուսինեն ասում է, որ հաշվապահի մասնագիտությունից բացի, կուզենար ստանալ փորձագետի մասնագիտություն:

Մերի Համբարձումյան

Մերին Միքայել Քոթանյանի անվան կրթաթոշակառու է, սովորում է տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի հողագույքային հարաբերություններ մասնագիտության 4-րդ կուրսում: Նա ոչ միայն ուսման առաջավոր է, այլև ակտիվ հասարակական կյանքով է ապրում. Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի, մեր համալսարանի ուսանողական խորհրդի անդամ է:

- Միքայել Քոթանյանի մասին շատ բան չգիտեմ, գիտեմ միայն, որ ականավոր տնտեսագետ է: Նրա անվան կրթաթոշակին արժանանալը պարտավորեցնող է, և պետք է աշխատեմ իմ հետագա կրթության ընթացքում և դրանից հետո էլ արդարացնել ինձ ուղղված բոլորի հույսերը:

Ճանաչենք անվանական կրթաթոշակի արժանացած մեր գերազանցիկներին, մաղթենք նրանց նորանոր հաջողություններ:

ԱՐՄԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԲՈՒՀԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Կրթության բնագավառում ներկայիս բարձր մրցակցության պայմաններում բուհերը պետք է գնան հետազոտական համալսարաններ դառնալու ճանապարհով: Սա է ճիշտ ուղին, որը ոչ միայն կբարձրացնի կրթական ծառայությունների որակը, այլև բուհերը կդարձնի մրցունակ:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտոր, դոկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանը բուհի ռեկտոր ընտրվելուց ի վեր (2011թ. ապրիլ) պարբերաբար բարձրաձայնել է իր այս մոտեցման մասին: Վերջին շրջանում հաճախակիացել են այս մասին հայտարարությունները նաև ոլորտի տարբեր պատասխանատուների և փորձագետների կողմից:

2013 թ. հունվարի 17-ին ՀՊՏՀ խորհրդի նիստում հաստատվեց բուհում հետազոտական կենտրոն ստեղծելու առաջարկը, և հաջորդ օրն իսկ ռեկտոր Կորյուն Աթոյանի հրամանով կյանքի կոչվեց խորհրդի որոշումը՝ հիմնադրվեց ՀՊՏՀ հետազոտական կենտրոնը, որը հետագայում պաշտոնապես ստացավ «Ամբերդ» անունը: Կենտրոնը ղեկավարում է խորհրդատուների խորհուրդը, որի նախագահն է համալսարանի ռեկտորը: Կենտրոնի տնօրենն է տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Սամվել Ավետիսյանը:

Համալսարանում հետազոտական կենտրոնի ստեղծումն արդեն իսկ արժանացել է դրական արձագանքների, գնահատականների. համալսարանի ներսում, օրինակ, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներից շատերն այդ քայլը որակել են նորարարական, հեղափոխական, հավակնոտ, զարգացման նոր նշաձող սահմանող:

Անցնող 1 տարում նորաստեղծ «Ամբերդ» հետազոտական կենտրոնը կատարել է մի շարք աշխատանքներ՝ մշակել է հետազոտական կենտրոնի կանոնադրությունը, գործունեության կանոնակարգման և ըստ հետազոտական ծրագրերի ընթացիկ սեմինարների անցկացման գրաֆիկը, լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի հետ համագործակցությամբ ապահովել է ՀՊՏՀ պաշտոնական կայքում (asue.am) կենտրոնի մասին տեղեկատվության հրապարակումը, կենտրոնի մասին տեղեկատվություն է ներկայացրել «ուղեղային կենտրոնների» ուսումնասիրությամբ և դասակարգմամբ զբաղվող, աշխարհում լավագույնը համարվող ԱՄՆ Փենսիլվանիայի համալսարանի «Ուղեղային կենտրոնները և քաղաքացիական հասարակությունները» ծրագրին, ՀՀ մտավոր սեփականության գործակալությունում գրանցել է «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ապրանքային նշանը, ստեղծել է տնտեսագիտական հետազոտությունների տեղեկատվական բանկի ձևավորման հիմքեր, ակտիվ մասնակցություն է ունեցել ՀՊՏՀ 23-րդ գիտաժողովի 3-րդ բաժանմունքի աշխատանքի կազմակերպմանը: 2013 թ. համար հաստատվել են 15 հետազոտական ուղղություններ, որոնց կատարմանը մասնակցում են շուրջ 100 հետազոտողներ, այդ թվում՝ ասպիրանտներ և մագիստրանտներ: Նշված հետազոտական ուղղություններն իրականացվում են 3 ծրագրերի շրջանակներում՝ «Ազգային անվտանգության հետազոտություններ» (ծրագրի տնօրեն, տնտեսագիտության թեկնածու Վարդան Աթոյան), «Սոցիալ-տնտեսական հետազոտություններ» և «Ազգային մրցունակության և միջազգայնացման հետազոտություններ» (երկու ծրագրերը դեռևս տնօրեններ չունեն):

1-ամյա գործունեության առիթով զրուցեցինք կենտրոնի տնօրեն Սամվել Ավետիսյանի հետ.

-Պարոն Ավետիսյան, վերջին շրջանում շատ է հնչում համալսարանների՝ հետազոտական ճանապարհով գնալու անհրաժեշտության, բուհերում հետազոտական բաղադրիչի զարգացման մասին: Այս համատեքստում ինչպե՞ս կգնահատեք ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ստեղծումը, որը գործում է արդեն մեկ տարի. չե՞ք կարծում, որ կենտրոնի ստեղծումը ճիշտ պահին արված քայլ էր:

-Դուք իրավացի եք, ժամանակակից բուհական համակարգն արդյունավետ կրթական ծրագրեր կարող է իրականացնել միայն հետազոտական բաղադրիչի առկայության պայմաններում: Ըստ իս, դրա բացատրությունը շատ պարզ է. աշխարհը շատ արագ է փոփոխվում, դա վերաբերում է ինչպես գլոբալ, այնպես էլ լոկալ մակարդակներում կատարվող փոփոխություններին: Այս գործընթացում ի հայտ են գալիս նոր իրողություններ, նոր հարաբերություններ, սպասումներ ու միտումներ,

որոնք պահանջում են նոր մեկնաբանություններ և լուծումներ: Հետևաբար գիտելիքների հին պաշարով, սոսկ դասագրքային սահմանումներով հնարավոր չէ բարձր մակարդակի ուսումնական ծրագրի մատուցում: Գիտությունից կտրված դասախոսը նմանվում է դասատուի, թեև բարեխիղճ ուսուցիչներն էլ այսօր դասագրքային նյութով չեն սահմանափակվում: Բայց սա դեռ ամբողջը չէ: Բուհի, առավել ևս տնտեսագիտական բուհի դասախոսը պետք է նաև հետազոտող լինի: Դա նշանակում է, որ նա չպետք է միայն մեկնաբանի սոցիալ-տնտեսական երևույթները, այլ պետք է կանխատեսի զարգացումները, բացահայտի դրանց վրա ազդող գործոնները և մշակի կառավարման համակարգ ու մեթոդաբանություն: Պետք է խոստովանել, որ նշեցինք բուհական հետազոտական համակարգին ներկայացվող միայն նվազագույն պահանջները, մինչդեռ, աշխարհն ավելի առաջ է գնացել, և այսօր առավել մրցունակ են դառնում, այսպես կոչված, հետազոտական համալսարանները: Աշխարհում այս համալսարանների թիվը դեռևս սահմանափակ է: Այսպես, առաջատար համարվող ԱՄՆ-ում այսօր ավելի քան 4000 համալսարան կա, որից դասական հետազոտական համալսարանի կարգավիճակ ունի մոտավորապես 260-ը: Կրթության համար դաշնային բյուջեով նախատեսված գումարի 95%-ն ուղղվում է դրանց: Ամենահայտնիներն են Հարվարդի, Տեխասի, Մասաչուսեթսի, Սթենֆորդի համալսարանները: Գերմանիայում կա ավելի քան 70 (ամենահայտնիները՝ Բեռլինի Հումբոլդի անվան, Բրեմենի, Յենի, Լայպցիգի համալսարանները և այլն), Մեծ Բրիտանիայում՝ 73 (Քեմբրիջ, Օքսֆորդ, Լոնդոնի Imperial College, Յորքի, Բրիսթոլի, Նոթինգհամի համալսարանները), Իսպանիայում՝ 41 (Մադրիդի, Սանտյագոյի, Բարսելոնայի, Կորդովայի համալսարանները) և այլն: Այդպիսի համալսարաններ ստեղծելը զգալի ներդրումներ և տևական ժամանակ է պահանջում: Բավական է նշել՝ Ռուսաստանում դեռևս 1-2 այդպիսի համալսարան կա, իսկ Իսրայելում միայն Թել Ավիվի հետազոտական համալսարանն է: Այնպես որ, եթե հետազոտական համալսարանի կարգավիճակի հասնելը մեզ համար շատ վաղ է, ապա համալսարանական հետազոտությունները զարգացնելը կենսական պահանջ է, քանի որ ձեզ հայտնի բուհերի հավատարմագրման գործընթացի առանցքային չափանիշներից մեկը բառացիորեն պահանջում է. «ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ»: Իսկ դա նշանակում է բավարարել հետևյալ չափորոշիչները.

ա. ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն,

բ. ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները,

գ. ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով,

դ. ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը,

ե. ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

Այստեղից հետևություն, որ ինչպես ներքին դրամաշնորհներով, այնպես էլ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում լայնամասշտաբ հետազոտական ծրագրերի իրականացումը, դրանց ռազմավարության և ընթացակարգերի մշակումը, որն իրականացվեց 2013 թ. ընթացքում, թող անհամեստ չհնչի, ՀՊՏՀ խորհրդի և ռեկտորատի կողմից անախադեպ շրջադարձային քայլեր էին: Անզեն աչքով էլ նկատելի է, որ հագեցած է մեր բուհի գիտական մթնոլորտը: Ըստ հետազոտական ծրագրերի՝ յուրաքանչյուր շաբաթ կազմակերպվող սեմինարներն ու գիտական բանավեճերը, Աղվերանում և Երևանում անցկացված գիտաժողովները, Եղեգնաձորի մասնաճյուղում կազմակերպված գիտագործնական սեմինարը, մագիստրոսական առաջին հետազոտական խմբի մեկնարկը, առաջիկայում նախատեսվող հետազոտական ծրագրերի հաշվետվությունների հրապարակային քննարկումն ու «Ամբերդ» մատենաշարով աշխատությունների հրապարակումը ասվածի խոսուն վկաներն են: Վերջապես,մեր ամենակարևոր խնդիրներից են հետազոտությունների արդյունքների ամփոփումն ու, ըստ շահառուների՝ կոնկրետ առաջարկների ներկայացումը, ինչպես նաև հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմների զարգացումը: Այնպես որ, անելիքները շատ են, սպասումները՝ մեծ:

-«««Ամբերդը» բուհական գիտության զարգացման արդիական համակարգ է». կմեկնաբանե՞ք «Ամբերդի» կարգախոսը:

-Գուցե մի փոքր հավակնոտ է այս կարգախոսը, բայց մեզ համար ուղեցույցային է: Ի՞նչ ենք պատկերացնում բուհական գիտության արդիական համակարգ ասելով: Թող կրկնություն չլինի, բայց դա առաջին հերթին դասախոս-գիտնական կարգավիճակի շեշտադրումն է, տվյալ ոլորտի գիտելիքահենք տնտեսության կայացմանը բուհական ներուժի ակտիվ ներգրավվածությունն ու հետազոտական և ուսումնական գործընթացների փոխկապակցված զարգացումը: Պետք է հատուկ շեշտադրել, որ ՀՊՏՀ-ն հետազոտություններին ուղղում է իր սեփական միջոցները և գիտնականին վճարում է ըստ արժանվույն: Հայաստանում գիտության ոլորտի, մեղմ ասած, շատ համեստ ֆինանսավորման համայնապատկերում դա, հիրավի, հեղափոխական քայլ է: Բայց նման վերաբերմունքը նաև պարտավորեցնող է: Չի կարելի առաջնորդվել բոլոր իրավիճակների համար օգտագործվող, երբեմն խունացած էջերից հաշվետվություն սարքելով: Չի կարելի որպես գիտական արդյունք հրամցնել իրականությունից հետ մնացած, ժամանակավրեպ մտքեր ու եզրակացություններ: Հիշենք Ե. Չարենցին. «Թե ուզում ես երգդ լսեն, ժամանակի շունչը դարձիր»: Ահա այս ոգով է ընտրված այդ կարգախոսը:

-Անցած շրջանում կենտրոնի կատարած աշխատանքները վերը ներկայացվեցին: Որպես մեկ տարվա գործունեության ամփոփում՝ ի՞նչ գնահատական կարող եք տալ, ի՞նչը կհատկանշեք:

-Մենք հիմա գտնվում ենք հաշվետվությունների ընդունման փուլում: Դիցուք, «Ամբերդ» կենտրոնի

շրջանակներում իրականացվող ծրագրերն սկսվել են տարվա կեսից, և այդ առումով «մեկ տարվա գործունեության ամփոփում» ձևակերպումը պետք է վերապահումով ընդունել: Ավելին, օրինակ «էկոլոգիական անվտանգություն» ծրագիրը ավելի ուշ է մեկնարկել: Այդուհանդերձ, 3 ուղղություններով իրականացվող 15 ծրագրերից մի մասով արդեն իսկ ունենք հետաքրքիր արդյունքներ: Այդ մասին են վկայում գիտական սեմինարներին ներկայացված զեկուցումները: Առաջիկայում «Ամբերդի» խորհրդատուների խորհուրդը սահմանված ձևաչափով կտա յուրաքանչյուրի գնահատականը և կներկայացնի եզրակացություն հետազոտական խմբի հետագա գործունեության վերաբերյալ:

- Խնդրում եմ՝ անդրադառնանք կենտրոնի՝ ապագային միտված ծրագրերին, ուղղություններին, հեռանկարներին, ինչու չէ, նաև հավակնություններին:

-Նախ գոհունակությամբ պետք է նշեմ, որ ՀՊՏՀ ղեկավարությունն առանձնահատուկ հետաքրքրություն է դրսևորում կենտրոնի նկատմամբ: Բուհի ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանը մեծապես կարևորում է հետազոտական գործունեությունը և անձամբ պարբերաբար քննարկում է կենտրոնի աշխատանքների ընթացքը, խնդիրները և ծրագրերը: Այդ դրական վերաբերմունքի լավագույն դրսևորումը ամենաարդիական աշխատանքային պայմանների տրամադրումն է «Ամբերդին»: Բարձրաճաշակ նորոգումից ու կահավորումից հետո կենտրոնի հարկաբաժինն աչք է շոյում գեղագիտական ձևավորումով և էրգոնոմիկական լուծումներով: Հիմա անդրադառնանք ապագայի ծրագրերին: Ի՞նչ խոսք, հետազոտական համակարգը խիստ դինամիկ համակարգ է և մշտապես զարգացման կարիք ունի, ուստի հեշտ չէր միանգամից ձևակերպել կենտրոնի հայեցակարգը: Ինչպես նշեցի, պարբերաբար քննարկումներ եմ ունեցել պարոն Կ. Աթոյանի, գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Գ. Վարդանյանի, ինչպես նաև փորձառու պրոֆեսորներ Յու. Սուվարյանի, Գ. Կիրակոսյանի, Ս. Դավոյանի, Մ. Մելքումյանի, Հ. Աղաջանյանի, Ս. Գևորգյանի, Ա. Մարկոսյանի և հետազոտական ծրագրերի բոլոր ղեկավարների հետ: Մեր աշխատակազմն ուսումնասիրել է հանրապետության և արտերկրի նմանատիպ կենտրոնների փորձը, օգտվել ենք ՀՀ գիտության պետական կոմիտեի նյութերից և այս պահին ձևավորել ենք կենտրոնի զարգացման տեսլականը: Ներկայացնեմ շատ համառոտ.

1. Ստեղծել բարձր վարկանիշ, ինքնուրույն դիմագիծ ու ճանաչում ունեցող հետազոտական կառույց, որը բացի գիտական գործունեությունից, վստահություն ձեռք կբերի երկրի սոցիալ-տնտեսական քաղաքականությունը կանխորոշող նորմատիվ ակտերի մշակման աջակցության և փորձաքննության գործում:

2. Հետազոտական գործունեությունը ծավալել երեք հիմնական ուղղություններով՝

ա) մրցութային կարգով նպատակային ծրագրերի իրականացում,

բ) մագիստրոսական և ասպիրանտական կազմի հետազոտական ծրագրերի իրականացում,

գ) ներքին և արտաքին դրամաշնորհներով հետազոտական ծրագրերի իրականացում:

3. Հետազոտական գործունեության միջազգայնացում: Արդեն իսկ համագործակցության հիմքեր են դրվել Լոնդոնի բիզնեսի դպրոցի հետ, իսկ մագիստրոսական կազմից ընտրված հետազոտական խումբն ուսումնասիրում է Հարվարդի, Օքսֆորդի, Կոլումբիայի և այլ առաջատար համալսարանների «ուղեղային կենտրոնները» և փորձում գործնական կապեր հաստատել:

4. Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցում: Ներկայում ուսանողները մասնակցում են հետազոտական ծրագրերի սեմինարներին, հետազոտական աշխատանք կատարում ՈՒԳԸ շրջանակներում, բայց մենք հավակնում ենք ուսումնական և հետազոտական գործունեության մերձեցման ավելի կատարյալ մեխանիզմների կիրառության: Այս ասպարեզում փնտրտուքը շարունակվում է:

5. Հիմնական շահառուներին հետազոտության արդյունքների փոխանցման և առևտրայնացման գործուն մեխանիզմների կիրառություն:

Ինչ վերաբերում է մոտակա ծրագրերին, ապա մեր առաջնահերթ խնդիրն է մինչև տարեվերջ կազմակերպել գործող ծրագրերի հաշվետվությունների ընդունումն ու գնահատումը, ինչպես նաև կենտրոնի խորհրդատուների խորհրդին ներկայացնել նոր և շարունակվող ծրագրերի հայտերն իրենց նախահաշիվներով:

Հարցազրույցը՝
ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

Համալսարանի նվիրյալն ու «Տնտեսագետի» ջերմեռանդ ընթերցողը

Ամսագրի հերթական թարմ համարը լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժին հասնելուն պես սկսում ենք բաշխել: Համալսարանի ղեկավարության օրինակները տալուց հետո խոշոր խմբաքանակներն ուղևորվում են ֆակուլտետների դեկանատներ, որ վայրկյան առաջ հասնեն ուսանողներին, այնուհետև առաքվում են ամբիոնների, բաժինների օրինակները, և երբեք չենք մոռանում մեր սիրելի հեղինակներին, հերոսներին... Սակայն կա մի խումբ էլ, որին ոչ միայն չենք մոռանում, այլ անհամբերությամբ ցանկանում ենք հնարավորինս շուտ նրան հասցնել նոր համարը և ստանալ արձագանքներ:

Մեր լավագույն ընթերցողները... Նրանց խորհուրդները մեզ ուժ են տալիս, գովասանքը թևավորում է, դիտողությունը՝ զգոն պահում: Հետադարձ կապի միջոցները որոնման կարիք չունեն. մեր ընթերցողներն ուղիղ գալիս են լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժին, զանգահարում են, մեկնաբանություն թողնում ֆեյսբուքյան էջում կամ էլեկտրոնային նամակ հղում:

2013 թվականի հերթական համարը՝ սեպտեմբեր-հոկտեմբերյանը, նոր-նոր էինք բաշխել ու հնչեց հեռախոսազանգը.

- Ապրե՛ք, շատ լավ համար է, ծայրից ծայր կարդացի, հապա մի բաց 28-րդ էջը և վերջից երրորդ տողը կարդա, չես կարծո՞ւմ, որ....

Պրոֆեսոր Լենդրուշ Ղալումյանն է: Նրա զանգին և հատկապես նոր ամսագրի նրա ամեն անդրադարձին մենք սիրով ենք սպասում: Անկեղծ հետաքրքրվածությամբ նյութերի շուրջ ծագած հարցեր է ուղղում հեղինակներին, իր կարծիքը հայտնում, դրվատում կամ զգուշորեն դիտողություն անում:

Եվ ամեն նոր համարին հաջորդող այս հեռախոսազանգը իրոք սպասված է, որովհետև մեծավաստակ պրոֆեսոր, մեր բուհի մեծ նվիրյալ, «Տնտեսագետի» լավագույն ընթերցող Լենդրուշ Ղալումյանի կարծիքը մեզ համար թանկ է ու արժեքավոր, քանի որ նա ոչ միայն ընթերցող է, այլև խորհրդատու, աջակից ու բարեկամ:

-Չեմ ուզում երկարացնել, զբաղված կլինեք, հապա մի 37-րդ էջի 2-րդ պարբերությունն էլ նայիր, ոնց որ....

Եվ այսպես հատ-հատ անդրադառնում է բոլոր նյութերին ու խոստովանում, որ սոսկ ընթերցող չէ, այլ բարի քննադատ:

-Դժվար գործ եք անում, բայց շնորհակալ: Հանրապետական մամուլն էլ եմ էսպես ընթերցում, որ եկա, կբերեմ նշումներով հանդերձ, կտեսնեք:

Իսկապես, բացառիկ է, երբ տարիների իմաստունությունն ու փորձն իր ուսերին տանող մարդը չի խոնարհվում դրանց ծանրությունից, անանց լավատեսությամբ, սիրով ու եռանդով իր գիտելիքն է փոխանցում, հարուստ կենսափորձը նվիրաբերում, խոսում ու խորհրդակցում է հավասարի պես, ընկերոջ պես և հպարտ է քո հաջողությամբ, մտահոգ՝ քո սխալով: Դա էլ քիչ է, ամեն հանդիպմանը անվանական հարցուփորձ է անում բոլոր հին ու նոր աշխատակիցներից, հիշում, պատմում մի խոսուն ու պայծառ դրվագ ու հեռանում:

Շուրջ չորս տասնամյակ է՝ Լենդրուշ Ղալումյանն աշխատում է մեր համալսարանում: Թերևս, աշխատել բառը չի արտահայտում նրա դերակատարությունը մեր բուհի կյանքում: Նա մեր համալսարանի հիմնասյուներից է: Տասնամյակներ առաջ, երբ կազմավորվում էր տնտեսագիտականը, տնտեսագիտության մեջ արդեն իսկ խոսք ասած և սերունդների կրթության գործը ստանձնած գիտնական մանկավարժը հավատով ու նվիրումով իր գործընկերների հետ դրեց այս կրթօջախի հիմնաքարը, քայլ առ քայլ առաջ ընթացավ՝ հավատալով նրա զարգացմանը, բարձր առաքելությանը: 1975 թվականին Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտում ստանձնեց վարկի և դրամաշրջանառության ամբիոնի վարիչի պաշտոնը: 1995 թվականին դարձավ համալսարանի ֆինանսներ և վարկ ամբիոնի պրոֆեսոր: Երկար տարիներ ղեկավարելով համալսարանի կուսակցական կոմիտեն՝ Լենդրուշ Ղալումյանը անում էր ամեն հնարավորը՝ ստեղծելու համար ամուր նյութատեխնիկական բազա, կահավորված լսարաններ, լաբորատորիաներ: Այսօր նա ՀՊՏՀ ռեկտորատում պատերազմի, զինված ուժերի և աշխատանքի վետերանների խորհրդի նախագահն է:

Իր սիրելի համալսարանը ծաղկուն ու առաջավոր տեսնելու ցանկությունը, երիտասարդի խանդավառությամբ նրա հաջողություններին հետևելու մեծ մղումը նրան մասնակից են դարձնում տնտեսագիտական մայր համալսարանի նորօրյա փոփոխություններին, և ամեն այցելությամբ մեր պատկառելի գործընկերը նվիրաբերում է իր գիտելիքը, փորձն ու մարդասիրությունը: Համալսարանի ամեն ձեռքբերումը՝ ուսումնական գործընթացից մինչև հարազատ կոլեկտիվի ամեն անդամի առաջընթացն ու բարօրությունը, նա համարում է իր անձնական հաջողությունը:

Եվ շարունակում է լինել «Տնտեսագետի» անաչառ ու բարյացակամ ընթերցողը, որի խոսքին սպասում ենք, որի գնահատականը մեզ համար թանկ է:

Մենք խոնարհվում ենք հարգելի Լենդրուշ Ղալումյանի՝ մեծ մտավորականի ու ազնվազարմ մարդու վաստակի ու մարդկային վսեմ հատկանիշների առջև, մաղթում ենք առողջություն և սպասում նորանոր զանգերի:

ԱՐՄԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺ Է...

Նոյեմբերի 10-ին և 17-ին նշվեցին Երիտասարդության և Ուսանողության միջազգային օրերը: Հայաստանում արդեն մի քանի տարի է՝ նշվում են այս տոները՝ երիտասարդության կյանքն ավելի բազմաբովանդակ դարձնելու և ուսանողության խնդիրները մշտապես ուշադրության կենտրոնում պահելու նկատառումով: Որպես երիտասարդության օր՝ նշվում է նաև օգոստոսի 12-ը, որը հռչակվել է 1999 թվականին՝ ՄԱԿ-ի կողմից: 1945 թվականի նոյեմբերի 10-ին Լոնդոնում տեղի է ունեցել համաժողով, և ժողովրդական երիտասարդական ֆեդերացիան պայքար է սկսել ֆաշիզմի դեմ, ուստի ընդունված է նոյեմբերի 10-ը համարել Երիտասարդների օր: 1941 թվականին եվրոպական տարբեր երկրների ուսանողներ Լոնդոնի ուսանողական միջազգային խորհրդում որոշել են նոյեմբերի 17-ը նշել որպես Ուսանողության միջազգային օր՝ հիմքում ունենալով ֆաշիզմի դեմ պայքարը:

Թեև տոների հիմքում տխուր պատմություն է, սակայն այսօր արդեն դրանք նոր իմաստ են ձեռք բերել և նշվում են որպես ուսանողների համախմբման օր՝ խորհրդանշելով երիտասարդություն, ուժ, եռանդ, գիտելիք:

Հիրավի... երիտասարդությունն ուժ է, նպատակների, երազանքների ու ձգտումների իրագործման լավագույն տարիքը. պատահական չէ, որ այն ընդունված է անվանել «ծաղիկ հասակ», երբ մարդը կըրթվում, զարգանում, փթթում է՝ բոլոր առումներով: Գարեգին Նժդեհն ասել է «Ես ճշմարտություններ գիտեմ, որոնցից մեկն ասում է՝ ուզում ես գուշակել, տեսնել մի ժողովրդի ապագան, նայի՛ր նրա երիտասարդությանը»:

Երիտասարդության և ուսանողության ներկայացուցիչները ևս գիտակցում են իրենց կարևորությունն ու, այսպես ասած, առավելությունը (տարիքը): Դրանում համոզվել ենք՝ նրանցից ոմանց հետ զրուցելով:

ՀՊՏՀ ուսանողական խորհրդի նախագահ Սևակ Խաչատրյանը ակտիվ, նպատակասլաց երիտասարդության վառ ներկայացուցիչ է, ով թեև արդեն դասավանդում է բուհում (ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու), սակայն, ղեկավարելով ուսխորհուրդը, ամենամոտն է կանգնած ուսանողությանն ու երիտասարդությանը: Հիշում է՝ երբ 2004 թվականի սեպտեմբերի 1-ին առաջին անգամ ոտք դրեց բուհ ուսանողի կարգավիճակով, ընդամենը 16 տարեկան էր: «Կյանքի ամենամեծ ձեռքբերումը համարում էի բուհ ընդունվելը: Ասեմ, որ սովորական «ռայոնցի» երիտասարդ էի, առանձնահատուկ ոչնչով չէի տարբերվում իմ ընկերներից, համակուրսեցիներից... Ըստ իս՝ երիտասարդությունը մի անվերջանալի հեքիաթ է, որը բաժին է ընկնում յուրաքանչյուր մարդու: Երիտասարդությունը մի ժամանակահատված է, երբ, այսպես ասած, կարող ես սովորել, սիրահարվել, հիասթափվել, ինչու ոչ, նաև սխալվել և հենց այդ նույն սխալներից դասեր քաղել: Կարծում եմ, որ մարդու կայացման մեջ իր ուրույն դերն ունեն ուսանողական տարիները, քանզի մարդը հենց բուհում է ինքնահաստատվում որպես լիարժեք քաղաքացի, իրեն զգում հասարակության լիիրավ անդամ, ուսանողական տարիներին են ձևավորվում նրա աշխարհայացքն ու աշխարհընկալումը: Երիտասարդի ապագան և կարիերան ձևավորվում են հենց ուսանողական տարիներից և պայմանավորված են նախընտրած մասնագիտությամբ, լավ սովորելով և իհարկե ակտիվ լինելով: Համոզված եմ, որ ակտիվ երիտասարդը երբեք չի կարող ունենալ վատ ապագա, քան զի հասարակության չարիքները ծնվում են հենց ան-

տարբերությունից: Իսկ ինչ վերաբերում է ուսանողական խորհրդին, ապա ասեմ, որ դա մի անփոխարինելի կյանքի դպրոց է»:

Իրար հաջորդող երկու տոների առիթն օգտագործելով՝ շարունակեցինք մեր զրույցը ՀՊՏՀ մյուս ուսանողների հետ: ՀՊՏՀ-ականներին խնդրեցինք պատասխանել այն հարցին, թե ի՞նչ են հասկանում երիտասարդություն և ուսանողություն ասելով, ինչպիսի՞ն են պատկերացնում իրենց ապագան:

Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանող Արմինե Գևորգյանը ևս իրեն համարում է ՀՊՏՀ ակտիվ ուսանող, երիտասարդությունն ընկալում է իր բոլոր գույներով.

«Ուսանող և երիտասարդ լինելը, ինչ խոսք, առավելություն է: Երիտասարդություն ասելով հասկանում եմ էներգիա, եռանդ ու ձգտումներ, ուսանող ասելով՝ համալսարանս՝ ՀՊՏՀ-ն, գիտելիք, ընկերներ: Ուսանող լինելը մեկ հիմնական նպատակ ունի՝ մասնագիտություն ձեռք բերել, լավ մասնագետ դառնալ, կարիերա ստեղծել: Անչափ շատ եմ սիրում ֆակուլտետս, դասախոսներիս: Իմ ֆակուլտետում ինձ պաշտպանված եմ զգում, պատահական չէ, որ մագիստրոսական կրթությունս որոշեցի շարունակել նույն մասնագիտությամբ:

Ընտրել եմ այնպիսի մասնագիտություն, որի համար իսկապես շատ ուրախ եմ, և որ ամենակարևորն է՝ այն շատ պահանջված է. գրեթե ամեն տեղ էլ հաշվապահի անհրաժեշտություն կա: Այժմ մասնագիտական գիտելիքներս և հմտություններս կատարելագործելու ճանապարհին եմ, սովորում եմ մագիստրատուրայում, ունեմ մի շարք նպատակներ ու ձգտումներ: Հնարավոր է՝ ուսումս կատարելագործեմ արտերկրում, սակայն իմ ապագան տեսնում եմ հենց իմ երկրում, լցված եմ հույսով ու հավատով»:

Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանող Լիանա Ղալթաղչյանը երիտասարդությունը մեկ բառով անվանեց «կյանք», ուսանողությունը՝ «երկրի ապագա»: Նա նույնպես ապագան տեսնում է հայրենիքում:

Շատ երիտասարդների համար նպատակասլացությունն այն հիմնական այցեքարտն է, որը պայմանավորում է նրանց հաջողություններն ու լավ ապագայի հանդեպ արժանահավատությունը: Մեր ուսանողները նույնպես կարծում են, որ երիտասարդը պետք է լինի հաստատակամ. նրանք տարեկիցներին մաղթում են հայրենասիրություն, հաստատուն կամք, որպեսզի երբեք հետ չկանգնեն իրենց երազանքի ճանապարհից, չդադարեն երազել:

Այսպիսի լավատեսական տրամադրություններով «Տնտեսագետը» մաղթում է, որ այսօրվա երիտասարդը, ուսանողը լինի ոչ թե սոսկ այս անունների կրողը, այլ դրանց արժանի անհատ, ով պատրաստ է սովորելու, կրթվելու, զարգանալու, ունակ՝ իր առջև նպատակներ դնելու և դրանց հետամուտ լինելու, գեղեցիկն իրագործելու, իր հայրենիքը սիրելու և շենացնելու, անդուլ աշխատելու՝ համոզված լինելով, որ այսօրվա փութկոտությունը, գիտելիքն ու կրթությունը վաղվա հաջողությունների, կայուն և բարեկեցիկ կյանքի լավագույն երաշխավորն են:

Երիտասարդությունն ուժ է, դու ունես այդ ուժը, կիրառի՛ր…

Հ.Գ. *2015 թ. Երևանը կդառնա Եվրոպական ուսանողության մայրաքաղաք:*

ՆԱՆԵ ԱՎԱՆԵՍՅԱՆ

«Ուսանողական աշուն - 2013»

«Ուսանողական աշուն - 2013» փառատոնի շրջանակներում համալսարանում տեղի ունեցան մի շարք մարզական ու մշակութային միջոցառումներ: Նոյեմբերի 12-ին շախմատի միջֆակուլտետային մրցաշարում հաղթող դարձավ ֆինանսական ֆակուլտետի թիմը, 2-րդ հորիզոնականում ՀՀ և աուդիտի ֆակուլտետն էր, 3-րդում՝ կառավարումը: Սեղանի թենիս մարզաձևում 1-ին տեղը գրավեց կառավարման ֆակուլտետը, 2-րդը՝ ֆինանսական, 3-րդը՝ հաշվապահական հաշվառման և աուդիտի:

«Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» միջֆակուլտետային առաջնությունում 1-ինը ՀՀ և աուդիտի ֆակուլտետի թիմն էր, 2-րդը՝ կառավարման, 3-րդը՝ ՏԿ և ՄՏՀ:

Փառատոնի պաշտոնական բացումը նոյեմբերի 19-ին տեղի ունեցավ ՀՊՏՀ մարզադահլիճում՝ ռեկտոր Կորյուն Աթոյանի մասնակցությամբ: Նույն օրը տեղի ունեցավ ֆուտբոլի մրցաշար, որի հաղթող դարձավ մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետը:

Նոյեմբերի 27-28-ին ելույթ ունեցան և մրցեցին ՈւՀԱ-ականները, հաղթող ճանաչվեց ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետը: Փառատոնն ավարտվեց տոնական համեգով, մրցանակներ հանձնվեցին փառատոնի հաղթողներին: Պարի մրցույթում 1-ինը ֆինանսական ֆակուլտետն էր, 2-րդը՝ ՀՀ և աուդիտի, 3-րդը՝ մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման: Երգի մրցույթում 1-ինը ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետն էր, 2-րդը՝ ՀՀ և աուդիտի, 3-րդը՝ ինֆորմատիկայի և վիճակագրության: «Լավագույն տեսահոլովակ» անվանակարգին արժանացավ կառավարման, «Լավագույն երաժշտական համար» անվանակարգին՝ ՀՀ և աուդիտի ֆակուլտետը: Երկու՝ «Հանդիսատեսի համակրանք» և «Լավագույն հումոր» անվանակարգերում մրցանակ ստացավ ֆինանսական ֆակուլտետը: Լավագույնը ճանաչվեց ՀՀ և աուդիտը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՁԱՆԿԱՐ

*Տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ **Սամվել Գրիգորյանի** հեղինակային «Տնտեսական խճանկար» խորագիրն ինչպես միշտ հայաստանյան և միջազգային տնտեսական նորությունների անմիջական արձագանքն է՝ հետաքրքրական և ուսանելի վերլուծություններով, փաստերով, ցուցանիշներով:*

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆՈՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Վերջերս Հայաստանի Հանրապետության Կառավարությունը օրինագիծ է մշակել «Զբաղվածության մասին» նոր օրենքի վերաբերյալ, որի նորույթներից մեկն այն է, որ այսուհետ վերացվելու է ամսական 18 հազար դրամ գործազրկության նպաստի տրամադրումը և դրա փոխարեն առաջարկվում է նոր հայեցակարգ, որի մի քանի դրույթներին կփորձենք հակիրճ անդրադառնալ և մատչելի ձևով ներկայացնել:

Գործազրկության կարգավորման նոր մոտեցումներին անցնելու որոշման հիմնավորումներից է այն, որ ըստ Կառավարության ստուգումների ու գնահատումների՝ պարզվել է, որ գործազրկության նպաստի 94%-ը փոշիացվել է և բուն հասցեատերերին չի հասել: Այս առիթով նշենք, որ նման երևույթները դեռ վաղուց բացահայտվել են նաև Արևմուտքի զարգացած երկրներում: Այս և այլ սոցիալական նպաստների բաշխման անարդյունավետությունը ժամանակակից տնտեսագիտության մեջ ստացել է սոցիալական օգնության «ծակ դույլ» անվանումը, որից տրամադրվող օգնությունների, նպաստների անխուսափելի կորուստը հետազոտել է ամերիկացի տնտեսագետ Ա. Օուքենը և կորուստները գնահատել է ավելի քան 70 %:

Մեր հանրապետությունում գործազրկության նպաստների այս 94% կորուստը կանխելու հիմնավորմամբ էլ Կառավարությունը առավել նպատակահարմար է համարում այսուհետ գործազրկության նպաստների համար նախատեսված գումարը (որը 2014 թ. պետբյուջեի նախագծում 1,7 մլրդ դրամ է) ուղղել գործազուրկների վերաորակավորման և նոր մասնագիտությունների ուսուցման ծրագրերի իրականացմանը: Այս պարագայում խնդիրն այն չէ, որ ներկայիս 18 հազար դրամ գործազրկության նպաստը երկու անգամ փոքր է հանրապետությունում ընդունված նվազագույն պարենային զամբյուղից և երեք անգամ՝ նվազագույն կենսապահովման, սպառողական զամբյուղից, որ ուսուցման ծրագրերում ավելի քիչ մարդ է նախատեսվում ընդգրկել (7200), քան ներկայիս նպաստառուներն են (14000): Հիմնական խնդիրը զբաղվածության և գործազրկության կարգավորման նոր հայեցակարգի արմատավորումն է:

Նոր հայեցակարգի հիմնական դրույթը պասիվ զբաղվածության քաղաքականությունից անցումն է ակտիվ քաղաքականությանը, այսինքն՝ անցումն է «գործազուրկին որպես օգնություն ոչ թե ձուկ, այլ կարթ տալ, որպեսզի այդ ձուկն ինքը բռնի» սկզբունքին: Այսուհետ նպաստի փոխարեն գործազուրկին կառաջարկվի անցնել վերաորակավորման կամ նոր մասնագիտության ուսուցման դասընթաց: Ընդ որում, ուսուցման ողջ ընթացքում գործազուրկը կրթաթոշակ կստանա նվազագույն աշխատավարձի 50 %-ի չափով կամ 22,5 հազար դրամ: Ավարտելուց հետո գործազուրկը պարտավոր է 6 ամսվա ընթացքում աշխատանքի տեղավորվել և աշխատել ոչ պակաս քան 6 ամիս:

Այս ծրագրերի իրականացումը վերահսկվելու է «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության կողմից, որին մեծ լիազորություններ են տրված. կարող է չեղյալ համարել գործազուրկի կարգավիճակը, եթե գործազուրկը կրկնակի հրաժարվել է առաջարկվող հարմար աշխատանքից, կրկնակի անհարգելի պատճառով չի ներկայացել, որպեսզի աշխատանքի տեղավորվի, ինչպես նաև, եթե ուսուցման դասընթացն անցնելով զբաղվածության ծրագրով, հրաժարվել է առաջարկվող հարմար աշխատանքից:

Կարծում ենք՝ զբաղվածության կարգավորման այս նոր հայեցակարգը համահունչ է ժամանակակից տնտեսագիտության սկզբունքներին և հետևողականորեն կիրառելու դեպքում կդրսևորի իր արդյունավետությունը նախորդ համակարգի համեմատ:

ԻՆՉՊԻՍԻ՞Ն ԿԼԻՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ

2014 թվականին Հայաստանի պետական բյուջեի ծախսային մասը կկազմի 1 տրլն 246 մլրդ դրամ (մոտավորապես 3,0 մլրդ դոլար), եկամտային մասը նախատեսվում է 1 տրլն 136 մլրդ դրամ (2,7 մլրդ դոլար): Պետբյուջեի դեֆիցիտը կամ պակասուրդը կկազմի 110 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 2,3%-ը:

Պետբյուջեի եկամուտների մոտավորապես 96%-ը կձևավորվի հարկերից և տուրքերից, որոնց ծավալը ՀՆԱ-ի նկատմամբ կկազմի մոտ 23 %: Կառավարությունը կանխատեսում է նաև 5,2 % տնտեսական աճ և 4,5% գնաճ:

Ի՞ՆՉ Է «ԴՈՒԻՆԳ ԲԻԶՆԵՍԸ» ԵՎ ԻՆՉՊԵ՞Ս Է ԱՅՆ ԳՆԱՀԱՏՎՈՒՄ

«Դուինգ բիզնեսը» (doing business) կամ «գործարարությամբ զբաղվելը» Համաշխարհային բանկի (ՀԲ) կողմից տարեկան հրատարակվող մի սանդղակ է, որտեղ երկրները ներկայացվում են ըստ «գործարարությամբ զբաղվելու գրավչության» մակարդակի: ՀԲ-ի «Doing Business-2014» զեկույցի համաձայն հրապարակած սանդղակում Հայաստանը գործարարության գրավչությամբ աշխարհի 189 երկրների շարքում զբաղեցնում է 37-րդ տեղը, որը լավ ցուցանիշ կարելի է համարել: Համեմատության համար նշենք, որ Վրաստանը 8-րդ տեղում է: Կարծում ենք՝ մեր ընթերցողներին կհետաքրքրի, թե ինչպես է հաշվարկվում այս ցուցանիշը և որն է նրա մեթոդաբանությունը: «Դուինգ բիզնեսի» գործակիցը որոշելու համար, ըստ Համաշխարհային բանկի մեթոդաբանության, սահմանված են 10 ցուցանիշներ, որոնցով գնահատվում է, թե որ երկրում ինչպիսի պայմաններ գոյություն ունեն գործարարությամբ զբաղվելու համար: Այդ ցուցանիշներն են.

1. Ձեռնարկության գրանցումը
2. Սեփականության գրանցումը
3. Ներդրողի պաշտպանությունը
4. Հարկումը
5. Միջազգային առևտուրը
6. Պայմանագրերի կատարման ապահովումը
7. Էներգահամակարգին միացումը
8. Շինարարության թույլտվությունը
9. Ձեռնարկության լուծարումը
10. Վարկավորումը:

Ահա այս ցուցանիշներով էլ կատարվում է յուրաքանչյուր երկրի բիզնես միջավայրի, նրա գրավչության գնահատումը:

2017 Թ. ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՑԵԼՈՂ ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ԹԻՎԸ ԿՀԱՍՆԻ 3 ՄԻԼԻՈՆԻ

Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի (ՀԱՄՀ) կանխատեսումներով՝ «Զբոսաշրջային միջանցքի զարգացման» ծրագրի մշակման և գործարկման շնորհիվ, որի մեկնարկը նախատեսվում է 2015 թ., Հայաստանի զբոսաշրջիկների թիվը 2017 թ. կհասնի 3 մլն մարդու՝ ներկայիս 678 հազարի փոխարեն: Նաև կանխատեսվում է, որ յուրաքանչյուր զբոսաշրջիկ միջին հաշվով շաբաթական կծախսի 800 դոլար:

ՀԱՅԱՍՏԱՆԸ 6-ՐԴ ՏԵՂՈՒՄ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐՈՎ

Դեպի ԱՊՀ երկրներ 2013 թ. առաջին կիսամյակում Ռուսաստանից անհատական տրանսֆերտներ են փոխանցվել 9,86 մլրդ դոլարի չափով, որը 22,3%-ով գերազանցում է նախորդ տարվա համանման ցուցանիշը:

«Ռուսաստանի Բանկի» հաղորդագրության համաձայն՝ այդ դրամական փոխանցումներն ունեցել են հետևյալ կառուցվածքը:

1. Ուզբեկստան-3,4 մլրդ դոլար
2. Ուկրաինա-1,6 մլրդ դոլար
3. Տաջիկստան-1,6 մլրդ դոլար
4. Մոլդովա-887 մլն դոլար
5. Ղրղզստան-870 մլն դոլար
6. Հայաստան-616 մլն դոլար
7. Ադրբեջան-524 մլն դոլար
8. Բելառուս- 426 մլն դոլար
9. Ղազախստան-152 մլն դոլար
10. Թուրքմենստան- 14 մլն դոլար

Մեր ընթերցողներին հիշեցնենք, որ Արժույթի միջազգային հիմնադրամի գնահատումներով՝ արտաքին մասնավոր տանսֆերտների 10%-ով ավելացումը Հայաստանում կարող է ապահովել ՀՆԱ-ի 0,4% աճ, որը որոշակիորեն պայմանավորված է երկրում ամբողջական պահանջարկի ավելացմամբ:

Ո՞Ր ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԵՆ ԱՎԵԼԻ ԱՇԽԱՏԱՍԵՐ

Աշխատանքի միջազգային կազմակերպությունը պարբերաբար զեկույց է հրապարակում, որտեղ նշվում է, թե աշխարհի որ երկրների քաղաքացիներն են ամենից շատ աշխատում: Պարզվում է, որ ամենաշատ ժամանակն իրենց աշխատավայրերում անց են կացնում ԱՄՆ-ի քաղաքացիները: ԱՄՆ-ում աշխատանքային ժամանակի տարեկան միջին տևողությունը մոտավորապես 1800 ժամ է: Համեմատության համար նշենք, որ աշխարհի ամենաբարեկեցիկ երկրներից մեկը համարվող Նորվեգիայում այդ ցուցանիշը 1400 է, Ֆրանսիայում՝ 1560, Ճապոնիայում, Ավստրալիայում, Կանադայում՝ 1700, Անգլիայում՝ 1550, Գերմանիայում՝ 1300 ժամ:

Եթե ԱՄՆ-ի քաղաքացիները աշխատած ժամերի առումով բացարձակ առաջատար են զարգացած երկրների շարքում, ապա Չինաստանում, Հարավային Կորեայում, Մալայզիայում տարեկան աշխատաժամանակը միջին հաշվով 2200 ժամ է կազմում: Սակայն հատկանշական է, որ այսքան շատ աշխատելով, այս երկրների աշխատողները ամերիկացիների աշխատանքի արդյունքի միայն 20%-ն են կարողանում ստեղծել, այսինքն՝ աշխատանքի արտադրողականությունը մոտավորապես 5 անգամ պակաս է ԱՄՆ-ի համեմատ: Այսպես, ամերիկացին տարեկան միջինը 64 հազար դոլարի արտադրանք է տալիս, հոլանդացին՝ 55 հազար դոլարի, մինչդեռ, Չինաստանում այդ ցուցանիշը կազմում է ընդամենը 13 հազար դոլար:

ՀԱՐԿԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Աշխարհի տարբեր երկրներում հարկադրույքները տարբեր են և պարբերաբար փոփոխությունների են ենթարկվում, որոնց արդյունքում փոփոխվում է նաև ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցությունը: Բրիտանական KPMG խորհրդատվական ընկերությունն իր դիտարկումների արդյունքում եզրակացնում է, որ պետությունները մի կողմից ձգտում են բարձրացնել անուղղակի հարկերը՝ բյուջեի եկամուտներն ավելացնելու նպատակով, մյուս կողմից էլ փորձում են նվազեցնել ուղղակի հարկերը (շահութահարկը, եկամտահարկը)՝ ներդրումները խթանելու համար: Այս առիթով հետաքրքրական է իմանալ, թե ինչպիսին են ուղղակի և անուղղակի միջին հարկային դրույքաչափերը տարբեր աշխարհամասերում, երկրների խմբերում և առանձին երկրներում, որի համար ներկայացնում ենք հետևյալ աղյուսակը.

Տարածաշրջան	Ուղղակի հարկեր (շահութահարկ)	Անուղղակի հարկեր (ավելացված արժեքի հարկ)
Աֆրիկա	29%	15%
Հյուսիսային Ամերիկա	33%	5%
Ասիա	23%	12%
Եվրոպա	21%	20%
Լատինական Ամերիկա	28%	13%
Օկեանիա	29%	13%
Եվրամիություն	22%	21%
ՏՀՋԿ (Տնտ. համագործակ. և զարգ. կազմակերպ.)	25%	19%
Աշխարհ	24%	15%

Առանձին երկրներում հարկային դրույքաչափերը նույնպես զգալի տարբերվում են միմյանցից: Օրինակ՝ Արաբական Միացյալ Էմիրություններում շահութահարկը 55% է, ԱՄՆ-ում՝ 40%, Ճապոնիայում՝ 38%, Մոնտենեգրոյում՝ 9%, Սերբիայում, Կիպրոսում, Պարագվայում, Քաթարում՝ 10%: Անուղղակի հարկերի ամենաբարձր դրույքաչափեր են սահմանված Հունգարիայում՝ 27%, Շվեդիայում, Դանիայում, Նորվեգիայում, Խորվաթիայում՝ 25%:

ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) վերջերս հրապարակած «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» զեկույցի տվյալներով՝ 2012 թ. աղքատության մակարդակը Հայաստանում կազմել է 32,4%՝ 2011 թ. 35%-ի դիմաց: Այսինքն՝ Հայաստանում 2012 թ. տվյալներով՝ աղքատ է համարվում 980 հազ. մարդ՝ նախորդ 2011 թ. 1,1 մլն մարդու դիմաց: Այլ կերպ ասած՝ աղքատության մակարդակը 2012 թ. Հայաստանում նվազել է 2,6%-ով, բայց և այնպես այն դեռևս բավականին բարձր է, հատկապես, երբ այն համեմատում ենք այլ երկրների հետ: Այսպես, Համաշխարհային բանկի տվյալներով՝ աղքատության մակարդակը Վրաստանում 27% է, Ադրբեջանում՝ 15%, իսկ Ռուսաստանում՝ 11%:

Հայաստանում 32,4% աղքատ բնակչությունից 13,5%-ը կամ 408 հազար մարդ համարվում է շատ աղքատ և 2,8%-ը կամ 85 հազար մարդ՝ ծայրահեղ աղքատ: Սովորաբար աղքատության ցուցանիշը հաշվարկվում է նվազագույն սպառողական զամբյուղով, իսկ ծայրահեղ աղքատությունը՝ նվազագույն պարենային զամբյուղով: Աղքատության մակարդակը գնահատելու համար հիմք են ընդունվել հետևյալ ցուցանիշները.

1.աղքատության վերին շեմը 2012 թ. ընդունվել է 37 044 դրամ (92,2 դոլար) ամսական մեկ չափահասի հաշվով (այդ ցուցանիշը 2008 թ. կազմել է 29 903 դրամ կամ 99, 67 դոլար),

2.աղքատության ստորին շեմը 2012 թ. համար ընդունվել է 30 547 դրամ կամ 76 դոլար (2008-ին՝ 24 388 դրամ կամ 81,2 դոլար),

3. ծայրահեղ աղքատության շեմն ընդունվել է 21 732 դրամ (54,1 դոլար), որը 2008 թ. եղել է 17 644 դրամ (58,8 դոլար):

Անհրաժեշտ է նշել այն հանգամանքը, որ աղքատության մակարդակը գնահատվել է ոչ թե ըստ եկամուտների մակարդակի, այլ ըստ սպառման մակարդակի, որը համաշխարհային պրակտիկայում ներկայում ավելի վստահելի ցուցանիշ է համարվում: Այս առիթով հարկ է նշել նաև, որ բնակչության բևեռացվածությունն ըստ եկամտի մակարդակի ավելի բարձր է, քան ըստ սպառման մակարդակի: Այսպես, եկամուտների անհավասարության մակարդակը կամ Ջինիի գործակիցը 2012 թ. եղել է 0,372, իսկ ըստ սպառման՝ այն եղել է ընդամենը 0,269: Այլ կերպ ասած՝ անհավասարությունն ըստ բնակչության եկամուտների մակարդակի՝ ավելի բարձր է եղել, քան ըստ սպառման մակարդակի, որը, մեր կարծիքով, կարելի է բացատրել մի կողմից՝ ստվերային տնտեսության, ինչպես նաև թաքնված զբաղվածության առկայությամբ և մյուս կողմից՝ բնակչության ստացած արտաքին մասնավոր տրանսֆերտների նշանակալից չափերով: Օրինակ, ըստ

վերլուծաբանների՝ Ռուսաստանից բնակչության ստացած մասնավոր տրանսֆերտները տարեկան 1 մլրդ դոլար են կազմում, որը շուրջ 10%-ով զսպում է աղքատության աճը Հայաստանում: Անհրաժեշտ է նշել, որ աղքատությունը գնահատվում է ոչ միայն ըստ սպառման մակարդակի, այլև ըստ սպառողական ծախսերի կառուցվածքի: Հայաստանում բնակչության եկամուտների մոտավորապես 57%-ը ծախսվում է պարենային ապրանքների ձեռք բերման համար, 28%-ը՝ կոմունալ վճարումների:

Համաշխարհային պրակտիկայում ընդունված է աղքատ համարել այն ընտանիքները, որոնք իրենց ամբողջական եկամտի 25%-ից ավելին են ծախսում սննդամթերքի վրա: Այնուհանդերձ, լավատեսորեն պետք է նայենք ապագային, որովհետև ըստ «Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի»՝ մինչև 2025 թ. Հայաստանի միջին տնտեսական աճը կլինի 6,5%, և աղքատության մակարդակը կնվազի մինչև 13,6%:

Ի՞ՆՉ Է «ԲՈՒՐԳԵՐՈՆՈՄԻԿԱՆ»

«Տնտեսագետի» 2012թ. մայիս-հունիսյան (N 3, 669) համարում անդրադարձել ենք «Big Mac»-ի ինդեքսին՝ ցույց տալով, որ այն կիրառվում է որպես արժույթի փոխարժեքները ավելի մատչելի, պարզ, սակայն և մոտավոր ձևով գնահատելու եղանակ: «Big Mac»-ի ինդեքսը հրապարակվում է 1986 թվականից և նպատակ ունի պարզել, թե որքանով են «արդար» արժույթների շուկայական փոխարժեքները: Արժույթի փոխարժեքի արդարության աստիճանը սահմանվում է գնողունակության հավասարության (պարիտետ) տեսության հիման վրա, ըստ որի՝ արժույթի փոխարժեքը պետք է հավասարեցնի որոշակի ապրանքախմբի գինը աշխարհի տարբեր երկրներում: Բրիտանական «Economist» ամսագիրն այս նպատակով որպես նմուշ ընտրել է ամերիկյան «McDonalds» արագ սննդի ցանցի «Big Mac» հայտնի համբուրգերը, որը կարելի է գնել աշխարհի գրեթե բոլոր երկրներում: Արժույթի փոխարժեքը արագ, արզ, մոտավոր ձևով հաշվարկելու այս եղանակը ներկայում այնքան է տարածվել, որ ստացել է «Բուրգերոնոմիկա» անվանումը: Իհարկե, այն ճշգրիտ «գիտություն» համարվելու հավակնություն չունի, սակայն այնուհանդերձ բավականին հեղինակավոր է դարձել և վերջին տարիներին վերածվել է գլոբալ չափորոշչի ու հնարավորություն է տալիս մոտավոր ձևով գնահատելու արժույթների փոխարժեքները, դրանց արդարացիությունը, դոլարի նկատմամբ թերարժևորված կամ էլ գերարժևորված լինելը:

Ներկայում «Big Mac»-ի արժեքը հաշվարկվում է 5 տարբեր արժույթներով՝ դոլարով, եվրոյով, յուանով, իենով և ֆունտով:

«Big Mac» համբուրգերը ԱՄՆ-ում արժե 4,5 դոլար, որը հիմք ընդունելով կարելի է գնահատել տարբեր երկրների արժույթների մոտավոր փոխարժեքները դոլարի նկատմամբ և ցույց տալ, թե դրանք որքանով են թերարժևորված կամ գերարժևորված՝ կախված նրանից, թե այս նույն համբուրգերը տվյալ երկրում ինչ արժե: Այսպես, օրինակ, ամենաէժան «Big Mac»-ը վաճառվում է Հնդկաստանում, որտեղ 1,67 դոլար արժե: Այսինքն՝ հնդկական ռուփին դոլարի նկատմամբ թերարժևորված է 62,8 %-ով՝ (1,67-4,5)/ 4,5x100%: Այս նույն համբուրգերը Վենեսուելայում ամենաթանկն է՝ արժե 9,1 դոլար, այսինքն՝ վենեսուելական բոլիվարը դոլարի նկատմամբ գերարժևորված է 102,2%-ով՝ (9,1-4,5)/ 4,5x100%:

Ինչ վերաբերում է արժույթի փոխարժեքի գնահատմանը «Big Mac»-ի ինդեքսով, ապա դրա մեթոդաբանությունը հետևյալն է. «Big Mac»-ն իր բաղադրությամբ և որակով նույնն է բոլոր երկրներում, հետևաբար նույնը պետք է լինի նաև իրական արժեքը: Օրինակ՝ Ռուսաստանում այդ բուրգերն արժե 87 ռուբլի, իսկ ԱՄՆ-ում 4,5 դոլար, հետևաբար ռուբլու փոխարժեքը դոլարի նկատմամբ պետք է լինի 19,3 ռուբլի (87:4,5): Այսինքն՝ ռուբլու արդարացի փոխարժեքը 19,3 ռուբլի է դոլարի նկատմամբ: Իրականում, սակայն, շուկայական կուրսը 32,9 ռուբլի է, հետևաբար ստացվում է, որ ռուբլին դոլարի նկատմամբ թերարժևորված է շուրջ 42 %-ով (19,3:32,9):

Այսպիսով՝ «բուրգերոնոմիկան», իր պայմանականություններով հանդերձ, որոշակի հետաքրքրություն կարող է ներկայացնել նրանց համար, ովքեր ցանկանում են արժույթի փոխարժեքների, միջազգային գների համեմատություններ ու վերլուծություններ կատարել՝ նախապես գիտենալով դրանց արդյունքների մոտավորականությունը:

Օրերս լրացավ Սամվել Գրիգորյանի ծննդյան 60 և գիտամանկավարժական գործունեության 35-ամյակները: ՀՊՏՀ լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը սրտանց շնորհավորում է հարգարժան գործընկերոջը, մաղթում քաջառողջություն, երկարամյա ստեղծագործական կյանք և ամենայն բարիք:

ԴԵՂՆԱԾ ՀՈՒՇԵՐԻՆ ԻՋԵԼ Է ԱՇՈՒՆ...

«Ուսանողական աշուն» ամենամյա մարզամշակութային փառատոնի շրջանակներում նոյեմբերի 26-ին ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ տեղի ունեցավ լուսանկարչական մրցույթ: Հանդիսավոր բացմանը ներկա էին ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանը, ուսանողական խորհրդի նախագահ Սևակ Խաչատրյանը, հրավիրյալ մրցատյանը, ՀՊՏՀ-ականներ:

Մրցույթում հաղթող ճանաչվեց մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանող ***Գևորգ Սարգսյանի*** հեղինակած լուսանկարը՝ զբաղեցնելով 1-ին հորիզոնականը, 2-րդ և 3-րդ հորիզոնականներում համապատասխանաբար հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողներ ***Էլեն Ուլյանի*** և ***Սիդա Բաղրամյանի*** լուսանկարներն էին:

Հաղթող հեղինակ Գևորգ Սարգսյանի մեկնաբանությամբ՝ իր աշխատանքում պատկերված է 3 ոսկի՝ ժամանակ, գիրք և աշուն, և լուսանկարը վերնագրված է «Դեղնած հուշերին իջել է աշուն...»:

Աշունը ներկայացված բոլոր ստեղծագործությունների թախծապարար, խոհական, գեղեցիկը գովերգող թեման է, հետևաբար Գևորգի անվանումը դարձավ բոլոր աշխատանքները միավորող վերտառություն:



ERVAND MALKHASYAN

(սկիզբը՝ «Տնտեսագետի» սեպտեմբեր-հոկտեմբերյան համարում, N4 (675))

ՀՊՏՀ ապրանքագիտության և տեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու Սպարտակ Սարատիկյանը շարունակում է մեզ՝ սպառողներիս զինել գիտելիքներով՝ պարզաբանելով ապրանքային ծածկագրերն ու նշանները, այդ նշանները ներկայացնելով որոշակի համակարգում:

ԱՅՆ, ԻՆՉՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ՍՊԱՌՈՂԻՆ

Հավասարակշռված և առողջ սննդակարգ պահպանելու համար կարևոր է հատկապես սննդամթերքի էներգետիկ (ուժանյութային) արժեքի և սննդային հավելումների վերաբերյալ տեղեկատվության տիրապետումը ու դրա հավաստիության գնահատումը: Ընդհանրապես, մթերքի էներգետիկ արժեքը բնութագրվում է այն էներգիայով, որը մարդը ստանում է նյութափոխանակության ընթացքում: Ժամանակակից մարդու միջին օրական էներգածախսը կազմում է 2500 կկալ, սակայն խստորեն տարբերակված է ըստ մարդու սեռի, հասակի, զբաղմունքի բնույթի (մտավոր, ֆիզիկական): Մարդն անհրաժեշտ էներգիան հիմնականում ստանում է ճարպերի, սպիտակուցների և ածխաջրերի կենսաբանական լրիվ օքսիդացման հաշվին: Ընդ որում, 1 գրամ ճարպի օքսիդացումից առաջանում է մոտ 9,0, սպիտակուցից՝ 4,0, իսկ ածխաջրից՝ 3,75 կկալ էներգիա: Սակայն հայտնի է, որ նշված նյութերը մարդու օրգանիզմը լրիվությամբ չի յուրացնում: Այսպես, համալրային սնման դեպքում մարդու օրգանիզմը յուրացնում է ճարպերի 94,0 %-ը, սպիտակուցների 84,5 %-ը, ածխաջրերի 95,6 %-ը:

Այդ պատճառով մթերքի էներգետիկ իրական արժեքը (G) պետք է գնահատել դրա յուրացվելիության հաշվարկով, հետևյալ կերպ՝

G = 4,0* 0,845* Ս + 9,0*0,94*Ճ + 3,75*0,955*Ա

որտեղ՝ Ս-ն, Ճ-ն, Ա-ն համապատասխանաբար՝ սպիտակուցների, ճարպերի և ածխաջրերի զանգվածներն են տվյալ մթերքում՝ գրամներով, իսկ գումարելիների մեջ առջևի բաղադրիչ թվերը՝ դրանց 1 գրամի իրական էներգետիկ արժեքը՝ կիլոկալորիաներով: Սովորաբար ապրանքների մակնշման մեջ տրվում է մթերքի 100 գրամի ոչ թե իրական այլ, այսպես կոչված, նվազագույն էներգետիկ արժեքը:

Միջազգային պրակտիկայում ընդունված է մթերքի մեջ սննդային հավելումների (ներկիչների, հոտավորիչների, կոնսերվատորների) առկայությունը նշել E տառով (համարակալման եվրոպական համակարգի European անվանման առաջին տառը), որին հաջորդող թիվը ցույց է տալիս հավելումի խումբը, քիմիական անվանումը: Օրինակ՝ E 240 նշանակում է՝ 2-ը՝ կոնսերվանտ, 240-ը՝ ֆորմալդեհիդ: Այս հավելումներց շատերը բացասաբար են ազդում մարդու առողջության վրա՝ առաջացնելով գլխացավ, ասթմայի սրացում, սրտխառնոց, փսխում, լուծ, ստամոքսի լորձաթաղանթի գրգռում, խոց և այլն: Ուստի պետք է հնարավորինս խուսափել E տառով մակնշված սննդամթերքից և նախընտրել էկոլոգիապես մաքուր արտադրանքները: Հատկապես հիշեք, որ ՀՀ սննդարդյունաբերության մեջ կիրառելու համար արգելված են հետևյալ հավելանյութերը՝

E 121- ցիտրուսային կարմիր ներկանյութ
E 123- ամարանտ ներկանյութ
E 240- մրջնալդեհիդ՝ պահածոյացնող նյութ
E 924a- կալիումի բրոմատ՝ալյուրի և հացի բարելավիչ
E 924b-կալցիումի բրոմատ՝ալյուրի և հացի բարելավիչ:

Հաջորդիվ ձեզ ենք ներկայացնում հաճախակի հանդիպող տեղեկատվական որոշ նշանների համառոտ մեկնաբանությունը.

Սերտիֆիկացման միջազգային և ազգային ստանդարտներին ապրանքների որակի համապատասխանությունը վկայող նշաններ

Որակի նշանը	Պետությունը
1.	Ռուսաստան
2.	Ֆրանսիա
3.	Ճապոնիա
4.	Ֆինլանդիա
5.	Շվեդիա
6.	Շվեյցարիա
7.	Համաեվրոպական
8.	Ավստրիա
9.	Գերմանիա
10.	Իսրայել

Տեքստիլ ապրանքների խնամքի նշաններ



1. Արտադրանքը կարող է ենթարկվել լվացման՝
   ա) թրջմամբ, ցայտմամբ, տաքացմամբ,
   բ) եռացմամբ՝ լվացքի մեքենայի մեջ, առանց հատուկ զգուշության,
   գ) մեքենայական լվացման՝ մինչև 95^0C, մեխանիկական ազդեցությունների միջին ծրագրով,
   դ) լվացման միայն ձեռքի միջոցով՝ մինչև 40^0C,
   ե) լվացման չպետք է ենթարկել:
2. Արտադրանքը կարող է ենթարկվել՝
   ա) սպիտակեցման,
   բ) սպիտակեցման՝ քլոր անջատող միջոցներով,
   գ) սպիտակեցման՝ քլոր չանջատող միջոցներով:
3. Արտադրանքը կարող է ենթարկվել՝
   ա) արդուկման,
   բ) արդուկման՝ 200^0C-ից ոչ բարձր ջերմաստիճանում,
   գ) նույնը՝ 150^0C -ից ոչ բարձր,
   դ) նույնը՝ 110^0C-ից ոչ բարձր,
   ե) ենթակա չէ արդուկման:
4. Արտադրանքը կարող է ենթարկվել՝
   ա) քիմմաքրման՝օրգանական լուծիչներով,
   բ) քիմմաքրման՝ բոլոր օրգանական լուծիչներով,
   գ) քիմմաքրման՝տետրաքլորէթիլենով,
   դ) քիմմաքրման՝ ուայթսպիրիտով,
   ե) քիմմաքրման՝ուայթսպիրիտով՝ մեխանիկական թույլ ազդեցությամբ և ջրի ցածր ջերմաստիճանով:
5. Արտադրանքը կարող է ենթարկվել՝
   ա) չորացման՝ բոլոր հարմար միջոցներով,
   բ) չորացման՝ թմբուկավոր չորանոցում,
   գ) չորացման՝ կախված վիճակում,
   դ) չորացման՝ հարթ մակերևույթի վրա:

Բնապահպանական (էկոլոգիական) նշաններ

Նշանը	Մեկնաբանությունը
1,	«Կանաչ կետ»՝ խորհրդանշում է, որ տվյալ ապրանքի արտադրությունը էկոլոգիապես մաքուր է, իսկ փաթեթը ենթակա է կրկնակի վերամշակման (առաջին անգամ նշանը կիրառվել է Գերմանիայում):
2,	«Երկնագույն հրեշտակ»՝ էկոլոգիական մաքրությունը վկայող նշան, որի կենտրոնական մասը փոխված է շրջակա միջավայրի գծով ՄԱԿ-ի խորհրդանիշից (առաջին անգամ հայտնվել է գերմանական արտադրանքի մակնշման մեջ):
3.	«Ռեսայկլինգ»՝ նշանակում է էկոլոգիապես մաքուր արտադրություն: Այս նշանով մակնշվում են ինչպես վերամշակման ենթակա, այնպես էլ երկրորդային հումքից ստացված արտադրանքները: Էկոլոգիապես մաքուր սարքերի, այդ թվում՝ կենցաղային սառնարանների, մակնշման ձև է:
4.	էկոլոգիապես մաքուր սարքերի, այդ թվում կենցաղային սառնարանների մակնշման ձև
5.	Լվացման մեքենաների, այդ թվում (ամանների լվացման) էկոլոգիական մաքրությունը վկայող նշան («FORON» առևտրական մակնիշով վաճառվող ապրանքների համար)

Փոխադրման և պահեստավորման նշաններ



1. զգույշ, փխրուն է (ջարդվող է),
2. կեռիկներ չօգտագործել,
3. վեր չհրել,
4. պաշտպանել տաքացումից (ջերմությունից),
5. ճոպաններն ամրացնել այստեղ,
6. պաշտպանել խոնավությունից,
7. ծանրության կենտրոնը,
8. օգտագործել վերամբարձ տարա,
9. պաշտպանել ճառագայթներից,
10. շուտ փչացող բեռ,
11. հերմետիկ փաթեթավորում,
12. սյունադարսել չի կարելի,
13. բացել այստեղ,
14. պահպանել նշված ջերմաստիճանների սահմաններում,
15. բարձրացնել անմիջականորեն բեռից:

Վտանգավոր ապրանքների և նյութերի նախազգուշական մակնշման նշաններ

Նշանը	Վտանգավոր ազդեցության տեսակը
	Պայթյունավտանգություն
	Օքսիդացման ընդունակություն
	Հրդեհավտանգություն
	Թունավտանգություն
	Քայքայիչ ազդեցություն
	Գրգռիչ ազդեցություն
	Վարակային ազդեցություն

ՀՊՏՀ ԳՐԱԴԱՐԱՆԸ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Կրթության և գիտության բնագավառը չի կարող անմասն մնալ ներկա դարաշրջանում տեղեկատվական տեխնոլոգիաների բուռն զարգացումից, երբ տեխնոլոգիական նորույթները մեր կյանք են ներխուժում մեծ արագությամբ և հետևաբար ունենում իրենց ազդեցությունը: Տեխնոլոգիական զարգացումն իր հետ բերում է նոր մարտահրավերներ, որոնց դիմակայելու համար անհրաժեշտ են նորարարական քայլեր ու մոտեցումներ:

Տեխնոլոգիական նորարարությունները հաստատվել են նաև կրթական-ուսումնական գործընթացներում: Այս զարգացումներին ընդառաջ՝ ՀՊՏՀ գրադարանը վերափոխելու, արդիականացնելու նպատակ ունի նաև մեր համալսարանի ղեկավարությունը: Ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի հանձնարարականով տրվել է մի նոր ծրագրի՝ համալսարանի գրադարանային ֆոնդի թվայնացման գործընթացի մեկնարկը:

«Տնտեսագետն» այս համարում ՀՊՏՀ գրադարանի գործունեության ու ծրագրերի մասին զրուցել է գրադարանի նորանշանակ տնօրեն Արմինե Հովհաննիսյանի հետ:

-Որպես գրադարանի տնօրեն՝ խնդրում եմ ներկայացնել գրադարանի զարգացմանը, արդիականացմանը միտված Ձեր քայլերը:

- Նախ, շնորհակալություն գրադարանին անդրադառնալու համար: Գրադարանային ոլորտն ինձ համար նոր և անծանոթ միջավայր չէ: Ես աշխատանքային փորձառություն եմ ձեռք բերել Ազգային գրադարանում աշխատելու տարիներին: Բուհական գրադարանային համակարգը մի փոքր այլ է, այն ունի իր առանձնահատկությունները: Հաշվի առնելով, որ գրադարանը յուրաքանչյուր կրթական համակարգի կարևորագույն բաղադրիչն է, մենք պետք է նպաստենք ուսումնական ծրագրերի կայացմանը, ուսանողների լիարժեք և արագ սպասարկմանը: Հստակեցնեմ միտքս. մենք աշխատում ենք ուսանողության հետ, որը մտնելով գրադարան՝ իրեն պետք է զգա բարեհամբույր, արհեստավարժ միջավայրում, որտեղ ոչ միայն տրամադրում են անհրաժեշտ գրականություն, այլև ուղղորդում դեպի ուսումնական գործընթացի համար անհրաժեշտ այլ աղբյուրների օգտագործում, տալիս հուզող անհրաժեշտ հարցերի պատասխանը: Կարծում եմ՝ սպասարկման որակը էապես պետք է փոխվի և՛ տեխնիկական, և՛ բովանդակային առումով. շուտով կսկսենք գրադարանային ֆոնդի թվայնացման աշխատանքները, որը գիրք-ընթերցող որոնման ճանապարհը կդարձնի ավելի կարճ: Կներդրվեն միասնական պլաստիկ քարտեր ուսանողների համար, որոնք կծառայեն և՛ որպես ուսանողական տոմս, և՛ հնարավորություն կտան օգտվելու գրադարանի ծառայություններից: Համապատասխան ծրագրային ապահովվածությունը հնարավոր կդարձնի դրանց օգտագործումը նաև էլեկտրոնային պատվերի համար: Իհարկե, նոր մեթոդների կիրառումը չի բացառում արդեն ընդունված, փորձված գրադարանային սպասարկման ձևերի օգտագործումը:

Շատ կարևորում եմ գրքային ֆոնդի շարունակական նորացման խնդիրը: Այն պետք է արտահայտի ժամանակակից կրթական և ուսումնական գործընթացի համար անհրաժեշտ գրականության պահանջն ու առկայությունը: Էական են նաև գրադարանի մատենագիտական ուղղվածության աշխատանքները, որոնց արդյունավետ կազմակերպման դեպքում կկարողանանք և՛ ճիշտ համալրել ֆոնդը, և՛ հարստացնել մեր գրացուցակների էլեկտրոնային և թղթային տարբերակները, կազմել գրքեր:

- Ի՞նչ հիմնական խնդիրներ կան, որոնք ունեն շուտափույթ լուծման կարիք:

- Գրադարանի այսօրվա թիվ մեկ խնդիրը գրքային ֆոնդի թվայնացումն է: Ասեմ, որ դա տուրք չէ «նորաձև» խոսակցություններին: Դա հնարավորություն կտա մեզ պահպանել մեր ֆոնդը, մեծացնել գրքային ունեցվածքի օգտագործելիությունը, գրականությունը հասանելի դարձնել ավելի մեծ թվով ուսանողների, նաև, ինչու չէ, հարգել այն ուսանողի ընտրությունը, ով գերադասում է օգտվել դասագրքերի այդ տարբերակից: Թվայնացումը կլուծի նաև գրադարանի՝ այլ բուհական և գրադարանային համակարգերին միանալու և համահավաք գրացուցակներից օգտվելու խնդիրը: Այն թույլ կտա գրադարանի կայքէջը հարստացնել էլեկտրոնային շտեմարաններով, որոնք ուսանողի համար տեղեկատվության կարևոր աղբյուր են: Պետք է ապահովենք նաև գրքային ֆոնդի թվայնացման շարունակականությունը, գիրքն իր այլընտրանքային տարբերակով պետք է ներկայացվի մեր ուսանողներին և պրոֆեսորադասախոսական կազմին: Մյուս կարևոր հարցը մամուլի էլեկտրոնային տարբերակը ընթերցողներին տրամադրելու և օգտվելու հնարավորության ընձեռումն է: Այն կարելի է լուծել էլեկտրոնային բաժանորդագրության եղանակով:

-Որպես գրադարանային ոլորտի բազմափորձ աշխատակից՝ ինչպե՞ս եք գնահատում գրադարանների դերը ներկա ժամանակներում և Ձեր կարծիքով՝ իրենց աշխատանքում ի՞նչը պետք է շեշտադրեն հատկապես բուհական գրադարանները:

- Գաղտնիք չէ, որ այսօր փոխվել է վերաբերմունքը և՛ գրքի, և՛ ընթերցանության նկատմամբ: Գրադարանների վիճակը, կարելի է ասել, ուղիղ համեմատական է դրան: Ճիշտ է, գրադարաններ են փակվել, դժվարացել է ընթերցողին գրադարան բերելը, բայց, կարծում եմ, վիճակն այդքան էլ վատ չէ: Մենք ամեն օր շփվում ենք երիտասարդության հետ, և պետք է ասեմ, որ գիրքն իր դասական տարբերակով այսօրվա երիտասարդի համար մնում է գերադասելի: Ինչ վերաբերում է բուհական գրադարաններին, ապա շեշտադրումը դարձյալ գրականության արդիականությունն է, այլընտրանքային (էլեկտրոնային) տարբերակների օգտագործումը և որակյալ, զարգացած գրադարանային կադրերը:

-Ի՞նչ անելիքներ ունեք առաջիկայում, որո՞նք են ապագային միտված ծրագրերը:

- Ապագայի անելիքները շատ են, բայց կանգ առնեմ ամենագլխավոր խնդիրների վրա: Առաջիկայում պետք է անցնենք ընթերցասրահների առձեռն ֆոնդերի սպասարկման բաց դարակների սկզբունքին: Դրա համար անհրաժեշտ է որակապես փոխել, համալրել գրքային ֆոնդը: Շատ եմ կարևորում գրադարանային կադրերի որակավորման բարձրացման շարունակականությունը: Անցել են այն ժամանակները, երբ գրադարանը աշխատանքի հարմարավետ և հանգիստ վայր էր աշխատակցի համար: Այսօրվա գրադարանավարը գիտակ և կրթված լինելուց բացի, պետք է տիրապետի և՛ տեխնիկական նորույթներին, և՛ ունենա համապատասխան գիտակրթական մակարդակ: Պետք է գտնել և օգտագործել նաև ֆոնդի համալրման այլընտրանքային եղանակներ: Այդ առումով մենք ակտիվ համագործակցում ենք համալսարանի տարբեր ստորաբաժանումների հետ, որպեսզի ֆոնդի համալրումը լինի ուսումնական ծրագրերին համապատասխան, արդիական և անհրաժեշտ քվաքանակով: Այսօր շատ գրքեր ֆոնդում կարելի է ունենալ էլեկտրոնային տարբերակով: Եթե աշխատանքները բարեհաջող ընթանան, կարծում եմ՝ մոտ ապագայում հնարավոր կլինի օգտագործել էլեկտրոնային սպասարկման տարբերակը: Ուսանողը կլրացնի էլեկտրոնային պատվիրաթերթիկ և, առանց ժամանակի կորստի, կստանա պատվիրած գիրքը կամ պատասխան նրա գտնվելու վայրի մասին: Շատ կցանկանայի, որ մեր բուհական գիտական գրադարանը կազմեր թեմատիկ մատենագիտական ձեռնարկներ, անվանի տնտեսագետների անհատական կենսամատենագիտություններ: Կարծում եմ՝ գրադարանը պիտի դառնա նաև բազմազան միջոցառումների և շնորհանդեսների անցկացման մշտական վայր: Մի խոսքով, անելիքներ շատ կան, բայց գրադարանավարի գլխավոր և միակ կոչումը գրքի լավագույն պահապանի և ակտիվ քարոզչի դերն ու առաքելությունն է:

Զրուցեց
ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ

Ի հավելումն

ՀՊՏՀ պաշտոնական կայքի (asue.am) «Գրադարան» բաժնում կատարվել են մի շարք փոփոխություններ. բաժինը վերակառուցվել և հարստացվել է նոր խորագրերով, որոնք պարունակում են օգտակար տեղեկություններ: Այժմ «Գրադարան» բաժնի ներքո ներկայացված է գրադարանի ստեղծման պատմությունը, գրադարանի ֆոնդի անձնագիրը, էլեկտրոնային գրացուցակը, որով ընթերցողները կարող են ծանոթանալ, թե ինչպիսի գրքեր կան գրադարանում: «Նոր գրքեր» խորագրի ներքո պարբերաբար հրապարակվելու են գրադարանի նոր գրքերի ցանկերը՝ այցելուներին տեղեկացնելով գրքային նոր համալրումների մասին, «Հավաքածուներ» խորագիրը ներկայացնում է համալսարանի գրադարանում առկա ամսագրերն ու տեղեկատվություն սեղմագրերի մասին: Տեղեկատվություն կա նաև գրադարանից օգտվելու կանոնների, աշխատանքային ժամերի մասին, իսկ առաջարկությունների պատուհանը հնարավորություն է տալիս հարցերի դեպքում ուղիղ դիմել գրադարանի տնօրինությանը՝ ապահովելով հետադարձ կապ:

Բաժնի բոլոր խորագրերն ու նյութերը պարբերաբար թարմացվում են: Նորացվել է նաև բաժնի լուսանկարային ֆոնդը, որը նկարագրում է գրադարանային առօրյան և գրքային ռեսուրսները: Գրադարանի տնօրինությունը խոստացել է ապահովել առաջիկայում նաև «Շտեմարան», «Օգտակար հղումներ» և նոր այլ ենթաբաժինների գործարկումը:

Հիշեցնենք, որ կայքում գործում է նաև էլեկտրոնային գրադարանը: Առաջիկայում էլեկտրոնային գրադարանը կներկայանա նոր ձևով ու բովանդակությամբ. ինչպես վերը նշվեց, թվայնացվելու է գրադարանի ամբողջ ֆոնդը:

ԵՐԿԱՐ ՍՊԱՍՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Վերջին տարիներին մարքեթինգի ամբիոնն աչքի է ընկնում իր հետաքրքիր ու անհրաժեշտ ձեռնարկումներով՝ ամեն անգամ մի նոր անակնկալ մատուցելով ոչ միայն ուսանողությանը, այլև ՀՊՏՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմին: Այդ ձեռնարկումներին հաճախակի է անդրադարձել նաև «Տնտեսագետ» ամսագիրը: Այս անգամ առիթը նույնպես հաճելի է, որովհետև ընթերցողի, հատկապես ուսանողության սեղանին է «Մարքեթինգի հիմունքներ» ծավալուն ուսումնական ձեռնարկը, որը նախատեսված է մեր համալսարանի բակալավրական ուսուցման բոլոր մասնագիտությունների ուսանողների համար:

Հայտնի է, որ ժամանակակից պայմաններում ՀՀ բուհական համակարգում կրթական գործընթացների կարևորագույն խնդիրներից մեկն էլ կրթական ծրագրերով նախատեսված դասընթացների համար հայալեզու մասնագիտական գրականության բացակայությունն է կամ սակավությունը: Վերջինս խոչընդոտում է դասընթացների յուրացմանն ու դրա մատուցման միասնականացմանը, ինչն էապես բարդացնում է ուսանողների գիտելիքների ու կարողությունների ոչ միայն ձեռք բերման գործընթացը, այլև դրանց ստուգման աշխատանքները: Այս խնդրի լուծման լավագույն տարբերակը եղել և մնում է հայալեզու մասնագիտական գրականության ստեղծումն ու հրատարակումը: Մյուս կողմից, սակայն, անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել հրատարակվող ուսումնական ձեռնարկների համապատասխանությանը ծրագրերին, բովանդակությանը, կառուցվածքին, համակողմանիությանն ու դյուրընթեռնելիությանը:

Այս տեսանկյունից պետք է ընդգծել, որ մարքեթինգի ամբիոնի կողմից 2012 թ. մշակվեց և միասնականացվեց «Մարքեթինգի հիմունքներ» համահամալսարանական դասընթացի ուսումնական ծրագիրը և դրվեց գործողության մեջ, ինչի դրական արդյունքները չուշացան: Եվ ահա ամբողջությամբ այդ ծրագրին համապատասխան մշակվել և հրատարակվել է «Մարքեթինգի հիմունքներ» ծավալուն ուսումնական ձեռնարկը: Վերջինս բաղկացած է 15 գլուխներից, որոնցում ներառված հարցերն ամբողջությամբ համապատասխանում են դասընթացի առարկայական ծրագրով նախատեսված թեմաներին: Ձեռնարկում համակողմանիորեն ներկայացված են մարքեթինգի էությունը և բովանդակությունը, հիմնարար հասկացությունները, մարքեթինգի զարգացման էվոլյուցիան, գործառույթները, օբյեկտները և սուբյեկտները, պահանջարկի կառավարման մոտեցումները, մարքեթինգի կառավարման հայեցակարգերը, մարքեթինգային ծառայության կազմակերպման և շուկաների դասակարգման սկզբունքները, սպառողների և գնորդների վարքագիծը, մարքեթինգային միկրո- և մակրոմիջավայրի էությունը, բնորոշումները, մարքեթինգային հետազոտությունների կառուցվածքը, տեղեկատվության հավաքման անհրաժեշտությունը, շուկայական վերլուծությունը և շուկաների հատվածավորման չափանիշները, շուկաների գրավչության գնահատումը և նպատակային հատվածների ընտրությունը, ընկերության ապրանքային և գնագոյացման քաղաքականությունը, ընկերության մակնիշային և ապրանքների կենսապարբերաշրջանի մարքեթինգի ռազմավարությունները, բաշխման կապուղիների էությունը և դրանց կազմակերպումը, մարքեթինգային հաղորդակցությունների էությունը և գործընթացը, հաղորդակցման համալիրի տարրերը (գովազդային գործունեության առանձնահատկությունները, հասարակության հետ կապերը, իրացման խթանման էությունը և ձևերը, մրցակցությունը, գլոբալ շուկան, հասարակությունը և մարքեթինգը, մրցակցային առանձնահատկությունները և ռազմավարությունները, մարքեթինգային գործընթացների կառավարումը), միջազգային մարքեթինգային միջավայրի ուսումնասիրությունը, արտաքին շուկաների ընտրությունը և միջազգային շուկաներ ներթափանցելու ռազմավարությունները և այլն:

Ուսումնական ձեռնարկում յուրաքանչյուր թեմայի վերջում տրված են ինքնաստուգման հարցեր և անհրաժեշտ գրականության ցանկ:

Վերը շարադրվածը թույլ է տալիս ընդգծելու, որ հեղինակային խումբը՝ մարքեթինգի ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Զաքարյանը, դոցենտներ, տնտեսագիտության թեկնածուներ Շիրակ Սահակյանը, Արմեն Գրիգորյանը, տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ Նարեկ Ղուկասյանը և ասիստենտ Լիլիթ Սահակյանը (պրոֆեսոր Արարատ Զաքարյանի ընդհանուր խմբագրությամբ ու ղեկավարությամբ) շնորհակալ գործ են կատարել, որովհետև մայրենի լեզվով առաջին ամփոփ «Մարքեթինգի հիմունքներ» ուսումնական ձեռնարկը լիովին կարող է լրացնել եղած բացը: Այս ամենով հանդերձ պետք է ընդգծել, որ ամբողջության մեջ ուսումնական ձեռնարկն աչքի է ընկնում տրամաբանական կուռ կառուցվածքով, քննարկված հարցերի համակողմանիությամբ, շարադրված նյութի ամրապնդմանը ծառայող հայրենական օրինակների առատությամբ և օգտագործված գրականության բազմազանությամբ ու արդիականությամբ: Ձեռնարկի յուրաքանչյուր գլխում առարկայորեն ներկայացված են մարքեթինգին առնչվող բոլոր հիմնարար մոտեցումները, իսկ գիտական տարբեր դպրոցների մոտեցումների ներկայացման ընթացքում հեղինակները պահպանել են օբյեկտիվությունը, մարքեթինգի, իբրև գիտության, բոլոր արդի դրսևորումներն ու դրանց առնչվող մեկնաբանությունները:

ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ

ՆՎԻՐԵԼԸ ԱՐՎԵՍՏ Է

Յուրաքանչյուրս սիրում է նվիրել, առավել ևս՝ նվեր ստանալ…

Հաշված օրերից ամանորյա տոներն են՝ նվիրելու համար ամենատեղին և պատեհ ժամանակը: Ամանորի և Ծննդյան տոների ամենաընդունված և ավանդական նվերը, ինչ խոսք, քաղցրեղենն է, սակայն քիչ չեն նրանք, ովքեր հաճույքով սիրելի մարդկանց, ընտանիքի անդամներին նվիրում են հագուստ, օծանելիք, զարդեր, գրքեր, խաղալիքներ…

Ասում են՝ կարևորը ոչ թե նվերի արժեքն է, այլ նվիրողի՝ ի սրտե, անկեղծ վերաբերմունքը՝ ոչ ձևական կամ պարտավորված:

Մտաբերենք համաշխարհային դասական Օ'Հենրիի «Մագիի նվերը» պատմվածքը, որը լավագույնս արտացոլում է մեր նյութի գաղափարը. այս դեպքում երկուսն էլ անմնացորդ տրվում են լավագույն և անհրաժեշտ նվեր ընտրելու և նվիրելու գաղափարին: Տղան վաճառում է թանկագին ժամացույցը և սիրելիիշքեղ վարսերի համար զարդ գնում, աղջիկը վաճառում է մազերը, որպեսզի այդ գումարով շղթա գնի ամուսնու ժամացույցի համար: Զավեշտալի, հուզիչ պատմություն, փոխադարձաբար բերկրանք նվիրելու, փոքրիկ անձնազոհության վառ օրինակ:

Կա մի քանի «կանոն», որ պետք է նկատի ունենալ, եթե ցանկանում ենք գեղեցիկ ձևով նվիրել կամ նվերն ընդունել այնպես, որ դիմացինն իրեն հարմարավետ զգա:

Անհրաժեշտ է նվեր ընտրելիս հաշվի առնել հասցեատիրոջ ճաշակը, նախասիրությունները, բնավորությունը և այլն: Ինչպես ասում են՝ ճաշակին ընկեր չկա, սակայն բնավորության, հետաքրքրությունների և այլնի համընկնումներ կամ հակառակը, անշուշտ կան: Սա հենց այն առանցքային հանգամանքն է, որը պետք է նկատի առնել նվեր ընտրելիս: Համաձայնեք՝ ամեն մեկն ի սրտե չի ուրախանա, երբ իրեն գիրք նվիրեն կամ ամեն մեկին դուր չի արվեստի որևէ գործ, նույնիսկ եթե թանկարժեք լինի:

Նվերը կարևոր խորհուրդ ունի. նվիրելիս մենք ամենաջերմ ու բարի կամեցողությամբ ցանկանում ենք երջանիկ ակնթարթներ պարգևել, նվեր ընտրելու համար ժամանակ ենք հատկացնում, ջանում, հոգեկան ապրումներ ունենում. իրականում սա ավելի մեծ ու արժեքավոր նվեր է, քան ինքը՝ «ֆիզիկական» նվերը:

ՀՊՏՀ փիլիսոփայության և հայոց պատմության ամբիոնի ավագ լաբորանտ Արփինե Մալքոյանը նվերի իմաստն ու արժեքը բացատրում է փիլիսոփայական տեսանկյունից. «Լատինական մի ասացվածքի համաձայն՝ փոքրիկ նվերներն ամրապնդում են մտերմությունը: Նվերը խորհրդանիշ է, որն ամփոփում է այն զգացմունքները, հույզերը, ապրումները, ընդհանուր տրամադրվածությունը, որոնք գոյություն ունեն նվեր տվողի և ստացողի միջև: Ճիշտ ընտրված նվերը հետագայում էլ կարող է վերստեղծել այն մթնոլորտն ու հիշողությունները, որոնք առկա էին նվերի ընդունման պահին: Երբ նվեր ստացողի դեմքին արտացոլվում է գոհունակության ժպիտ, դա վկայում է այն մասին, որ նվերը դուր է եկել հասցեատիրոջը, նվիրողն իրեն վարձատրված է զգում՝ որոնումների վրա հատկացված ժամանակի դիմաց, նվերի ընտրության մտահոգությունների համար և ուրախություն է ապրում, որ իրեն հաջողվել է ճիշտ ընտրություն կատարելով երջանկացնել ընկերոջը»:

Եթե նվեր եք ընտրում ձեզ մտերիմ ու հարազատ մարդու համար, ապա արդեն գիտեք՝ ինչ նվերի դեպքում նա իսկապես կարող է ուրախանալ, իսկ եթե ընտրում եք ոչ այնքան մտերիմ մարդու համար (թեև նման դեպքեր քիչ են պատահում), ապա լավ

կլինի խորհուրդ հարցնել նրա մտերիմներից՝ որոշակիորեն կողմնորոշվելով:

Կհավանե՞ն արդյոք ձեր նվերը, թե՝ ոչ, կախված է նաև նրանից, թե ինչպես եք դուք այն մատուցում: Այստեղ ևս մի քանի կարևոր հանգամանք կա. առաջին հերթին նախընտրելի չէ, երբ նվերը փաթեթավորած հանձնում են կամ դնում սեղանին և ասում՝ դա քեզ համար է: Երբեմն կարելի է նվերը հասցեատիրոջ ներկայությամբ հանել, նրան նայել ու ժպտալով ասել, օրինակ՝ «Երկար մտածեցի՝ ինչ նվիրեմ և վերջապես գտա…», «Ես գիտեմ, որ դու շատ ես սիրում օծանելիք (կամ ուրիշ բան), այդ պատճառով որոշեցի նվիրել քեզ սա…», «Երբ խանութում տեսա այս գեղեցիկ թևնոցը, իսկույն պատկերացրեցի այն քո գեղեցիկ ձեռքին…» և այլն: Նմանօրինակ դրական, ջերմ և ամենակարևորը՝ անկեղծ խոսքերն, անշուշտ, լավ ազդեցություն կունենան և ձեր նվերը հաճույքով կընդունվի: Իսկ նվեր ստացողի համար կարևոր է, որ նվիրողի ներկայությամբ վերցնի նվերը, շոշափի, ժպտա և առանց ավելորդ համեստության ասի, որ այն իսկապես իրեն դուր եկավ: Այսպես կողմերի համար հաճելի է և երկուստեք ինքնավստահություն ներշնչող:

Հաճախակի նվեր ընտրելը գեղագիտական ճաշակ է զարգացնում, սկսում ենք հեշտ կողմնորոշվել և կարևորել այդ երևույթը, սկսում ենք պատկերացնել՝ ում ինչ նվիրել:

Դե ինչ, չմոռանանք նվիրելու մասին, պարգևենք հաճելի զգացողություններ և ակնթարթներ սիրելի մարդկանց և հիշենք՝ նվիրելը, ինչո՞ւ չէ նաև նվեր ընդունելը, արվեստ է:

ՆԱՆԵ ԱՎԱՆԵՍՅԱՆ

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ղեկավարությունը ուսանողներին հետազոտական ծրագրերում ներգրավելու նախագիծ է սկսել: Անդրանիկ ծրագրի մեկնարկը տրվել է կենտրոնի «Ազգային անվտանգության հետազոտություններ» ծրագրի շրջանակներում՝ ծրագրի տնօրեն, տ.գ.թ. Վարդան Աթոյանի նախաձեռնությամբ և գլխավորությամբ:

***

«Ամբերդ» հետազոտական կենտրոնի հոկտեմբերի 25-ի գիտական սեմինարը «Մակրոտնտեսական վերլուծություն, մոդելավորում և կանխատեսում» ուղղության շրջանակներում էր, որը ներկայացրեցին պրոֆեսոր Աշոտ Թավադյանը, դոցենտ Հայկազ Հովհաննիսյանը: Հոկտեմբերի 30-ին «ՀՀ ազգային անվտանգության հայեցակարգի հոգևոր-բարոյական հիմնախնդիրները» ներկայացրեցին պրոֆեսորներ Արամ Սարգսյանը, Սուրիկ Սարգսյանը, դոցենտներ Յուրի Հովակիմյանը, Սոֆյա Օհանյանը: Նոյեմբերի 15-ին «Կարգավորում և մրցակցություն» ուղղության շրջանակներում ելույթ ունեցան պրոֆեսոր Միքայել-Մելքումյանը, տ.գ.թ. Արթուր Առաքելյանը, դասախոս Մարգարիտա Ավետիսյանը, ասպիրանտներ Սուրեն Պարսյանը և Վարդան Մարությանը: Նոյեմբերի 19-ին «Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեման պարզաբանեցին ակադեմիկոս Յուրի Սուվարյանը, դոցենտ Ռուբեն Հայրապետյանը: «Մրցունակություն, միջազգայնացում և արտաքին առևտուր» ուղղության շրջանակներում նոյեմբերի 20-ին տեղի ունեցավ «Ծովային ելք չունեցող երկրների միջազգային մրցունակության հիմնախնդիրները» խորագրով սեմինարը, որի բանախոսն էր դոցենտ Գրիգոր Նազարյանը: Նոյեմբերի 28-ին «Տարածական զարգացում» ուղղության շրջանակներում հանդես եկան դոցենտներ Կարեն Գրիգորյանը, Թաթուլ Մկրտչյանը, Տիգրան Թերզյանը, Սոս Խաչիկյանը, ասիստենտներ Հասմիկ Համբարձումյանը, Լիլիթ Քոլյանը: Դեկտեմբերի 4-ին «Կրթական ծրագրերի և տեխնոլոգիաների հետազոտություն և զարգացում» թեմայի ներկայացումն էր, ելույթ ունեցան պրոռեկտոր Պարույր Քալանթարյանը, Գայանե Մերդինյանը: Դեկտեմբերի 11-ին «Տնտեսական զարգացում» խորագրով սեմինարին հանդես եկան պրոֆեսոր Հովսեփ Աղաջանյանը, դոցենտներ Ատոմ Վարդանյանը, Ատոմ Մարգարյանը, Արսեն Պետրոսյանը:

Հոկտեմբերի 18-ին ՀԵՀ-ի Երիտասարդական կենտրոնում մեր բուհի ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ կազմակերպված «ՀՊՏՀ գավաթ-2013» գիտակների մրցույթ-փառատոնի «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» խաղում մեր բուհը ներկայացրեցին «Index Pro» և «3+2» թիմերը: ՀՊՏՀ «Index Pro» թիմը գրավեց 3-րդ տեղը:

Նիստերի սրահում հոկտեմբերի 21-ին տեղի ունեցավ ներքին գիտական դրամաշնորհների 3-րդ միջանկյալ հաշվետվությունների շրջանակներում վերջին գիտական սեմինարը (որի մի մասը ներկայացվել էր հոկտեմբերի 14-ին): Մասնակցում էին ՀՊՏՀ գիտության բաժնի պետ Խորեն Մխիթարյանը, «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն Սամվել Ավետիսյանը, ՀՊՏՀ աշխատակիցներ, ուսանողներ: Սեմինարը «Տնտեսական աճի որակը ՀՀ-ում» թեմայով էր (ղեկ.՝ պրոֆեսոր Հովսեփ Աղաջանյան, իրականացնողներ՝ դոցենտներ Թաթուլ Մկրտչյան, Արսեն Պետրոսյան, Ատոմ Վարդանյան, ասպիրանտ Հայկ Մինասյան):

Վերջում գիտության բաժնի պետ Խորեն Մխիթարյանը նշեց, որ կհանդիպեն հունվարին, երբ կներկայացվեն վերջնարդյունքները:

Հոկտեմբերի 24-ին տեղի ունեցավ ՀՀ և աուդիտի ֆակուլտետի երկրորդ տարեդարձին նվիրված տոնական միջոցառում: Ֆակուլտետի շնորհալի ուսանողները ներկայացրեցին պարային համարներ, սիրված երգեր, հումոր ու զվարճախոսություններ: Ներկաներին տեսաողջույն հղեցին ՀՊՏՀ ուսանողական խորհրդի նախագահ Սևակ Խաչատրյանը և դեկան Աշոտ Մաթևոսյանը: Ֆակուլտետի լավագույն ուսանողներին հանձնվեցին պատվոգրեր տարբեր անվանակարգերում:

Հոկտեմբերի 24-ին և 31-ին ՀՊՏՀ ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետում միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի նախաձեռնությամբ, մագիստրանտների մասնակցությամբ, տեղի ունեցավ երկու բաց դաս: Ներկայացվեց Արժույթի միջազգային հիմնադրամի հրատարակած «Համաշխարհային տնտեսական հեռանկարներ» թեմայով զեկույցը:

ՀՊՏՀ-ն գործատուների հետ համագործակցության շրջանակներում մագիստրոսական կրթական ծրագրի իրականացման հերթական պայմանագիրն է ստորագրել ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի հետ, որով համալսարանում կիրականացվի «Ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի կառավարում» մասնագիտացմամբ մագիստրոսական կրթական ծրագիր՝ ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի կողմից:

Հոկտեմբերի 25-ին ուսանողական խորհրդի նախաձեռնած «Սևակյան սերը» խորագրով գրական հուշ-ցերեկույթին ուսանողները ներկայացրեցին բեմադրություն՝ համեմված Պարույր Սևակի կենսագրության դրվագներով, ստեղծագործություններով: Եղան նաև պարային ելույթներ: Հուշ-ցերեկույթին ներկա էին ՀՊՏՀ ուսանողները, կոլեկտիվը՝ ռեկտոր Կորյուն Աթոյանի գլխավորությամբ:

ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետի մակրոտնտեսական քաղաքականություն և կանխատեսում մասնագիտացման մագիստրատուրա 1-ին կուրսում հոկտեմբերի 29-ին մակրոէկոնոմիկայի ամբիոնի դոցենտ Ծովինար Կարապետյանի նախաձեռնությամբ անցկացվեց բաց դաս «ՀՀ մտավոր սեփականության շուկայի կարգավորման հիմնախնդիրները» թեմայով:

Ուսանողի միջազգային օրվա առիթով կրթության և գիտության ոլորտում ներդրած մեծագույն ավանդի համար ՀՊՏՀ ուսանողական խորհուրդը ՀՀ ԿԳՆ-ի կողմից պարգևատրվեց հուշամեդալով, իսկ նոյեմբերի 12-14-ն արժանացավ պատվոգրի՝ Երիտասարդության և Ուսանողության միջազգային օրերի առիթով անցկացված «Հայացք ապագային» խորագրով երիտասարդական կազմակերպությունների ցուցահանդես-համաժողովին՝ լավագույն տաղավարը ներկայացնելու համար:

Նոյեմբերի 7-ին կայացավ Տեմպուսի «Արարատ» ծրագրի մասնակից-գործընկերների հերթական հանդիպումը. մեր համալսարանում հյուրընկալվեց Եվրոպական հանձնաժողովի Տեմպուսի ծրագրերի տարածաշրջանի պատասխանատու Ֆրանց Շտեյդելը՝ ծանոթանալու ծրագրի կատարման ընթացքին, արված աշխատանքներին:

Բացմանը ներկա էին ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանը, ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Պարույր Քալանթարյանը, ֆակուլտետների դեկաններ, ամբիոնների վարիչներ, մասնակցում էին ծրագրի շահակից գործընկերները, ՀՊՏՀ որակի ապահովման բաժնի պետ Ներսես Գևորգյանը, Որակի ապահովման ազգային կենտրոնի տնօրեն Ռուբեն Թոփչյանը, ՈՒԱԿ Քաղաքականության մշակման և իրականացման վարչության ղեկավար, «Արարատ» ծրագրի կառավարման հանձնաժողովի անդամ Սուսաննա Կարախանյանը: Ռեկտոր Կորյուն Աթոյանը ողջունեց ներկաներին և ընդգծեց ծրագրի կարևորությունը հատկապես այն առումով, որ այն ուղղակիորեն առնչվում է կրթության որակի բարելավմանը: Ռեկտորը հաջողություն մաղթեց ծրագրի մասնակիցներին, նաև շնորհակալություն հայտնեց Ֆրանց Շտեյդելին՝ ծրագրով հետևողականորեն հետաքրքրվելու համար: Սուսաննա Կարախանյանն ամփոփ ներկայացրեց ծրագրի մասնակից հայաստանյան 8 բուհերի գործունեության մշտադիտարկման արդյունքները: Ֆրանց Շտեյդելը ՀՊՏՀ-ի կողմից ծրագիրը համակարգելու վերաբերյալ գոհունակություն արտահայտեց:

Դեկտեմբերի 9-ին կայացավ «Գործնական մարքեթինգ» խորագրով սեմինարը՝ ՀՊՏՀ շարունակական և լրացուցիչ կրթության կենտրոնի և «Ayvazyan & Partners» ընկերության նախաձեռնությամբ: Սեմինարը վարեց ընկերության բիզնես թրեյներ Վահագն Դիլբարյանը:

Նիստերի սրահում նոյեմբերի 11-ին տեղի ունեցավ համալսարանի գիտական խորհրդի նիստը: ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանն անդրադարձավ մագիստրատուրայում ուսուցման գործընթացի արդյունավետության, ուսանող-դասախոս-դեկանատ հարաբերությունների, աշխատավարձի խընդրին, կրթության որակի բարելավմանը: Ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի պաշտպանության և ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքների մասին զեկուցեց ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Միհրդատ Հարությունյանը: 2013-2014 ուստարվա ընդունելության արդյունքների, հաշվապահական հաշվառում մասնագիտության և աուդիտ մասնագիտացման առկա ուսուցման բակալավրիատի 2013-2014 ուստարվա ամփոփիչ ատեստավորման առարկայական ցանկը հաստատելու մասին հարցերը զեկուցեց ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Պարույր Քալանթարյանը: Ռեկտոր Կորյուն Աթոյանը ներկայացրեց գիտխորհրդի 2013-2014 ուսումնական տարվա առաջին կիսամյակի աշխատանքային պլանը: Բոլոր հարցերի մասին որոշումներն ընդունվեցին գիտխորհրդի քվեարկությամբ: Քննարկվեցին և հաստատվեցին ատենախոսությունների թեմաներ և գիտական ղեկավարներ: Քվեարկության դրվեց իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ. Սասուն Գրիգորյանին և կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի ասիստենտ, տ.գ.թ. Արշակ Առաքելյանին դոցենտի կոչումներ շնորհելու համար ԲՈՀ-ին դիմելու հարցը: Գիտխորհուրդը քվեարկությամբ կոչումներ շնորհելու հարցին հավանություն տվեց, հաստատեց քվեարկության արդյունքները: Հրատարակության երաշխավորվեց 3 ուսումնական ձեռնարկ:

Գիտխորհրդի որոշումներին կարող եք ծանոթանալ ՀՊՏՀ պաշտոնական կայքում:

Ամանորի տոների առիթով ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանի որոշմամբ աշխատակիցները պարգևատրվել են իրենց աշխատավարձի 100 տոկոսի չափով: Նշենք, որ սա բուհի ղեկավարության կողմից տարվա երկրորդ պարգևատրումն է. ամռան արձակուրդներին նույնպես աշխատակիցները պարգևատրվում են: Այս մոտեցումը բուհի կողմից անխախտ ավանդույթ է դարձել:

Առաջնորդվելով ՀՊՏՀ միջազգայնացման, կրթության որակի ճանաչման, որակավորումների համադրելիության և մրցունակության ապահովման ռազմավարական նպատակներով՝ ՀՊՏՀ կրթության կառավարման ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի և որակի ապահովման բաժնի նախաձեռնությամբ ու ՀՊՏՀ ղեկավարության հավանությամբ մշակվել և Տեմպուսի ծրագրերի շրջանակում Եվրոպական հանձնաժողով են ներկայացվել բարձրագույն կրթության բարեփոխումների ծրագրային առաջարկներ, որոնցից 4-ը հավանության են արժանացել: 2013 թվականից սկսած 3 տարիների ընթացքում ՀՊՏՀ-ն կիրականացնի հետևյալ ծրագրերը.

1. Հայաստանի բուհերի որակի ապահովման գործընթացներում ուսանողների մասնակցության ընդլայնում (ESPAQ),
2. Ջալցբուրգի սկզբունքների հիման վրա կրթական 3-րդ մակարդակի կառուցվածքային զարգացում (VERITAS),
3. Աջակցություն բուհական ինքնավարությանը և հաշվետվողականությանը. բարձրագույն կրթության կառավարման ժամանակակից և Բոլոնիայի գործընթացի սկզբունքներին համահունչ համակարգի մշակում՝ արդյունավետ փոփոխությունների իրականացման նպատակով (GOVERN),
4. Մարդկային գործոնի միջոցով կրթական հաստատությունների առաջխաղացում (PEOPLE):

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ազգային անվտանգության հետազոտություններ» ծրագրի տնօրեն, տնտեսագիտության թեկնածու Վարդան Աթոյանը, հաղթահարելով ընտրական փուլը և ստանալով հրավեր, մասնակցել է «Կովկասյան երկխոսություն – 2013» միջազգային գիտակրթական ծրագրին, որը տեղի է ունեցել նոյեմբերի 26-30-ը Ռուսաստանի Դաշնության Դոնի Ռոստով քաղաքում: Բարձր մակարդակի միջազգային ծրագիրը կազմակերպել և հրավիրված փորձագետների ճանապարհի ու կեցության ամբողջ ծախսերը հոգացել է Ա. Մ. Գորչակովի անվան Հանրային դիվանագիտության աջակցման հիմնադրամը:

ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի 5-ամյակի «Տարածքային համաչափ զարգացման հիմնախնդիրը ՀՀ-ում» թեմայով հանրապետական գիտաժողովին ներկայացված զեկուցումների հիման վրա հրատարակվել է «Տնտեսության համաչափ զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում» ժողովածուն:

Նոյեմբերի 27-ին ՀՊՏՀ-ում «ՀՀ ֆինանսական կայունության հաշվետվություն» (2013 թ. 1-ին կիսամյակ) թեմայով շնորհանդես անցկացրեցին ՀՀ կենտրոնական բանկի ներկայացուցիչները՝ ՀՀ ԿԲ խորհրդի անդամ Արմենակ Դարբինյանը, ՀՀ ԿԲ ֆինանսական համակարգի կայունության և զարգացման վարչության պետ Անդրանիկ Գրիգորյանը, նույն վարչությունում բաժնի պետեր Արտակ Ասատրյանը, Կարինե Համբարյանը, Անձնակազմի կառավարման վարչության պետ Գայանե Խաչատրյանը:

ՀՀ պետական կառավարման ակադեմիայում նոյեմբերի 26-ին տեղի ունեցավ միջբուհական «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» խաղը, մեր բուհի «Index PRO» գիտակների թիմը այս անգամ ևս փայլեց իր գիտելիքներով՝ զբաղեցնելով 1-ին պատվավոր հորիզոնականը:

ՀՊՏՀ միջազգային համագործակցության կենտրոնում նոյեմբերի 20-ին տեղի ունեցավ հանդիպում Մեծ Բրիտանիայի Չեստերի և Անգլիա Ռուսկին համալսարանների, Լոնդոնի կոմերցիայի դպրոցի, Լոնդոնի Բիզնեսի և իրավագիտության դպրոցի ներկայացուցիչ Լիլյա Հովհաննիսյանի հետ: Հանդիպման ընթացքում ներկայացվեցին բիզնես վարչարարության (MBA) մագիստրոսի կրթական ծրագրի հետ կապված բոլոր մանրամասները՝ընդունելության կարգը, առաջարկվող ծրագրերը և այլն:

Դեկտեմբերի 2-ին անցկացվեց արտասահմանցի ուսանողների համար կազմակերպվող բակալավրական ծրագրի առաջին դասը՝ «Մաթեմատիկա» առարկայից: ՀՊՏՀ այս տարի ընդունված արտասահմանցի ուսանողների այս խումբը բաղկացած է 14 ուսանողից, այդ թվում՝ 13-ը Հընդկաստանի քաղաքացի, 1-ը՝ Էստոնիայի (ազգությամբ հայ): Նույն օրը մեկնարկեցին նաև օտարերկրացիների նախապատրաստական խմբի դասերը:

ՀՊՏՀ ֆիզդաստիարակության, ԱԻ և ՔՊ ամբիոնի և ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ դեկտեմբերի 3-ին տեղի ունեցավ բազկամարտի անհատական առաջնություն՝ տարբեր ֆակուլտետների 32 մարզիկների մասնակցությամբ՝ 65, 75, 85 և ավելի կգ քաշային կարգերով:

Ըստ քաշային կարգերի՝ մրցանակային տեղերը բաշխվեցին հետևյալ կերպ. 65 կգ քաշային կարգում՝ 1-ին տեղ՝ ֆինանսական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Էդգար Հանեսյան, 2-րդ տեղ՝ ֆինանսական ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանող Մկրտիչ Մկրտչյան, 3-րդ տեղ՝ ՏԿ և ՄՏՀ 1-ին կուրսի ուսանող Էդվարդ Սարգսյան: 75 կգ քաշային կարգում 1-ին տեղ՝ ֆինանսական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Ալբերտ Տեր-Բալյան, 2-րդ տեղ՝ նույն ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող Հակոբ Միքայելյան, 3-րդ տեղ՝ կառավարման ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող Հայկ Շահբազյան: 85 և ավելի քաշային կարգում 1-ին տեղը զբաղեցրեց ֆինանսական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Իշխան Բաղդասարյանը, 3-րդ և 4-րդ տեղերը՝ համապատասխանաբար նույն ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Վաչե Շիրինյանը և 2-րդ կուրսի ուսանող Նժդեհ Խանջյանը:

Դեկտեմբերի 2-ին տեղի ունեցավ Տեմպուս ծրագրի «Հայաստանի բուհերի շրջանավարտների ծառայողունակության բարձրացման և մարդկային կապիտալի գնահատման բարձրագույն կրթության ցանց» (HENGEAR) նախագծի գործունեության մեկ տարվան նվիրված գործընկերների և շահագրգիռ կողմերի հավաքհանդիպում: Մասնակիցներին ողջունեց, հագեցած ու արդյունավետ աշխատանք մաղթեց ՀՊՏՀ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Պարույր Քալանթարյանը: Հանդիպմանը մասնակցում էին Տեմպուսի մեր բուհի ծրագրերը համակարգող Ներսես Գևորգյանը, Բոլոնիայի Ալմա Լաուրեայի միջհամալսարանական կոնսորցիումի հիմնադիր տնօրեն, պրոֆեսոր Անդրեա Կամելլին, ներկայացուցիչներ գործընկեր համալսարաններից և կազմակերպություններից:

ՀՊՏՀ ռեկտորատը դեկտեմբերի 4-ին կայացած նիստում շնորհավորեց միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի պրոֆեսոր Գրիգոր Աղաջանյանին՝ ծննդյան 75-ամյա հոբելյանի առիթով: Հոբելյարին շնորհավորական ուղերձ և ՀՊՏՀ ոսկե հուշամեդալ հանձնեց ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանը:

Դեկտեմբերի 5-ի ՀՊՏՀ գիտական խորհրդի նիստում ուսխորհրդի նախագահ Սևակ Խաչատրյանը, ներկայացնելով համալսարանի ուսանողական խորհրդի հաշվետվությունն ուսանողների ուսումնադաստիարակչական, գիտահետազոտական, հայրենասիրական դաստիարակության աշխատանքների մասին, ուշադրություն հրավիրեց անցնող տարում իրենց կատարածին՝ ընդգծելով ուսանողների հաջող մասնակցությունը հանրապետական միջոցառումներին, ռեկտոր Կորյուն Աթոյանի ֆինանսավորմամբ մոտ երկու տասնյակ ուսանողների այցերը արտերկրյա համալսարաններ՝ փոխանակման ծրագրերով, մի շարք բարձր պարգևների արժանանալու փաստերը: Գիտխորհուրդը բավարար գնահատեց ՈՒԽ գործունեությունը:

ՀՊՏՀ որակի ապահովման բաժնի պետ Ներսես Գևորգյանը զեկուցեց համալսարանի ինստիտուցիոնալ ինքնավերլուծության ուղղությամբ կատարվող աշխատանքների ընթացքի և ստորաբաժանումների խնդիրների մասին՝ ներկայացնելով հավատարմագրման գործընթացը, ընդգծելով, որ մեր համալսարանը պատրաստել և հանձնել է ինստիտուցիոնալ ինքնավերլուծության զեկույցը: Ներսես Գևորգյանի խոսքով, առաջիկայում պետք է նախապատրաստական աշխատանքներ կատարվեն՝ ծրագրային հավատարմագրմանն ընդառաջ: Բաժնի պետը, այնուհետև նաև ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Պարույր Քալանթարյանը խոսեցին գործընթացի կազմակերպական հարցերի մասին:

Գիտխորհուրդը քննարկեց և հաստատեց ատենախոսությունների թեմաներ և գիտական ղեկավարներ հաստատելու մասին մի շարք հարցեր:

Գիտխորհրդի որոշումներին կարող եք ծանոթանալ ՀՊՏՀ պաշտոնական կայքում (asue.am):



ՀՊՏՀ հայոց և ռուսաց լեզուների ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մարի Զաքարյանի և նույն ամբիոնի դասախոս Քնարիկ Ճոկլինյանի համահեղինակությամբ լույս է տեսել «Տնտեսագիտական նորաբանություններ, բաղադրյալ հատուկ անուններ, մենիմաստ և բազմիմաստ բառեր, հապավումներ, հոմանիշ-հականիշներ, համանուն-հարանուններ, ազատ և կայուն կապակցություններ» գիրքը:

Դեկտեմբերի 11-ին մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողները գրական-երաժշտական ցերեկույթում ներկայացրեցին հայ կերպարվեստի պատմության մեջ իր ուրույն ձեռագիրն ունեցող, հայ ժողովրդի կյանքն ու ճակատագիրը հայրենասիրական շեշտադրումներով ու խոհականությամբ մարմնավորող արվեստագետ Վարդգես Սուրենյանցի կյանքն ու ստեղծագործությունը: Ներկա էին ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանը, գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Գագիկ Վարդանյանը, մարքեթինգի ամբիոնի վարիչ Արարատ Զաքարյանը, մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի դեկան Թաթուլ Մկրտչյանը, դասախոսներ, ուսանողներ:

Բնօգտագործման տնտեսագիտություն մասնագիտության 1-ին և 2-րդ կուրսի մագիստրանտները բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Սուրեն Գևորգյանի ղեկավարությամբ և դոցենտ Ալիսա Գևորգյանի նախաձեռնությամբ դեկտեմբերի 9-ին անցկացրեցին բաց դաս «Թեղուտը որպես հանքարդյունաբերությունը խթանող աղբյո՞ւր, թե՞ էկոլոգիական աղետ» թեմայով: Մագիստրանտները ներկայացրեցին հիմնախնդրի կարևորությունը, իրենց խմբային և անհատական տեսակետները:

«Ամբերդ» հետազոտական կենտրոնում դեկտեմբերի 16-ին կայացավ մագիստրանտների՝ միջազգային առաջատար համալսարանների ուղեղային կենտրոնների շրջանում կատարած հետազոտության շնորհանդեսը: Խոսվեց Հուվերի, Կոլումբիայի, Լոնդոնի տնտեսագիտության և այլ ինստիտուտների ուղեղային կենտրոնների (ՈւԿ) գործունեության մասին: Երիտասարդ հետազոտողների խումբը (միջազգային տնտեսական հարաբերություններ, մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողներ) ուսումնասիրել և վերհանել էին միջազգային խոշոր ՈւԿ-ներից յուրաքանչյուրի նպատակները, առաքելությունը, գաղափարախոսությունը և գործունեության այն հիմնական բաղադրիչները, որոնցով դրանք առաջնորդվում են: Ինչպես նկատել էին մագիստրանտները՝ գրեթե բոլոր ուղեղային կենտրոնների համար կա մեկ ընդհանուր սկզբունք՝ տեսականը գործնականում կիրառելի դարձնելու կարողությունը:

Դեկտեմբերի 17-ին համալսարանում կազմակերպվել էր դասախոսություն՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասախոսների կողմից: Դասախոսությանը մասնակցում էին ինչպես ՀՊՏՀ-ականները, այնպես էլ այն ավագ դպրոցների աշակերտները, որոնց հետ բուհը համագործակցում է: Ծրագիրը կոնսերվատորիայի «Երաժշտական զրուցակից» գեղագիտական-կրթական նախագծի շրջանակներում է: Դասախոսությամբ հանդես եկավ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասախոս, երաժշտագետ Սեդա Շեյրանյանը: ՀՊՏՀ օտար լեզուների ամբիոնի դասախոս Լուսինե Կարագուլյանը, ով ծրագրի կազմակերպական աշխատանքներն իրականացնող է մեր բուհում, աշակերտներին ընդհանուր տեղեկություն ներկայացրեց համալսարանի ֆակուլտետների, կազմի և այլնի վերաբերյալ, իսկ դասախոսության ավարտից հետո նրանց հետ շրջայց կատարեց ֆակուլտետներում՝ ծանոթացնելով համալսարանի առօրյային:

ՀՊՏՀ մեծ դահլիճում դեկտեմբերի 20-ին տեղի ունեցավ գիտական խորհրդի ընդլայնված նիստը՝ բուհի ղեկավարության, դեկանների, պրոֆեսորադասախոսական կազմի, աշխատակիցների, ուսանողների մասնակցությամբ: Համալսարանի ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանը հանդես եկավ «ՀՊՏՀ 2013 թվականի ուսումնագիտական ու ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները և 2014 թվականի բյուջեի նախագծի հիմնական ցուցանիշները» զեկուցմամբ:

Ռեկտորն առանձին-առանձին ներկայացրեց բուհի տարբեր ոլորտները, իրականացված աշխատանքները, առկա հիմնախնդիրները, դրանց լուծման ուղիները, անդրադարձավ համալսարանի կրթական գործունեության կազմակերպմանը, ներկայացրեց պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողների և շրջանավարտների, ուսման առաջադիմության, փոխատեղման, հեռացված, ազատված և վերականգնված ուսանողների թվերը, կրթության որակին վերաբերող խնդիրները, ուսանողների փորձառության կազմակերպման պատկերը, ուսումնամեթոդական աշխատանքները: Համալսարանի ղեկավարը մանրամասն ներկայացրեց

նաև համալսարանում գիտահետազոտական և միջազգային գործունեությունը, հասարակայնության հետ կապերի ուղղությունը, ուսումնադաստիարակչական աշխատանքներն ու ֆիզիկական դաստիարակությանը վերաբերող քայլերը, անդրադարձավ համալսարանի տնտեսական գործունեությանը: Ռեկտորը հաշվետվությունն ամփոփեց 2013թ բյուջեի կատարողականի և 2014 թ բյուջեի նախագծի հիմնական ցուցանիշների ներկայացմամբ: Բուհի ղեկավարը հայտնեց, որ հունվարից 10 տոկոսով կբարձրացվի նաև աշխատակիցների աշխատավարձը: Կորյուն Աթոյանի զեկուցումից հետո ելույթ ունեցան ՀՀ և աուդիտի ֆակուլտետի դեկան Աշոտ Մաթևոսյանը, մարքեթինգի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Արարատ Զաքարյանը: Գիտխորհուրդը միաձայն հավանության արժանացրեց ՀՊՏՀ 2013 թվականի ուսումնագիտական ու ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները և 2014 թվականի բյուջեի նախագծի հիմնական ցուցանիշները և հանձնարարեց ռեկտորատին հաշվետվությունը ներկայացնել համալսարանի խորհրդի քննարկմանն ու հաստատմանը: Ընդլայնված նիստի ավարտից հետո գիտխորհուրդն աշխատանքները շարունակեց հիմնական կազմով:

«Հայրենիքը սկսվում է բնությունից» խորագրի ներքո հանդես է գալիս բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ, աշխարհագրական գիտությունների թեկնածու Վոլոդյա Մանասյանը:

«ԱՐՓԻ ԼԻՃ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԸ

ՀՀ Կառավարության 2009 թ. թիվ 405-Ն որոշմամբ Արփի լիճը և նրա ջրահավաք ավազանն ընդգրկող տարածքն անվանվել է ««Արփի լիճ» ազգային պարկ»: Ազգային պարկը գտնվում է ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի և Աշոցքի տարածաշրջաններում: Այն բաղկացած է արևմտյան, արևելյան, Արդենիսի, Ալվարի և Ախուրյանի կիրճ աշխարհագրական տեղամասերից: Արևմտյան և արևելյան տեղամասերն իրարից բաժանվում են Հայաստան-Վրաստան մայրուղով: Ազգային պարկը արևմուտքում սահմանակից է Թուրքիային, հյուսիսում՝ Վրաստանին, տարածքի ընդհանուր մակերեսը 21 179,3 հա է: Ազգային պարկի ստեղծումը Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության Կովկասյան նախաձեռնության մասն է, որը հիմնվում է Հարավային Կովկասի էկոտարածաշրջանում յուրահատուկ կենսաբազմազանության պահպանության վրա և նպաստում է Հայաստանի և Վրաստանի համագործակցությանը՝ Շիրակ-Ջավախքի տարածաշրջանում, անդրսահմանային միջպետական համագործակցության զարգացման միջոցով: Մասնավորապես, իրականացված հետազոտությունների արդյունքում հարևան հանրապետությունները համաձայնել են ձեռնարկել համատեղ բնապահպանական և գյուղական զբոսաշրջության զարգացման միջոցառումներ՝ ուղղված անդրսահմանային Շիրակ-Ջավախք կարևորագույն բնապահպանական տարածքի սահմաններում պահպանվող տարածքների ստեղծմանը (ազգային պարկերի) և պահպանման գոտիներում գտնվող գյուղական համայնքների և բնակավայրերի կայուն զարգացմանը (գյուղական զբոսաշրջություն):

«Արփի լիճ» ազգային պարկի հիմնական կենսագործունեությունը Արփի և Արդենիս լճերի և Ախուրյան գետի վերին հոսանքի ձախակողմյան վտակների ավազանների, ինչպես նաև Ջավախքի լեռնաշղթայի հարավարևմտյան լեռնալանջերի ջրային և ցամաքային էկոհամակարգերի տարածքներում ուղղաձիգ լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության պահպանությունը, կազմակերպումը և իրականացումն է, ինչպես նաև դրանց գիտական ուսումնասիրության ապահովումը:

Արփի լճի ջրավազանին բնորոշ լեռնային տափաստանները, մերձալպյան մարգագետիններն ու խոնավ տարածքները հատուկ են Հարավային Կովկասին և տարածվում են միայն այս տարածաշրջանում, որը տեղաբաշխված է Թուրքիայի, Հայաստանի և Վրաստանի միջև: Վերոհիշյալ համակարգերի պահպանության անհրաժեշտությունը պայմանավորվում է նրանով, որ լճի տարածքում բնակվող մի շարք թռչունների տեսակներ գրանցված են «ՀՀ կենդանիների Կարմիր գրքում» և որոշ տեսակներ վտանգված են կամ միջազգային մակարդակով գտնվում են անհետացման եզրին: Թռչունների շատ տեսակներ շարունակում են տուժել ոռոգման ջրի անարդյունավետ օգտագործման և լճի հայելու մակարդակի անընդհատ տատանումների, լճի ափամերձ տարածքում գյուղատնտեսական կենդանիների չկանոնակարգված արածեցման, խոտհնձի ազդեցության, փեթակների և մեղվանոցների տեղադրման, վայրի հատապտուղների, սնկերի, դեղաբույսերի և տեխնիկական հումքի հավաքելու պատճառով:

Աշոցքի սարահարթը, որտեղ տեղաբաշխված է «Արփի լիճ» ազգային պարկի տարածքը, բնութագրվում է խիստ, առավելապես ցամաքային կլիմայական պայմաններով: Օդի միջին ջերմաստիճանը սարահարթի կենտրոնական մասում հուլիսի կեսերին կազմում է 15˚C: Միջին ջերմաստիճանը հունվարին կազմում է -13˚C, մինչև +13˚C՝ հուլիսին, իսկ միջին տարեկան ջերմաստիճանը +1˚C է: Դրական ջերմաստիճանով օրերի քանա-

կը տարեկան կազմում է 210 օր, իսկ վեգետացիոն ժամանակաշրջանի տևողությունը 160 օր է: Կենսազանգվածի քանակը ջերմության պակասության պատճառով փոքր է: Ալպյան գոտու ցածրադիր մասերում մերձալպյան խոտերն են, իսկ բարձր մասերում՝ ալպյան գորգերը:

Խիստ ցամաքային կլիմայի և բացարձակ բարձրությունների պատճառով գերիշխում են անտառազուրկ լեռնային տափաստանները, մերձալպյան և ալպյան մարգագետինները: Տարածքն անտառազուրկ է դարձել երկրաբանական սառցային դարաշրջանում: Ամբողջ սարահարթով ցրված են սոճու տնկադաշտեր, որոնք ստեղծվել են դեռևս խորհրդային տարիներին՝ 1930-1950 թթ.: Խիստ կլիմայի և անբարենպաստ ագրոէկոլոգիական պայմանների պատճառով բնակչության խտությունը այստեղ համեմատաբար ցածր է (1 կմ^2 վրա՝ 23 մարդ, իսկ միջին մարդաշատությունը՝ 277 մարդ): Ջմռանը գրեթե 4 ամսով տարածաշրջանի արևմտյան հատվածի մի շարք համայնքներ (Արդենիս, Ալվար, Աղվորիկ, Պաղակն և այլն) գործնականում մեկուսացված են լինում հանրապետության մնացած բնակավայրերից՝ խորը ձնածածկի (1,5 մետր և ավելի), ինչպես նաև ճանապարհների անանցանելիության պատճառով:

Սարահարթի երկրաբանական կառուցվածքում առկա են միոցենի, վերին պլիոցենի և պլեյստոցենի դարաշրջանների հրաբխային ապարներ: Ռելիեֆը հարթ է և թույլ ալիքավոր, իսկ բացարձակ բարձրացումները տատանվում են 1500-ից 3042 մետրի սահմաններում: Լճերը հրաբխային ակտիվության արդյունք են և ըստ ծագման դասվում են տեկտոնաամբարտակման խմբին: Հողերի կազմը և կառուցվածքը պայմանավորված է բացարձակ բարձրություններով, լեռնալանջերի դիրքադրությամբ և այլ բնական պայմաններով: Եղնախաղի և Ջավախքի լեռնաշղթաների բարձրադիր տեղամասերը ծածկված են բարձրլեռնային մարգագետնային հողերով, որոնք նախալեռներում փոխարինվում են մարգագետնային գորշ հողերով և թույլ զատորոշվող, բայց գունավորված (դարչնագույն) սակավաջուր մեխանիկական կազմ ունեցող հողերով: Արփի լճի սարահարթը առավելապես ծածկված է լեռնային սևահողերով, որոնցում բուսական մնացորդների հանքայնացումը և ձևափոխությունը հանգեցրել է հումուսանյութի բարձր կուտակման (11-12% և ավելի): Սարահարթի ցածրադիր տեղամասերում և Ախուրյան գետի ավազանում տարածված են մարգագետնաճահճային հողերը՝ հումուսատղմային տորֆացած և տիպիկ ու տափաստանացված ենթատիպերով:

Ազգային պարկի արևմտյան տեղամասը պահպանում է Արփի լճի ամբողջ ջրավազանը (14 964,9 հա), իսկ արևելյան տեղամասը (54 08 հա)՝ Ջավախքի լեռնաշղթայի ծախակողմյան լանջերից հոսող Աշոցք և Ղուկասյան գետերի ջրավազանների մեծ մասը: Այս 2 գետերը միանում են Ախուրյանի կիրճից դեպի հյուսիս և ոռոգում են սարահարթը կիրճի միջոցով: Աշոցքի սարահարթը համարվում է հանրապետական կարևոր ջրահավաքներից և ջրամատակարարման տարածաշրջաններից մեկը, որտեղից Գյումրի քաղաքը և բազմաթիվ գյուղական համայնքներ ու բնակավայրեր ստանում են խմելու ջուր, իսկ հոսանքն ի վար տեղաբաշխված մի շարք համայնքները, ներառյալ Արարատյան դաշտը՝ նաև ոռոգման ջուր:

Արփին բնական լիճ էր մինչև 1950 թ., երբ այն պատվարվեց արհեստական ջրանցքի միջոցով՝ ոռոգման ջուր մատակարարելու համար: Ջրանցքի ջուրն օգտագործվում է Գյումրու ՀԷԿ-ի համար: Մինչև պատվարի կառուցումը լճի ջրատարողությունը կազմում էր 5մլն մ^3, լճի միջին խորությունը 50-70 սանտիմետրից քիչ էր, իսկ հայելու ընդհանուր մակերեսը մոտ 5 կմ^2 էր: 1956 թ. Արփի լիճը վերածվեց ջրամբարի: Պատվարելուց հետո լճի մակերեսը մեծացել է մինչև 22,1կմ^2, ջրատարողությունը ավելացել է մինչև 90 մլն մ^3, իսկ միջին խորությունը՝ 1-1,5 մետր: Ջրամբարի առավելագույն ջրատարողությունը կազմում է 110 մլն մ^3: Վերջին տարիներին ջրամբարն օգտագործվում էր իր ներուժի կեսից պակասի չափով, ինչը հանգեցրեց ջրի մակարդակի էական տատանումների: Ջուրը առավելագույն մակարդակի է հասնում հունիսին: Արդենիս լիճը (10 հա) ևս մեկ բնական լիճ է, որը գտնվում է Աշոցքի սարահարթում: Այն համարվում է ջրլող թռչունների համար կենսական նշանակություն ունեցող ապրելավայր, իսկ ամռան ընթացքում այս լճից գոյացող խոնավ տարածքներում (ճահճուտներում) բնադրվում է հազվագյուտ մոխրագույն կռունկը:

(Շարունակելի)

Հիրիկ սիբիրյան

Թրաշուշան բարակ

Եղեգ հարավային



ՍԱՅԱԹ ՆՈՎԱ - 300

Հայ մեծանուն երգիչ-բանաստեղծ Սայաթ-Նովայի երեքդարյա (1722 - 1795 թթ.) հոբելյանը Հայաստանում և նրա սահմաններից դուրս նշվում է 2012 թվականից և 2013 թ. ընթացքում շարունակել է մեր մշակութային կյանքը հարստացնել բազմաթիվ միջոցառումներով: Այդ իրադարձությունն ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2012-2013 թթ. հռչակավոր մարդկանց և հայտնի իրադարձությունների օրացույցում:

«Տնտեսագետի» խնդրանքով ՀՊՏՀ հայոց և ռուսաց լեզուների ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մարի Զաքարյանը *վերլուծում է Սայաթ-Նովա մարդու, ստեղծագործողի կերպարը, պարզաբանում նրա ստեղծագործական հավերժումի գաղտնիքն ու գնահատում նրա դերը մեր մշակութային ժառանգության մեջ:*

ԳԵՂԵՑԻԿԻ ԵՐԳԻՉՆ ՈՒ ԿՅԱՆՔԻ ՄԵԾ ՍԻՐԱՀԱՐԸ

XXI դարի՝ մեր այսօրվա հայեցակետով փորձենք պարզել, թե որն է այն գաղտնիքը, որ 300 տարի առաջ ապրած ստեղծագործողի՝ Սայաթ-Նովայի տաղանդի մեծությունը ոչ միայն իր ժամանակին է քննություն բռնել, այլ արդիական է նաև այսօր: Ապրելով XVIII դարում՝ Սայաթ-Նովան իր գրական վաստակով դարձավ սիրո, մարդասիրության, արդարության և ճշմարտության երգիչ՝ ողջ կյանքում պայքարելով ստի, կեղծիքի ու անարդարության դեմ: Ստեղծագործելով տարբեր լեզուներով, հասկանալով ու դավանելով համամարդկային արժեքներ՝ հանճարեղ բանաստեղծը դրանով իսկ փորձում էր լայնացնել աշխատավոր մարդու աշխարհաճանաչողությունը և հնարավորինս զսպել նախանձի, խաբեության, անիրավության և անհանդուրժողականության տիրույթները: Ճիշտ է՝ բոլոր ժողովուրդների մոտ էլ այդ բարձրագույն համընդհանուր արժեքները գնահատվել և արժևորվել են ըստ ամենայնի, և այս հարցերը զբաղեցրել են նաև այլևայլ ժողովուրդների մտավորականներին, սակայն Սայաթ-Նովայի պարագայում խնդիրն այլ է. արքայի և բանաստեղծի կամ արժեքային տարբեր համակարգերի բախման պատճառով են այստեղ խառնվում արդարությունն ու անիրավությունը, ճշմարտությունն ու սուտը, ազնվությունը, կեղծիքն ու շողոքորթությունը: Այս հուզական ալեբախումների ժամանակ էլինչում է մեծ ստեղծագործողի սրտակեղեք գանգատը՝ «Թաքավուր իս, դիվանս արա…», «Ա՛րդար դատե, չէ՞ որ թաքավուր իս դուն»: Իր անձնական սիրո ողբերգությունն էլ հիմք ընդունելով՝ Սայաթ-Նովա մտածողն ու իմաստասերը բացահայտում է այդ բարձր արժեքների նշանակությունը: Սայաթ-Նովան գեղեցիկի երգիչ է, կյանքի մեծ սիրահար: Նրա համար գեղեցկությունն այն տարածությունն է, որը կարողանում է սիրո և արդարության արժեքները միաձուլել և մարդուն մարդ պահել: Նա միայն սիրած էակին չէ, որ սիրում է, այլ ընդհանրապես մարդուն, կյանքը և մեծ աշխարհը: Մարդ արարածի էությունն ու գոյության խորհուրդն էլ բանաստեղծն առնչում է սիրուն: Նրա համոզմամբ՝ միայն սերն է հնարավորություն տալիս մարդուն՝ մաքրվել և բյուրեղացնել իր վերաբերմունքը շրջապատի, կյանքի և մեծ աշխարհի հանդեպ: Եվ այսպես, հումանիստ մարդը, մտածողն ու ստեղծագործողը մարդու փրկության ուղիները որոնում ու գտնում է սիրո և գեղեցիկի կիզակետում:

Ապրելով բարդ սոցիալ-պատմական իրականության մեջ՝ Սայաթ-Նովա մարդն ու բանաստեղծը կյանքի դառնությունները միշտ դիտարկում է հակադրության մեջ: **Թամամ աշխարի պտուտ եկած**, աշխարհի չարն ու բարին ճաշակած, բազում անարդարությունների, վշտի ու դառնության վկան իր ապրած կյանքի փորձով համոզվել է, որ մարդ արարածը՝ շահամոլ, ստախոս, իրականությունից վեր է կանգնում, հոգեպես բարձրանում ու վեհանում է միայն սիրո միջոցով:

Բարդ ու փոփոխական այս աշխարհում այսօրվա հայեցակետից քննելով մեծ սիրահար, կնամեծար, կնոջ գեղեցկությունն ու հմայքը գովերգող տղամարդ ու երգիչ Սայաթ-Նովայի արվեստը՝ մեզ թույլ ենք տալիս ասել, որ հումանիստ բանաստեղծը սիրո այնպիսի երգիչ է, որը երազում է մարդուն տեսնել առանց կեղծի ու խաբեության՝ արդար և ազնիվ. «Ղուրթս է՛նդուր ճամփա չի գընում՝ շատացիլ է խալխի սուտըն…»: Նա ճշմարիտ ու բարձր արժեքներ կրող մարդուն է ցանկացել տեսնել, որին, սակայն, չի գտել: Այդպես էլ արքայի և բանաստեղծի բախումը ավարտվում է վերջինիս խոր հիասթափությամբ. նրան վտարում են արքունիքից, և այս հարցում իր ոչ երկրորդական դերն ուներ նաև վրաց Անտոն կաթողիկոսը, որը երգչին մեղադրում էր գաղափարական առումով՝ անվանելով «սուֆի և սոփեստ»: Կարծում ենք՝ այս մեղադրանքի հիմքում հետևյալ հավաստումն է. Սայաթ-Նովա անհատը կամրջում է եռաչափ ժամանակի մեջ դրսևորվող մարդասիրական գաղափարները, որոնց համար ժամանակին հալածվել են նաև սոփեստները և սուֆիները՝ մասնավորապես հեղինակությունների և

իշխանավորների դեմ ոտնձգություններ կատարելու համար: Բոլոր դեպքերում, Սայաթ-Նովայի և վրաց արքունիքի հարաբերությունների լարվածությունը ազդել է ստեղծագործող անհատի հոգեբանության վրա: Եթե այն 1752 թ. այնքան էլ զգալի չէր, ապա 1760-62 թթ. երկրորդ բախումը նրան խոր հիասթափության և հոռետեսության է հանգեցնում: Բանաստեղծը միաժամանակ մեծ պայծառատես էր, որովհետև գիտեր, որ իրեն պատժելու են, և ինքը նեղ լուսամուտից՝ «փանջարայից» է աշխարհին նայելու: «Կյանքի սեր» հասկացության մեջ էլ հանճարեղ ստեղծագործողի «սազը» միշտ վառ ու զրնգուն են պահում գոզալի՝ սիրած կնոջ հանդեպ տածած զգայական ապրումները.

Յիս էլ ուրիշ յար չի՛մ սիրի, աշխարումըս
դո՛ւն իս իմըն,
Թե մե շափաթ քիզ չի՛մ տեսնի, կու կըտրիմ
քամանչի սիմըն…
…Գիշեր-ցերեկ ման իմ գալի, էշխեդ յանա-յանա,
գո՛զալ,
Անգամ արա, մա՛տաղ իմ քիզ, մե քիչ կա՛մաց
գընա, գո՛զալ:
Աշխարըս ո՞ւմն է մընացի, վուր ինձ ու քիզ մընա,
գո՛զալ…

1742 թ. կամ 1744 թ. մինչև 1752 թ. Սայաթ-Նովան վրաց արքունի երգչի փառքն էր վայելում, որտեղ և հանդիպում է Թեյմուրազի դուստր և վրաց Հերակլ թագավորի քույր Աննա Բատոնիշվիլուն՝ իր «քայլող սիրուն» և պոեզիայի հերոսուհուն: Մեծն Թումանյանը, անդրադառնալով հայ միջնադարյան սիրերգակներին՝ Նաղաշ Հովնաթանին, Նահապետ Քուչակին և Սայաթ-Նովային, նշում է, որ վերջինս «…մի հոյակապ սիրահար է, բռնված ու բռնկված սիրո հրդեհով…» և, ի տարբերություն նախորդների, սիրած էակի արտաքին գեղեցկությանը համեմատաբար քիչ է անդրադառնում՝ առավել շատ վրձնելով նրա սիրո պատճառած վիշտը, աղեխարշ, խոշտանգող ցավն ու տվայտանքը. «Աջաբ քիզ ի՞նչ գեթ իմ արի, կենում ես խըռով, ա՛չկի լուս…», «Աշխարս աշխարով կըշտացավ, իս քիզանից սով, ա՛չկի լուս…», «Դո՛ւն կրակ, հագածըդ կրակ՝ վո՞ւր մէ կրակին դիմանամ…»:

Մեր կարծիքով՝ Սայաթ-Նովայի տաղերում առանձնահատուկ տեղ ու դեր ունի «Քամանչա» խաղը. այն սերունդներին ուղղված յուրօրինակ կտակ է իր և վրաց արքունիքի միջև առաջացած հակասությունների, բանաստեղծի ապրած հոգեկան ծանր ու դժնի ապրումների մասին: Բոլոր դեպքերում, Սայաթ-Նովայի տաղերից միշտ հառնում է հանճարեղ ստեղծագործողը, մտածողն ու իմաստասերը. իր խոսքի արժեքը սթափ գիտակցող բանաստեղծը.

Ամեն մարթ չի՛ կանա խըմի՝ իմ ջուրըն ո՛ւրիշ ջըրեն է,
Ամեն մարթ չի՛ կանա կարթա՝ իմ գիրըն ո՛ւրիշ գըրեն է.
Բունիաթըս ա՛վազ չիմանաս՝ քարա՛փ է, քարու կըրե՛ն է՝
Սելավի պես, առանց ցամքիլ, դուն շուտով խարաբ
մի՛ անի:
…Մի՛ ածի խուզի առչիվըն լալ ու գովհար,
Սա՛յաթ-Նովա:

Արքունական դավերի պատճառով բանաստեղծն արդեն հոգին փակում է արտաքին աշխարհի հանդեպ և իր մեջ ամփոփված՝ ներանձնական երկխոսություն վարում: Այս տարիներից էլ գրողը վրձնում է իր՝ բանաստեղծ - մտածողի՝ հպարտ մենակյացի կերպարը.

Դուն է՞ն գըլխեն իմաստուն իս, խիլքըտ հիմարին
բաբ մի՛ անի…

Սուտը, դավաճանությունը, նախանձն ու անհանդուրժողականությունը տեսած հանճարեղ բանաստեղծն էլ իրեն իրավունք է վերապահում, արդեն որպես Ուսուցիչ, մարդկանց ուսուցանել աշխարհի կարգը՝ մարդ-մեծ աշխարհ, մարդ-մարդ հարաբերությունները՝ իր կյանքի դառնություններն ու փորձառությունները նկատի առնելով: Ներանձնական ապրումներում, հոգեկան ծանր մտորումների մեջ բանաստեղծի հոգին թռչում էր «թռչունի պես», չնայած հոգու աչքը փակ է շրջապատի հանդեպ: Աշխարհը, կյանքը, սերն ու մահը, արարումն ու ավերը երկարժեք հակաբևեռ հակադրությունների մեջ են, և դրանք այդպես է արժևորում Սայաթ-Նովան հետագա խաղերում՝ անդրադառնալով կյանքի հանդեպ ունեցած իր սիրո փիլիսոփայությանը. «Սովորողին ուսում տվողներից եմ, Խրատ տվողուշկի բերողներից եմ, Սիրտըս-կոտրած, կինքըս զոհողներից եմ», «Դովլաթըն էթիբար չունի, յիփոր կերթա ուրուշ քարով, Լավ մարթն էն է՝ գլուխըն պահե աշխարումըս էթիբարով…», «Մարդուս էթիբար չը մնաց, դարի ձեռնեմեն դադ կոնիմ, Դիփ խառնակիչ ու ավիրող, չարի ձեռնեմեն դադ կոնիմ» և եզրակացնում.

….է՛նդուր կուլամ՝ սիրտը կոտրած առյուծըն
Գող աղվեսեն է իր վերքըն ստացիլ.
Ազնիվ մարթը ապրուստի է ման գալի,
Ամեն գյադա զարբաբի է տիրացել:

Սիրելով խալխին՝ Սայաթ-Նովան ցավում է, որ կյանքի ծանր բեռան տակ, խաբեության ու ապականության մեջ թաղված հասարակ մարդը չի կա-

րողանում հաղթահարել կյանքի հարվածները: Նա հոգնել է դրանից, և ժամանակն է, որ նա շուռ տա իր «չարխի փալ/ղ/ագը»: Բախտի այդ անիվի պտտման համար, սակայն, տեղ չկա, որովհետև աշխարհը նեղմիտ մարդու համար ստի մեջ է թաղված: Աշխարհը շատ է նեղացել, մարդիկ ապրում են իրենց էգոիստական նկրտումներով: Գրողը սպանիչ փաստեր է արձանագրում. վստահության պակաս կա մարդկանց մեջ, և թերևս այս է նաև պատճառներից մեկը, որ մարդկանց լայնախոհ աշխարհատեսություն սովորեցնելու համար էլ Սայաթ-Նովան մի քանի լեզվով է ստեղծագործում: Հասարակ, աշխատավոր մարդն իր ստախոսության և նեղմտության պատճառով միշտ էլ խաբվում է կյանքում: Բարեկամը թշնամի է դարձել՝ «Ասկ-բարեկամ մեկ-մեկ հիռու կու քաշվին», և նա այդ խնդիրն է փորձում լուծել.

էրեգ լավ էր կանց վուր էսօր,
վաղերումեն բեզարիլ իմ ....
Մարթ համաշա մեկ չի ըլի,
խաղերումեն բեզարիլ իմ.....

Սայաթ-Նովան Աբովյանից դեռևս մեկ դար առաջ հայ գրականության (չափածո) լեզուն է դարձրել կենդանի, խոսակցական Թիֆլիսի բարբառը: Հանճարեղ ստեղծագործողի գրական ազդեցության ոլորտը ձգվում է մինչև XX դար՝ Ե. Չարենց («Տաղարան»), Պ.Սևակ («Մարդը ափի մեջ»):

Մեծն Սայաթ-Նովան հայ ոգեղենության դարերի մեջ փոխանցվող դրոշը Մ. Մաշտոցից, Մ. Խորենացուց, Գ. Նարեկացուց փոխանցեց հաջորդներին՝ Խ. Աբովյանին, Հովհ. Թումանյանին, Ե. Չարենցին, Պ. Սևակին՝ Պրոմեթևսին նմանվող ըմբոստ հոգիներին, որոնք վերարտադրում են հայի տեսակի անվերջանալի պարույրը: Իհարկե, հայ իրականության մեջ կծնվեն նոր մեծեր, որոնք էլ կդառնան հայ ոգեղենության նոր մունետիկները:

«ՄԱՐՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿ»-Ը՝ հիշատակի տուրք 13 հերոսներին

ՀՊՏՀ մեծ դահլիճում դեկտեմբեր 6-ին թևածում էր ռազմահայրենասիրական տրամադրություն. բուհի զոհված ազատամարտիկներին նվիրված «Մարտական հաշվարկ» գրքի շնորհանդեսն էր՝ կազմակերպված ՀՊՏՀ ուսանողական խորհրդի կողմից: Սա ոչ միայն շնորհանդես էր, այլև մեծարման, հիշատակի ու հարգանքի տուրք Արցախյան ազատամարտում իրենց կյանքը զոհած մեր բուհի ուսանողներին: Թերևս, բառերն ի զորու չեն արտահայտելու այն հուզումը, հպարտությունն ու հայրենասիրական զգացումները, որ ողողել էին մեր դահլիճը: Միջոցառմանը մասնակցում էին ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանը, պրոռեկտորները, բուհի պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողներ, Աժ պատգամավորներ Տաճատ Վարդապետյանն ու Կարեն Ավագյանը, ազատամարտիկների ծնողներն ու հարազատները:

Շնորհանդեսի սկիզբն ազդարարեց ՀՀ օրհներգը, մասնակիցները հոտնկայս հարգեցին զոհված ուսանող-ազատամարտիկների հիշատակը: «Մարտական հաշվարկի» հեղինակ, ՀՊՏՀ ուսանող Հայկ Բեջանյանն անուն առ անուն թվարկեց իր գրքի 13 հերոսներին, ներկայացրեց յուրաքանչյուրի կյանքի, գործունեության մասին ուշագրավ պատմություններ: Արցախյան ազատամարտին մեր բուհից մասնակցած ուսանողներն են՝ Աբրահամյան Դերենիկ (Ատոմ), Ադամյան Արմեն, Ասրյան Արթուր, Բաբայան Վահրամ, Բաբլումյան Արմեն, Գրիգորյան Գագիկ, Դարբինյան Վոլոդյա, Իսկանդարյան Կարեն, Կարապետյան Արթուր, Հակոբյան Արմեն (Բենիամինի), Հակոբյան Արմեն (Իլյայի), Մանվելյան Կարեն, Միքայելյան Աշոտ:

Ներկաներին իր խոսքն ասաց ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանը՝ ելույթում կարևորելով Արցախյան հերոսամարտը՝ իբրև մեր պատմության ազգային ինքնագիտակցության զարթոնքի մի նոր էջ, իր երախտագիտությունը հայտնեց ազատամարտիկների ծնողներին ու հարազատներին: Ելույթի ավարտից հետո Կորյուն Աթոյանը բուհի ազատամարտիկներին հետմահու պարգևատրեց ՀՊՏՀ ոսկե հուշամեդալներով՝ պարգևները հանձնելով նրանց ծնողներին ու հարազատներին: Ելույթ ունեցավ նաև ՀՊՏՀ ՈՒԽ նախագահ Սևակ Խաչատրյանը՝ հավաստիացնելով, որ հարկ եղած դեպքում հանուն հայրենիքի իրենք ևս պատրաստ են անձնազոհության: Նա նաև տեղեկացրեց, որ ի պատիվ ՀՊՏՀ ուսանող-ազատամարտիկների «Նժդեհ» ջոկատի՝ ՀՊՏՀ-ում կհիմնադրվի «Նժդեհ» ռազմահայրենասիրական ակումբ: Ցուցադրվեց գրքի հերոսների մասին պատմող փոքրիկ ֆիլմը:

Միջոցառման ավարտին իրենց երախտիքի, շնորհակալական խոսքն ասացին ուսանող-ազատամարտիկների ծնողները, հարազատներն ու ընկերները: ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանին, գրքի հեղինակ Հայկ Բեջանյանին և ուսանողական խորհրդին շնորհակալություն հայտնեցին ծնողներ Զինաիդա Արեյանը, Ամալյա Գևորգյանը, Միքայել Կարապետյանը և ուրիշներ: Դերենիկ Աբրահամյանի ուսանողական ընկեր Տաճատ Վարդապետյանը նման ծանրակշիռ միջոցառման կազմակերպման համար շնորհակալություն հայտնեց ռեկտոր Կորյուն Աթոյանին, ուսանողական խորհրդին և գրքի հեղինակին: Շնորհակալական խոսքով հանդես եկան նաև ՀՊՏՀ դասախոսները:

1988 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ՄՌԱՅԼ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի պատմության ողբերգական էջերից մեկը դարձավ 1988 թվականի դեկտեմբերի 7-ի երկրաշարժը, որը փլատակների վերածեց հանրապետության հյուսիսարևմտյան տարածաշրջանը: Ավերվեցին 20 քաղաքներ, այդ թվում՝ Սպիտակը, Լենինականը (ներկայում՝ Գյումրի), Ստեփանավանը, Կիրովականը (ներկայում՝ Վանաձոր) և 300-ից ավելի բնակավայրեր: Ամբողջովին ավերվեց երկրաշարժի էպիկենտրոնում գտնվող Սպիտակ քաղաքը, որտեղ երկրաշարժի ուժգնությունը գնահատվեց 10 բալ: Սպիտակի երկրաշարժը դասվում է, այսպես կոչված, լրիվ ցիկլերի երկրաշարժերի դասին. այն արտահայտվեց նախացնցումներով և 4 րոպե հետո՝ հիմնական ցնցումներով ու հետցնցումներով:

Կործանարար երկրաշարժն ընդգրկեց Հայաստանի տարածքի 40%-ը, և աղետի գոտում հայտնվեց մոտ 1 մլն մարդ: Ավերման գոտին, որտեղ երկրաշարժի ուժգնությունը կազմեց 8 բալ և ավելին, ընդգրկեց 3000 կմ^2 տարածություն: Դադարեցին գործել 170 արտադրական ձեռնարկություններ: Հանրապետության 36 գյուղական շրջաններից տուժեցին 17-ը: Անօթևան մնաց 530 հազար մարդ: Տարբեր աստիճանի վնասվածքներ ստացավ մոտ 50.000 մարդ, որից 12.500-ը հոսպիտալացվեց, զոհերի թիվը կազմեց 25.000:

Զոհերը շատ էին հատկապես Գյումրիում ու Սպիտակում: Միայն Գյումրիում զոհվեց 17 հազ. մարդ: Մեծ կորուստներ ունեցան 8 գյուղական շրջանները, որոնք երկրաշարժի բարձր ուժգնության գոտում էին: Ավերվեց ՀՀ ամբողջ բնակարանային ֆոնդի 17 %-ը: Քանդվեց և վնասվեց ավելի քան 61 հազար բնակելի տուն, 200 դպրոց, 120 մսուր-մանկապարտեզ, 160 առողջապահական օբյեկտ, առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի 28%-ը: Մեծ վնաս հասցվեց նաև ճարտարապետական, պատմական, արվեստի հուշարձաններին: Տուժեց կրթական 917 օջախ:

Անսպասելի աղետը հանկարծակիի բերեց ծայրահեղ իրավիճակներում գործելու կոչված կազմակերպություններին և ծառայություններին: Կազմակերպված փրկարարական աշխատանքները հունի մեջ մտան 2-3 օր հետո: Երկրաշարժի առաջին րոպեներից անձնուրաց աշխատում էր ազգաբնակչությունը: Սակայն նրանց՝ փորձի և շատ հաճախ ծայրահեղ իրավիճակներում գործելու տարրական գիտելիքների պակասը բացասաբար էր անդրադառնում փրկարարական աշխատանքների արդյունավետության վրա, երբեմն պատճառ դառնում անտեղի զոհերի: Խիստ զգացվում էր անհրաժեշտ փրկարարական տեխնիկայի պակաս: Ազգաբնակչության և փրկարարների ջանքերով փլատակներից, զոհված կամ կենդանի, հանվեց ավելի քան 45.000 մարդ: Եթե այդ բոլորին հավելենք նաև Ղարաբաղյան պատերազմն ու Հայաստանի Հանրապետության տնտեսական-տրանսպորտային շրջափակումը, ապա դեկտեմբերյան երկրաշարժը և հաջորդող տարիները մեր ժողովրդի կյանքում մի մռայլ ժամանակաշրջան էր: Երկրաշարժի հետևանքով միայն արտադրական կորուստների ընդհանուր գումարը կազմեց 1,9 մլրդ խորհրդային ռուբլի, որը մեր հանրապետության տնտեսության համար ահռելի ծավալի կորուստ էր: Այն պատկերացնելու համար նշենք, որ Հայաստանի ազգային եկամուտը (նյութական արտադրության ոլորտում ստեղծված նոր արժեքը) 1987 թ. ընդամենը 6,35 մլրդ ռուբլի էր կազմում:

Երկրաշարժերի և այլ տարերային աղետների վնասների մասշտաբները գնահատելու և համեմատություններ կատարելու համար կիրառվում է «Վնասներ/ՀՆԱ» ցուցանիշը: Ըստ Համաշխարհային բանկի զեկույցի՝ 1988 թ. Սպիտակի երկրաշարժի հետևանքով Հայաստանի կրած ընդհանուր տնտեսական վնասները ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են 908% կամ 9 անգամ գերազանցել են երկրի ՀՆԱ-ի ծավալը: Համեմատության համար նշենք, որ 1955 թ. Ճապոնիայում Քոբեի երկրաշարժի հետևանքով վնասները կազմել են երկրի ՀՆԱ-ի 2,5%-ը, իսկ 2011 թ. Ֆուկուսիմայի երկրաշարժ-ցունամիի վնասը՝ 4%-ը: Ըստ անգլիական «The Economist» ամսագրի տվյալների՝ Սպիտակի երկրաշարժի զուտ տնտեսական վնասները, կորուստները գնահատվել են 50 մլրդ դոլար, որն իր ծավալով 11-րդն է մինչ այժմ եղած աղետներից: Որպեսզի պատկերացնենք այս վնասի մասշտաբները, նշենք, որ երկրաշարժի զուտ տնտեսական վնասի ծավալը 3 անգամ գերազանցել է Հայաստանի ՀՆԱ-ի արժեքային ծավալը:

Ներկայացնելով հազարավոր անտեղի զոհերի և մեծ ավերումների նկարագիրը՝ նպատակ ունենք զգոնության կոչելու՝ հնարավորինս դասեր քաղելու մեր մեծ ողբերգությունից: Մասնավորապես, հսկայական կորուստների հիմնական պատճառներից մեկն այն էր, որ ՀՀ ամբողջ տարածքում թերագնահատված էր սեյսմիկ վտանգը: Մասնագետներն այդ գոտում սեյսմիկ վտանգը գնահատել էին ընդամենը 7 բալ, այն դեպքում, երբ երկրաշարժի ուժգնությունը Սպիտակում գնահատվեց 10 բալ: Այսօր էլ Հայաստանի տարածքի զգալի մասը բարձր սեյսմիկ ռիսկայնության գոտում է, որն ավելի հրատապ է դարձնում ոչ միայն ընդերքի ցնցումների մշտական դիտարկումներն ու կանխատեսումները, այլև վթարային վտանգ ներկայացնող շենքերի ու կառույցների շինարարական ամրացումները: Ոչ պակաս կարևոր է նաև նման արտակարգ իրավիճակում բնակչության՝ կողմնորոշվելու, պատրաստվածության և իրազեկվածության մակարդակի բարձրացումը:

Սեյսմակայուն շինարարությունը ազգային անվտանգության կարևոր բաղադրիչներից է, որը ժողովրդի մեջ վստահություն կձևավորի, որ Սպիտակի ողբերգությունը մեր երկրում այլևս չի կրկնվի:

ՎԵՆԵՐԱ ՈՍԿԱՆՅԱՆ
ՀՊՏՀ ֆիզդաստիարակության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության ամբիոնի դոցենտ, քիմիական գիտությունների թեկնածու

ՀԱՄԱԿՐԵԼԻ ԴԱՌՆԱԼՈՒ ԱՐՎԵՍՏԸ
ՉԵՍՏԵՐՖԻԼԴ

«Տնտեսագետը» կրկին ձեր ուշադրությանն է ներկայացնում անգլիացի պետական գործիչ, դիվանագետ և գրող Ֆիլիպ Դորմեր Ստենհոպ Չեստերֆիլդի (1694 –1773թթ.) «Նամակներ որդուս» վերնագրով նամականին՝ ՀՊՏՀ փիլիսոփայության և հայոց պատմության ամբիոնի դոցենտ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Յուրի Հովականյանի թարգմանություն-մեկնաբանությամբ:

Այս շնորհակալ և ոչ դյուրին գործին Յուրի Հովականյանը ձեռնամուխ է եղել տարիներ առաջ և առաջին հրապարակումը «Տնտեսագետի» միջոցով ընթերցողին ներկայացրել 2011 թվականի հունվարյան համարում: Այնուհետև ուսանող երիտասարդությանն ուղղված խրատ-խորհուրդները, արժանավայել ապրելու հորդորները դարձան ամսագրի սպասված ու սիրելի խորագրերից մեկը և արժանացան բազմաթիվ արձագանքների՝ հավաստելով Չեստերֆիլդի հայրական խոսքերի արդիականությունը:

Սիրով հայտնում ենք, որ Չեստերֆիլդի «Նամակներ որդուս»-ը Յուրի Հովականյանի ջանքերով լույս է ընծայվել և ներկայանում է համահավաք ու ամբողջական: Ուշագրավ մի փաստ. ընդարձակ բնաբանում թարգմանիչ-հեղինակը անդրադարձ է կատարում նամակագրական արձակի ժանրին, Չեստերֆիլդի անձին ու գործունեությանը և այն զավեշտալի պատմությանը, որի շնորհիվ այդ նամականին դարձավ հանրության սեփականությունը:

Շնորհավորում ենք մեր գործընկերոջը և մաղթում ստեղծագործական նորանոր հաջողություններ:

ՆԱՄԱԿՆԵՐ ՈՐԴՈՒՆ

Նամակ XXXI
Բատ 1748 թ. փետրվարի 22

Սիրելի՛ տղաս, յուրաքանչյուր արժանապատվության և առաքինության հատուկ է որևէ թուլություն կամ արատ, որոնք, զարգանալով չափից ավելի, վերածվում են կա'մ մեկին, կա'մ մյուսին: Առատաձեռնությունը հաճախ դառնում է շռայլություն, խնայողությունը՝ ժլատություն, քաջությունը՝ անխոհեմություն, զգուշավորությունը՝ երկչոտություն և այն աստիճանի, որ ավելի մեծ խելամտություն է պահանջվում առաքինությունների մեջ չափը պահպանելու, քան դրանց հակադիր արատներից խուսափելու համար: Արատն իր իրական տեսքով այնքան ճանաչելի և վանող է, որ առաջին իսկ հայացքից մեր մեջ զզվանք է արթնացնում և հազիվ թե երբևէ կարողանա մեզ գայթակղել, եթե հենց սկզբից չի հագնում որևէ առաքինության դիմակ: Առաքինությունն ինքնին այնքան գեղեցիկ է, որ նվաճում է մեզ հենց առաջին հայացքից, իսկ հետագայում, երբ խորանում ենք նրա էության մեջ, ավելի ու ավելի է հրապուրում: Եվ մենք համարում ենք, որ ինչպես նրա, այնպես էլ ամեն գեղեցիկի մեջ հնարավոր չէ պատկերացնել որևէ ավելորդ բան: Հենց այստեղ է անհրաժեշտ ողջախոհությունը, որպեսզի չափավորենք և համապատասխան հուն ուղղենք մեր լավագույն մղումները:

Այժմ կձգտեմ այդ դատողությունը կիրառել ոչ թե որևէ առաքինության, այլ գերազանցության մի տեսակի հանդեպ, որը խոհեմության պակասի պատճառով ունենում է անմիտ և պարսավանքի արժանի հետևանքներ. նկատի ունեմ գիտելիքները, որոնք հաճախ եթե չեն ուղեկցվում սթափ մտքով, հանգեցնում են մոլորությունների և մեզ դարձնում են ամբարտավան և պեդանտ (գիտության մեջ ձևապաշտ, տառակեր): Եվ քանի որ դու օժտված ես այդ գերազանցությամբ և միևնույն ժամանակ չես տառապում չափից ավելի տարածված նրա թերություններով, ուրեմն, այն ամենը, որ քեզ կասի իմ փորձը, կարող է օգտակար լինել:

Իրենց գիտելիքներով հպարտ որոշ գիտակ մարդիկ խոսում են միայն վճիռ կայացնելու մասին և չեն հանդուրժում իրենց դատողությունների առարկում: Դա անխուսափելիորեն հանգեցնում է նրան, որ ում կպչում և վիրավորում են իրենց անհամբերությամբ և բռնությամբ, ապստամբում են բռնակալությունից ազատագրվելու համար՝ կասկածի տակ առնելով նաև նրանց օրինական հեղինակությունը: Ինչքան շատ գիտես, այնքան ավելի համեստ պետք է լինես, մի խոսքով, համեստությունը մեր փառասիրությունը բավարարելու ամենահուսալի եղանակն է: Եթե անգամ ինչ-որ բանում համոզված ես, ձևացրու, որ տատանվում ես, շարադրիր քո տեսակետը, սակայն մի' պնդիր, և եթե ցանկանում ես համոզել մյուսներին, նրանց զգացնել տուր, որ համոզել հնարավոր է նաև քեզ:

Կան մարդիկ, որոնք իրենց գիտունությունը ցուցադրելու նպատակով հաճախ դպրոցում պատվաստված նախապաշարվածության ուժով անընդհատ խոսում են հին հույների և հռոմեացիների մասին՝ որպես հերոսական անձերի, համարելով, որ մեր ժամանակակիցները նրանցից ավելի ցածր են: Մշտապես նրանց ձեռքին է դասականների հատորյակներից որևէ մեկը. նրանց գրավում են հին իմաստությունները, նրանք

չեն կարդում ժամանակակից բարբաջանքները և համոզված կերպով կարող են ապացուցել, որ վերջին հազար յոթ հարյուր տարիների ընթացքում ոչ մի գիտություն և ոչ մի արվեստ առաջընթաց չի ապրել: Ես ամենևին չեմ ցանկանում, որ դու հրաժարվես հին հեղինակներից, բայց չեմ ցանկանում նաև, որ պարծենաս, որ նրանք քեզ ավելի մոտ են: Ժամանակակիցների մասին խոսիր առանց արհամարհանքի, իսկ հների մասին՝ առանց խոնարհումի: Ինչպես առաջինների, այնպես էլ երկրորդների մասին դատիր՝ ըստ իրենց արժանիքների և ոչ տարիների հնության, և եթե քո գրպանում կա որևէ էլզեվիր (16–17-րդ դդ. հոլանդացի էլզեվիր ընտանիքի թանկարժեք հրատարակության գիրք), ցույց մի' տուր և նրա մասին խոսակցություն մի' բացիր:

Որոշ գիտուն այրեր տխմարաբար արտածում են հասարակական և անձնական կյանքին վերաբերող աֆորիզմներ հին հեղինակներից՝ դրանք բնութագրելով որպես «նման դեպք»: Նրանք չեն ցանկանում հասկանալ՝ առաջինը, որ աշխարհի արարչությունից սկսած երբեք չի եղել ամբողջությամբ նման երկու դեպք, և երկրորդը, որ ոչ մի դեպք որևէ պատմաբան չի շարադրել բոլոր հանգամանքներով հանդերձ, մինչդեռ, այդ հանգամանքների իմացությունը միանգամայն անհրաժեշտ է՝ դրանցից դեպի քո դատողություններն ուղևորվելու համար: Յուրաքանչյուր իրադարձության մասին դատիր՝ ելնելով էությունից, ուղեկցող հանգամանքներից և վարվիր համապատասխան ձևով. մի' հեռվիր միայն հին բանաստեղծների և պատմիչների հեղինակությունների վրա: Եթե հարմար է, ուշադրություն դարձրու այն դեպքերին, որոնք առաջին հայացքից նման են, սակայն, թող այդ համեմատություններն օգնեն քեզ և ոչ թե ղեկավարեն:

Մենք այնքան ենք տրվում դաստիարակությամբ ներշնչված նախապաշարմունքներին, որ ինչպես հներն էին աստվածացնում իրենց հերոսներին, նույն ձևով մենք պատրաստ ենք աստվածացնել նրանց խելագարներին: Ինչ վերաբերում է վերջիններին, ապա պատշաճ հարգանք հատուցելով հնությանը, պետք է ասեմ, որ նրանցից ամենաճշանավորները եղել են Կուրցիոսը[1] ու Լեոնիդասը: Բայց մի պահ պատկերացրու, որ որևէ անուղղելի պեդանտ պառլամենտում ֆունտից երկու պենս հարկ վերցնելու վերաբերյալ իր ելույթում այդ երկու հերոսներին բերում է որպես օրինակ այն բանի, թե մենք ինչ պետք է անենք և մեզ ինչպես պետք է զոհաբերենք հանուն հայրենիքի: Գիտուն, սակայն վիրավորված մտքով մարդիկ նման անմտությունների մեջ այնքան խորն են գնացել, որ ես ընդհանրապես չէի զարմանա, եթե նրանցից մեկն առաջարկեր ֆրանսիացիների հետ պատերազմի ժամանակ Տաուերում սագեր պահել, որովհետև եղել է նման դեպք. Հռոմը մեծապես շահեց այն բանից, որ Կապիտոլիումում շատ սագեր կային: Նրանք, ովքեր այդպես են մտածում և ասում, անհեռանկար են որպես քաղաքական գործիչ, ամենևին հռետոր չեն, այլ դատարկախոս:

Կա մարդկանց մեկ տարատեսակ ևս. նրանք պակաս դոգմատիկ են և նվազ ամբարտավան, բայց բավականին անհամեստ են: Դրանց թվում են հաղորդասեր և փայլուն պեդանտները, ովքեր նույնիսկ կանանց հետ զրուցելիս իրենց խոսքը համեմում են հունական և հռոմեական դիպուկ հղումներով, այն աստիճանի տնավարի են հույն և հռոմեացի հեղինակների հետ, որ տալիս են նրանց անունը և մականունը, որը վկայում է, որ նրանք մերձավոր հարաբերությունների մեջ են վերջիններիս հետ: Այսպես, նրանք սովոր են ասելու «ծերուկ Հոմերոսը», «այդ խորամանկ և ներգամիտ Հորացիոսը», Վերգիլիոսի փոխարեն կարող են ասել «Մարոն», իսկ Օվիդիոսի փոխարեն՝ «Նազոն»: Այդ պեդանտներին հաճախ ընդօրինակում են պճնամոլները. նրանք ընդհանրապես գիտելիք չունեն, սակայն հիշում են հին հեղինակների մի քանի անուն և աղավաղված անգիր անում մի քանի հատված: Եվ ահա նրանք հանդգնում են կրկնել դրանք բոլոր ընկերախմբերում՝ հույս ունենալով, որ կրթված մարդու անուն կհանեն: Այդ պատճառով էլ, եթե ուզում ես, որ քեզ մի կողմից չմեղադրեն պեդանտիզմի, իսկ մյուս կողմից չկասկածեն տգիտության մեջ, մի' աշխատիր մարդկանց ցույց տալ քո գիտակցությունը: Տանը հավաքված մարդկանց հետ խոսիր իրենց լեզվով և թող, որ այդ լեզուն լինի մաքուր և համեմված չլինի օտար բառերով: Երբեք մի' ձգտիր ավելի խելոք կամ գիտական երևալ, քան այն մարդիկ, որոնց միջավայրում գտնվում ես: Քո գիտակցությունը կրիր այնպես, ինչպես կրում են ժամացույցը՝ ներքին գրպանի մեջ, այն մի' հանիր մարդկանց մոտ և մի լարիր, միայն այն բանի համար, որ բոլորն իմանան, որ դու այն ունես: Եթե քեզ հարցնում են՝ ժամը քանի՞սն է, պատասխանիր, սակայն ժամը մեկ մի հայտնիր: Առավել ևս, եթե ոչ ոք չի հարցնում: Չէ՞ որ դու գիշերային պահակ չես: Ընդհանրապես հիշի'ր՝ գիտելիքը (նկատի ունեմ հին լեզուների և գրականության իմացությունը) ամենաօգտակար և անհրաժեշտ զարդարանքն է. այն չունենալն ամոթ է: Սակայն դրա հետ մեկտեղ ձգտի'ր խուսափել սխալներից և չարաշահումներից, որոնք շատ հաճախ ուղեկցում են նրան: Հիշի'ր նաև, որ արդիականությունն իմանալն ավելի անհրաժեշտ է, քան պատմությունն իմանալը, և դու ճիշտ կանես, եթե կատարյալ ձևով ուսումնասիրես Եվրոպայի ոչ թե անցյալը, այլ ներկան: Թեև կուզենայի, որ քաջ ծանոթ լինեիր և' մեկին, և' մյուսին:

Հենց նոր ստացա սույն ամսվա 17-ի քո նամակը: Թեև պետք է խոստովանել, որ քո ժամանակակից կենսակերպն այնքան էլ տարատեսակ չէ, այնուամենայնիվ, նամակի նյութ կարելի է գտնել միշտ: Ամեն օր տեսնում, լսում կամ կարդում ես ինչ-որ նոր բան: Եթե նույնիսկ համառոտակի տեղեկացնես այդ ամենի մասին և դրան ավելացնես սեփական դատողություններդ, նամակդ կստացվի: Ընդ որում, եթե անպայման ուզում ես, որ թեմա տամ, խնդրեմ, գրիր ինձ Գերմանիայում լութերական եկեղեցու մասին, թե ինչպիսի՞ն են նրա դոգմաները (դավանանքը), ինչպե՞ս է կառավարվում եկեղեցին, ի՞նչ միջոցների հաշվին է ապրում, հոգևորականությունն ի՞նչ իրավունքներից է օգտվում և ինչպիսի՞ն է նրանց աստիճանակարգությունը:

Քո հայր:

[1] Քվինտ Կուրցիոս Ռուֆուս (Quintus Curtius Rufus) – հռոմեացի պատմիչ, հեղինակն է Ալեքսանդր Մակեդոնացու պատմության:



Ամանոր.... նոր սպասումների, երազանքների ու հույսերի տոն:

Ամանորն այն եզակի տոներից է, որը նշվում է ամբողջ աշխարհում: Սա ընտանեկան տոն է և ունի նաև համախմբող նշանակություն: Այն հիմնականում նշում ենք տանը, ընտանիքի անդամների հետ, և մեզանից յուրաքանչյուրի ընտանիքում, անշուշտ, կան տոնը գեղեցիկ դարձնող սովորույթներ ու ամանորյա սեղանը զարդարող յուրատեսակ ուտեստներ: Կարծում ենք, շատերին կհետաքրքրի, թե ինչ «հատուկ» բաղադրատոմսեր, ինչ սովորույթներ ու ավանդույթներ ունեն ՀՊՏՀ տիկնայք: Նրանց հետ «Տնտեսագետը» «համեղ զրույց» է վարել՝ բացահայտելով և ընթերցողին առաջարկելով հեղինակային բաղադրատոմսեր, որոնք տոնական համ ու բույր կհաղորդեն ամանորյա սեղանին:

«ՀԱՄԵՂ ԶՐՈՒՅՑ» ԵՎ ԱՄԱՆՈՐՅԱ ՀԱՏՈՒԿ ԲԱՂԱԴՐԱՏՈՄՆԵՐ՝ ՀՊՏՀ ՏԻԿՆԱՆՑԻՑ

ՀՊՏՀ անձնակազմի կառավարման բաժնի պետ Գոհար Սարգսյանը «Տնտեսագետի» հետ զրույցում նշում է, որ Ամանորն իրենց ընտանիքի ամենասիրելի, սպասված տոներից է, որը զուգորդվում է բնական եղևնու, մանդարինի ու նարնջի բույրերով, իսկ մայրական կողմի պապիկի շնորհիվ, որը Արևմտյան Հայաստանից է, տոնական սեղանին գերակշռում են հայրենադարձերի կերակրատեսակները:

Ամանորյա սեղանի պարտադիր ուտեստներից են պասուց տոլման և իշլի քյուֆթան, սակայն ինչպես շատերը, այնպես էլ տիկին Գոհարը, ունի ամանորյա յուրահատուկ բաղադրատոմս՝ «Սիսեռի գնդիկները», որը, ինչպես նշում է՝ շատ են սիրում թե' ընտանիքի անդամները, թե' հյուրերը: Այն կարող եք դարձնել նաև ձեր ամանորյա սեղանի ինքնատիպ կերակրատեսակը:

Բաղադրատոմսը և պատրաստման եղանակը:

Սիսեռը նախօրոք թրջել մեկ ամբողջ օր, այնուհետև խաշել և տրորել, ավելացնել կորիզը հանած հոնի չիր, չամիչ, աղ, հիլ: Ալյուրը բովել, բացել քիչ ջրով և այդ քանձր խյուսը լցնել սիսեռի վրա: Լավ խառնելուց և սառեցնելուց հետո այդ զանգվածից պատրաստել գնդիկներ: Ըստ ճաշակի՝ խյուսին կարելի է խառնել նաև կիտրոնի հյութ:

«Ամանորյա տոների ընթացքում մենք նշում ենք նաև մայրիկիս և դստերս ծննդյան օրերը, ուստի Ամանորը մեզ համար բազմակի տոն է: Հաճելի ընտանեկան սովորույթ է միմյանց նվերներ տալը: Տարեմուտին բացում ենք կարմիր գինու շիշը, այլ ոչ շամպայնի, ինչն ամենաընդունվածն է: Ամանորին ընդառաջ մեր մտերիմներց հետաքրքրվում ենք՝ ինչ նոր բաղադրատոմս կարելի է սովորել և պատրաստել՝ տոնական սեղանն ավելի բազմազան դարձնելու համար:

Շնորհավորում եմ բոլորի գալիք Ամանորն ու Սուրբ ծնունդը: Ցանկանում եմ, որ սկսած գործերն ավարտեք հաջողությամբ, չունենաք կորուստներ»:

Կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչ, դոցենտ Լիանա Գրիգորյանը նշում է, որ իր ամանորյա հատուկ և սիրելի բաղադրատոմսն է «Վարսակի փաթիլները», որը, ի դեպ, դիետիկ է և կարող է օգտակար լինել շատերին:

Բաղադրատոմսը և պատրաստման եղանակը:

Վարսակի փաթիլներ՝500գ, կարագ՝ 250գ, շաքարավազ՝ 200գ, ձու՝ 3 հատ, ցորենի ալյուր՝ աչքաչափով (մոտավորապես կես թեյի բաժակ), չամիչ, աղ, սոդա, դարչին, վանիլ: Վարսակի փաթիլները թեթևակի տապակել կարագի մեջ, տապակելուց հետո խառնել կարագի մյուս մասը, ավելացնել ձուն,շաքարավազը, չամիչը,սոդան,աղը,դարչինը և խառնել: Ստացված զանգվածից պատրաստել գնդիկներ (Ռաֆայելլոյի չափի) և դնել ջեռոցը՝ 10-15 րոպե, մինչև բաց շագանակագույն դառնալը: Ի դեպ՝ չամիչի փոխարեն կարելի է օգտագործել նաև դառը շոկոլադի կտորներ:

Ինչպես նշում է տիկին Լիանան՝ «Վարսակի փաթիլների» մեջ դնում է փոքրիկ խորհրդանշական իր՝ խաղալիք, մետաղադրամ կամ մեկ այլ բան և հավատում, որ ում բաժին ընկնի՝ տարին նրա համար առավել հաջողակ կլինի:

«Ամանորն իր հետ բերում է մաքրություն, հաջողություն, կյանքը նորովի սկսելու հնարավորություն, իղձերի և երազանքների իրականացում: Մեր ընտանիքում սովորույթ է միմյանց նվերներ տալը. մեծ կամ փոքր նվերը մեր հոգու սերն է, ջերմությունը, կամեցողությունը:

Մաղթում եմ, որ նոր տարում բոլորը լինեն առողջ, երջանիկ և կատարվեն բոլորի երազանքները»:

Իրավաբանական բաժնի պետ Գայանե Տոռոզյանը նկատել է՝ քանի որ Ամանորին սեղանները հիմնականում առատ են մսային կերակուրներով, այդ պատճառով շատերը փնտրում են ավելի դյուրամարս և «թեթև» ուտեստներ: Այդ նպատակով տիկին Գայանեն առաջարկում է պատրաստել «Դդումով աղցան»:

Բաղադրատումը և պատրաստման եղանակը:

Դդումը, գազարը, խնձորը, սերկևիլը անցկացնել քերիչով, ավելացնել մանր կտրատած նեխուրը, ընկույզը, ինչպես նաև աղ, կոճապղպեղ, լիմոնի հյութ և զեյթունի ձեթ (չափաքանակներն՝ ըստ ցանկության): Այս ամենը խառնել, թողնել 30 րոպե, ապա մատուցել:

«Շնորհավորում եմ ձեր Ամանորն ու Սուրբ Ծնունդը: Բոլորին մաղթում եմ հաջողությունների տարի: Թո'ղ 2014 թվականին իրականանան բոլորի բարի նպատակները»:

Օտար լեզուների ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Սուսաննա Չալաբյանը նշում է, որ ամանորյա սեղանների միատեսակությունը «կոտրելու» նպատակով տոլմայի, խոզի ազդրամսի, խորովածի և այլնի փոխարեն կարելի է պատրաստել այլ հետաքրքիր ուտեստներ: Տիկին Չալաբյանը վստահեցնում է, որ իրենց հյուրերը ավելի հաճույքով են համտեսում «Միսը գինու մեջ» կերակրատեսակը:

Բաղադրատումը և պատրաստման եղանակը:

Մոտ 2 կգ տավարի փափուկ միս (2 մեծ կտոր), 4 պճեղ սխտոր, 2 թեյի գդալ աղ, 1 թեյի գդալ սև պղպեղ (աղացած), 10-12 մեխակ, 2 դարչինի ձողիկ, 100-150 գ կարագ, 1 բաժակ սպիտակ դառը գինի: Սխտորը, մեխակը, դարչինը, պղպեղը, աղը ծեծել, դարձնել շիլայանման զանգված: Լվացած մսակտորների վրա դանակի ծայրով անցքեր անել և դրանք լցոնել համեմունքների խառնուրդով: Մսակտորների մակերեսին աղ ցանել, այնուհետև կարագով տապակել, այնպես, որ բոլոր 4 կողմերից կարմրի: Տապակած մսին ավելացնել եռացրած ջուր, որ մսի մակերեսը ծածկվի: Կաթսայի կափարիչն ամուր փակել և եփել մարմանդ կրակի վրա մոտ 2 ժամ՝ պարբերաբար շրջելով մսակտորները: 40 րոպե առաջ ավելացնել գինին: Եփվելուց հետո կաթսայում թանձր, դոնդողանման հեղուկ է մնում՝ ջրի և գինու խառնուրդ: Մսակտորները կտրատել, մակերեսներին քսել կաթսայում մնացած դոնդողանման հեղուկից: Մատուցելուց առաջ մսի կտորները զարդարել հազարի տերևներով և փոքրիկ լոլիկներով:

«Այս ուտեստի յուրահատկությունը եփված գինու անզուգական համն է, ուստի այն մեր ամանորյա սեղանի համեղ և պահանջված կերակրատեսակներից է: Մեր ընտանիքում ամանորյա հաճելի սովորույթ է միմյանց նվերներ տալը:

Շնորհավորում եմ «Տնտեսագետի» բոլորընթերցողների Ամանորն ու Սուրբ Ծնունդը: Թո'ղ 2014 թվականին կատարվեն ձեր իղձերը: Մեր երկրին բարօրություն եմ մաղթում, ընտանիքներին՝ երջանկություն, երիտասարդներին՝ գիտելիք, աշխատասիրություն, կամք»:

«Տնտեսագետը» միանում է բոլոր շնորհավորանքներին՝ մաղթելով առողջություն, հույսերի, նպատակների իրագործում: Ամանորը զուգորդում ենք առատության, լիության հետ. թողնոր տարում ձեր ընտանիքներում չպակասի երջանկությամբ, սիրով և ջերմությամբ առատ մթնոլորտը:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ ծնունդ...

Հավատացած ենք՝ մեր համալսարանի տիկնանց շատ ու շատ «համեղ բաղադրատոմսեր» դեռ սպասում են «բացահայտման»:

ՆԱՆԵ ԱՎԱՆԵՍՅԱՆ

ԽՈՒՔ ՆՈՐ ՏԱՐՈՒՆ

Ես ի՛նչ եմ ուզում, որ բերես դու ինձ...
Ոչինչ... Ախ, միայն ոչինչ չտանես,
Միայն չխլես
Ու քո անգիջում հողմերին չտաս
Այս սերը՝
Իր մեջ առաջին սիրո
Կապույտն ունեցող
Ու լույսն ունեցող
Այս սերը,
Նրա հրաշքն անքնին
Եվ անգամ նրա տառապանքն անքուն:

Վահագն Դավթյան

Ներկայացնում ենք «Արձակ-2013» պատմվածքի մրցույթի հաղթող քառյակի վերջին պատմվածքը, որի հեղինակն է ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի տնտեսագիտական վերլուծություն մասնագիտացման երկրորդ կուրսի ուսանող* Էլեն Ուլյանը*:

ՖԱՆԵՐԱՅԻՆ ԱՐԵՎ

Մրսած առավոտ է…Դե, այն առավոտներից, որոնք բնորոշ են ցինիկ հունվար ամսին. տեսնելով, որ արևը բացվելուն պես պահեցիր տաք վերարկուդ, օրվա երկրորդ կեսին ձյուն է բերում:

Ես արթնանում եմ, լվացվում, հագնվում, նախաճաշում ու գնում բուհ:

Այսօր էլ, ամեն օրվա պես, տանս շեմքը անցնելիս, գլխովս մի միտք անցավ ու կուլ տվեց ողջ գիտակցությունս. «Հա, այսօր կյանքումս շրջադարձային պահ է. ես դա զգում եմ»: Չանցած երկու վայրկյան՝ գլխիս միջի ցինիկը հռհռալով բացականչեց. «Ինչե՞ր ես խոսում, դու ավելի լավ է նայի՞ր՝ ռեժիմից չշեղվես. այս օրը պետք է երեկվանից ոչինչով չտարբերվի»,- մատը թափահարեց ու գնաց իր գործերով:

Է՞հ, լրիվ եմ ցնդել:

Իմ ամենօրյա մուգ կապույտ բաճկոնս է հագիս, գլխիս կապույտ գլխարկս է, ձեռքիս՝ մի հաստ կարմիր գիրք ու բարակ ծաղկավոր տետր, որ լրիվ պատահական էի գնել: Քայլում եմ, ու մտքերս քաոսային արագությամբ հայտնվում ու անհետանում են, բայց դե հեչ ո՞ւմ պետքն է:

Տեսնում եմ մեր վաղեմի հարևանին.

-Բարև ձեզ: Հա, դասի…. Լավ ենք, դո՞ւք:

Ժպտում եմ՝ ստանալով ակնկալածս պատասխանը. «Լավ, բալե՞ս»:

Քայլում եմ մինչև ոսկորներս ծանոթ փողոցով, մի փողոցով, որ ամեն օր տարբեր է, բայց այնպես է խրվել էությանս մեջ, որ շատ ուզելու դեպքում էլ, դուրս չի գա: Քայլում եմ ու մտածում, թե այսօր օդն ուրիշ է, տասն անգամ ավելի պարզ. մի՞թե ավելին է պետք՝ նոր կյանք սկսելու համար:

Հասնում եմ բուհ, դասերս անցնում են նորմալ՝ ինչպես միշտ: Սեմինարին պատրաստ էի, բայց, դե լա՞վ, մյուս անգամ կպատասխանեմ:

Բուհից դուրս գալիս աչքովս մի հայտարարություն է ընկնում:

Հմմ…Մրցու՞յթ:

Ախ…Հինգշաբթի է..

…Էհ, ում է պետք, միևնույն է, զբաղված եմ հինգշաբթի: Անցնում եմ հայտարարության կողքով՝ ինքս ինձ համոզելով, որ չեմ տեսել այն:

Քայլում եմ ու մտորում, որ, հա՞, այսօր այդ օրն է:

Հեռախոսս է զնգում:

-Ալո՞: Բարև, բարեկամս: Այսօ՞ր: Չէէէ, չէ:

Ափսոս, այսօր չեմ կարող: Չէ, մեծ հաճույքով, բայց գործեր ունեմ:

Լավ, ձերոնց կբարևե՞ս:

Չանձրույթից իջնում եմ սիրածս գրախանութը՝ տեսնելու՝ ինչ կա:

Վա՞յ, սա այն գիրքը չէ՞, որ մի ամիս է, ինչ փնտրում եմ:

Թուու՞, վաճառողն էլ հենց դրա կողքի՞ն պիտի կանգներ: Ո՛ւֆ, լավ, հաջորդ գալուցս կգնեմ:

Հոգնած գալիս եմ տուն, բացում տան դուռը այնքան հարազատ ճռռոցով. այս ճռռոցն ազդարարում է, որ իմ սփոփանքի գոտում եմ:

Հագնում եմ տնային հագուստս, սովորականի պես վերցնում թեյիս մեծ բաժակը, մի կես ժամ նստում համակարգչիս դիմաց, սովորական տհաճությամբ փորփրում համացանցը ու հիասթափված մոտենում եմ պատուհանիս՝ մայրամուտին հետևելու: Նայելով, թե ինչպես է քիչ-քիչ մթնում երկնքում թունավոր վարդագույնը, արտացոլվում սառցակալած փողոցի հայելու մեջ՝ արհամարհական դանդաղությամբ սահելով ու կորելով իր առավոտյան վեհությունը կորցրած հեռվում, ես մտածում եմ. «Էհ, ի՞նչ կարճ էր այս երեկոն… Վաղը, վաղը հաստատ ամեն ինչ կփոխվի…»:

Ինչո՞ւ է, որ մութն ընկնելուն պես ծակող քամու նման վրա է հասնում զգացողություն, որ դու ուշացել ես, սարսափելի ուշացել ես:

Մի պահ լռում եմ ու հետևում, թե ինչպես են հրահանգով վառվում մթում կորած շենքերի բնակարանների լույսերը: Ինչքան հանգիստ են վառվում… Տեսնես ի՞նչ են մտածում տանեցիները՝ լույսը վառելիս…

Դե, իրենց ձեռքը չէ՞, կուզեն մութն ընկնելուն պես կվառեն, կուզեն կնվնվան մթության մեջ՝ մինչև հաջորդ առավոտ:

Աչքերս փակեցի, ու դեմքիս շաղախվեց ֆրանսիական էպիկական ֆիլմերի գլխավոր հերոսներին բնորոշ մի ժպիտ.

-…Գնամ, տեսնեմ՝ էտ ի՞նչ մրցույթի հայտարարություն էր…

«Մենք ունենք բանալիներ, բայց չունենք կողպեքներ, ունենք տախտակներ, բայց չունենք կավիճ, ունենք աշակերտներ, բայց տեղ չունենք, ուսուցիչներ ունենք, բայց սովորեցնելու ժամանակ չկա…»:

Վերև՝ մի աստիճանով, որ ներքև է տանում:
Բել Կաուֆման